կարծիքը: Նա նշում է, որ Թուրքիան բուրքավեզու պետություններից դուրս է որպես «քաղաքական-տնտեսական միության ապագա պարտնյորներ, որն կենտրոնը լինելու է Թուրքիան: Հենց այդպես և ոչ այլ կերպ են տեսնում իրենց երկրի տեղը հետխորհրդային տարածաշրջանում Օսմանյան Բարձր Դռան երբեմնի մեծության վերականգնման կողմնակիցները»:<sup>11</sup>

Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի բուրքավեզու պետությունների մրավաբանը Թուրքիայի գլխավորությամբ կամ նրա հովանու ներքո, արմատապես կփոխեր ուժերի փոխահարաբերությունը և գեոսոցիալիկ իրադրությունը նկրասիական հսկայածավալ տարածաշրջանում ի վնաս ոչ բուրք ժողովուրդների, մասնավոր, որ Թուրքիայում և բուրքավեզու այլ պետություններում բացիիրաց ազդարարում են, որ «XXI դարը կլինի բուրքերի դար»:<sup>12</sup>

Պանբուրքիզմը մեծ վտանգ է ներկայացնում մահ Հայաստանի համար: Այդ ծրագրի իրագործումը Հայաստանը կդարձնի յուրատեսակ կղզյակ բուրքական լայնածավալ աշխարհում: Վրաստանի գոյությունը տվյալ պարագայում հազիվ թե էական փոփոխություն մտցնեք, մասնավոր նրա ի նկատի ունենալով Վրաստանի կախվածությունը Թուրքիայից և բուրք-վրացական ներկա հարաբերությունների բնույթը:

Հայաստանը, բնականաբար, բացասական դիրք է զբաղում պանբուրքիզմի թե՛ գաղափարախոսության և թե՛ ծրագրերի դեմ: Մակայն դա չի նշանակում թշնամական կամ ոչ քարեկամական դիպրոտում բուրքավեզու ժողովուրդների և պետությունների նկատմամբ: Խոսքն այն մասին է, որ պանբուրքիզմի հաղթանակը կտրուկ կերպով կփոխարացնեք Հայաստանի տրաստեզիական վիճակը, մասնավոր նրա ի նկատի ունենալով, որ պանբուրքիզմը միշտ էլ պարտնակել է հակահայկական ուղղվածություն:

Հայկական գործունը կանգնած է պանբուրքիզմի քաղաքականության ճանապարհին: Եվ նրա դրա կողմնակիցներին մինչև այժմ չի հաջողվել հասնել հաջողության, չի հաջողվել իրականացնել պանբուրքիստների բոլոր սերունդների երազանքը՝ վերացնել հայկական պատնեշը կամ այն վերածել հայկական միջանցքի Կենտրոնական Ասիա մտնելու համար, ապա առանց դույզն իսկ չափազանցության, կարելի է ասել, որ դրանում ծանրակշիռ է հայկական գործունի դիրքը: Եվ դա լավ են հասկանում պանբուրքիզմի ջատագովները: Մենք հետո ենք հայկական գործունը գերազանահատելու մտքից, քայք փաստը մնում է փաստ, որ Թուրքիան հարկադրված է հաշվի նստել նրա հետ: Այս տեսակետից ուշագրավ է ամերիկյան հեղինակ Քեյրոլ Միգլայուվիչի վերին աստիճանի կարևոր կարծիքը: Նա գրում է. «Թուրքիան ձգտում է տարածել իր կապերը Կենտրոնական Ասիա, քայք չի սանձամակցում նրան: Հայաստանի հետ որևէ *modus vivendi* (գոյածև - Ն.Հ.) կարող էր Թուրքիային ապահովել կանուրջ դեպի այդ տարածքը»:<sup>13</sup>

Այս մեջբերումը լավագույնս է հաստատում հայկական գործունի նշանակությունը և այն կարևոր դիրքը, որ նա խաղում է տարածաշրջանում, այդ բխում և մի այնպիսի կենտոն և փոսանգավոր հարցում, ինչպիսին պանբուրքիզմն է:

Ի լրումն ասվածի, ավելացնենք, որ թեև Թուրքիան ունի ստրատեգիական հարստություններ Ալյքքեջանի հետ, և հաստատել է սերտ հարաբերություններ Վրաստանի հետ, այդուհանդերձ, մրան ցարդ չի հաջողվել Անդրկովկասում նվաճել ազդեցիկ դիրքեր և այն դարձնել իր ազդեցության ոլորտը: Թուրքական այդ քաղաքականության ծախսերն են, աղ գործունեների հետ միասին, իր դերն է խաղացել և խաղում է հայկական գործունը:

x x x

Հայկական գործունե իր կանխարգելիչ առաքելությունն իրագործում է մաս Դարաբաղի հարցում: Դարաբաղի տպավորիչ հաղթանակները ազգային-ազատագրական պայքարում, Լեռնային-Ղարաբաղի Հանրապետության կազմավորումը և նրա փաստացի անկախ կարգավիճակը և այլն, ամնիցականորեն կապված են Հայաստանի գոյության, օգնության և սպառնալուծության հետ:<sup>14</sup> Ընդդեմ դրա, ծախսողիցին Ալյքքեջանի բոլոր փորձերը՝ իր տիրապետությունը Դարաբաղում վերահաստատելու համար: Հաջողությանը չպակվեցին մաս Բարձրի փորձերը Դարաբաղը Ալյքքեջանին վերադարձնելու արևմտյան պետությունների օգնությամբ՝ օգտագործելով նավթային գործունը: Հայաստանն ավելի քան տասը տարի է, ինչ կանխում է բոլոր այնպիսի լուծումները, որոնք ի նպաստ Դարաբաղի չեն: Ընդդեմ դրա հողս ցնդեց ալյքքեջանական այն վարկածը, թե Դարաբաղի խնդրի լուծման բանալին գտնվում է Բաքվում: Այդ բանալին պետք է փնտրել այլուր, քայքայ այլ ալյքքեջանական տարածքում:

Հայկական գործունեի դերը դարաբաղյան կոնֆլիկտում ընդունում է միջազգային հանրությունը, այդ թվում այնպիսի միջազգային հեղինակավոր կազմակերպություններ, ինչպես ՄԱԿ-ը և Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպությունը (ԵԱՀԿ): Այս վերջինս և նրա Միմսկի խմբի նախնականները, որոնք ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչներն են, աներկբաբարեն հաշվի են նստում հայկական գործունեի հետ, նկատի ունենում Հայաստանի տեսակետները և դիրքորոշումը իրենց առաջարկությունները մշակելու: Եվ չնայած ԵԱՀԿ-ի բարձր հեղինակությանը, Հայաստանը նրա նկատմամբ ևս կիրառում է կանխարգելիչ ֆունկցիաներ, եթե նրա որոշումները չեն համապատասխանում հայկական երկու պետությունների ազգային շահերին: Հայաստանն այդպես վարվեց 1996թ. դեկտեմբերին ԵԱՀԿ-ի վեհաժողովում, երբ նա օգտավելով վետոյի իր իրավունքից, կանխեց ԵԱՀԿ-ի կողմից Դարաբաղի պրոբլեմի լուծման վերաբերյալ աննպաստ բանաձևի ընդունումը: Այդ և դրան հաջորդած քաղերի շնորհիվ, այսպես կոչված, Լիսաբոնյան դեկլարացիան վերածվեց մի անգոր փաստաթղթի:

Հայտնի է, որ 1998թ. վետոյվար-մարտ ամիսներին կայացած իշխանափոխությունից հետո, Հայաստանը հրաժարվեց դարաբաղյան պրոբլեմի

լուծման փուլ առ փուլ տարբերակից և կանգնեց նրա լուծման փաթեթային տարբերակի վրա: ԵԱՀԿ-ն հաշվի առավ այն փոփոխությունը ևս և այդ ոգով համապատասխան շտկումներ մտցրեց իր առաջարկությունների մեջ:

Հայկական գործոնի ֆունկցիոնալ բաժանումը մեր կողմից կառուցողականի և կանխարգելիչի, ինչպես նշել ենք, պայմանական է: Հայկական գործոնը, նրա մշտականությունը և դերը, նրա ազդեցության աստիճանը իրականում պետք է դիտարկել իր ամբողջության մեջ: Իսկ այդ դեպքում, համոզված կարելի է ասել, որ հայկական գործոնը որպես անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական քաղաղութաաբր, քմալ էլ արհամարհելի չէ:

## 2. Հայաստանը ռազմաքաղաքական գործոն:

Հայաստանը, աշխարհաքաղաքական գործոնի հետ միասին, իրականացնում է նաև ռազմաքաղաքական ֆունկցիաներ:

Ե՛հլու է, Հայաստանի ռազմական ուժերը և ռազմական պոտենցիալը սահմանափակ են՝ համեմատած Թուրքիայի և Իրանի զինված ուժերի հետ, բայց, այդուհանդերձ, Հայաստանի զինված ուժերը ԼՂՀ-ի զինված ուժերի հետ միասին, այսօր ամենահզորն են Անդրկովկասում: Տարածաշրջանի պետությունները քաջատեղյակ են դրան և հարկադրված են հաշվի առնել այդ հանգամանքը և լավ կշռադատել իրենց քայլերը նախքան արկածախնդրության դիմելը:

Այս հանգամանքը Հայաստանը դարձնում է տարածաշրջանի կայունությանը մպաստող ուժ:

x x x

Հայկական ռազմաքաղաքական գործոնը ըստ արժանկոյն գնահատեց Ռուսաստանը: Ռուսաստանի և Հայաստանի միջև հաստատվեց սերտ համագործակցություն, որը համապատասխանում է ինչպես երկու պետությունների շահերին, այնպես էլ անդրկովկասյան-մերձավորարևելյան տարածաշրջանի անվտանգության խնդիրներին:

Սեր կողմից արդեն նշվել է, որ 1997թ. օգոստոսի 29-ին Հայաստանի և Ռուսաստանի միջև ստորագրվեց «Բարեկամության, Համագործակցության և Փոխադարձ Օգնության Պայմանագիր»: Այդ Պայմանագրի 2-5 հոդվածները նախատեսում են ռազմական սերտ համագործակցություն երկու երկրների և նրանց զինված ուժերի միջև, Հայաստանի պետական սահմանների համատեղ պաշտպանություն հայ-ռուսական միացյալ զինված ուժերով և այլն: Բայց, որ ամենակարևորն է, կողմերն ըստ այդ Պայմանագրի, պարտավորվում են միմյանց ցույց տալ անհրաժեշտ ռազմական օգնություն կողմերից մեկի դեմ որևէ պետության կամ պետությունների խմբի կողմից ագրեսիայի դեպքում:<sup>15</sup>

Սակայն պետք է նշել, որ հայ-ռուսական համագործակցությունն սկսվել

էր մինչև այդ Պայմանագրի ստորագրումը: Հայաստանը 1995թ. մարտի 16-ի պայմանագրով Ռուսաստանին է տրամադրել ռազմական քազա:՝<sup>18</sup> Նրանում տեղակայված ռուսական զինված ուժերը Հայաստանի զինված ուժերի հետ համատեղ պաշտպանում են Հայաստանի պետական սահմանները, որոնք միաժամանակ Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) հարավային սահմաններն են: Սերտորեն համագործակցելով միմյանց հետ, նրանք պարբերաբար անց են կացնում համատեղ ռազմական վարժություններ ու զորախաղեր, որոնց որպես կանոն ներկա են լինում Ռուսաստանի և Հայաստանի պաշտպանության մախարաբությունների և Գլխավոր շտաբների ղեկավարները, քարձրաստիճան պաշտոնյաներ և զորահրամանատարներ:

Անդրադառնալով հայ-ռուսական ռազմական համագործակցությանը, «Կրասնայա Ջվեգդան» գրում է. «Ռուսաստան-Հայաստան ռազմական դաշինքը ոչ միայն օրյակտիվ է, այլև ունի ոչ վատ հեռանկարներ XXI դարում»:՝<sup>19</sup> Կարծում ենք, որ սրանով ամեն ինչ ասված է: Ըստ որում հարկ է նշել, որ այդ դաշինքը «ոչ թե որևէ մեկի դեմ է ուղղված, այլ համուն տարածաշրջանում կայունության ամրապնդման համար է»:՝<sup>18</sup>

Կցանկանալինք ընդգծել ռուս-հայկական ռազմական համագործակցության մի կարևոր առանձնահատկություն:

Սովորաբար պայմանագրի, այդ թվում և ռազմական, ստորագրումը մեծ ու հզոր պետության և փոքր պետության միջև լինում է ոչ իրավահավասար, և փոքրը միշտ կախվածության մեջ է հայտնվում մեծից ու վերջիվերջո վերածվում նրա կամակատարին և կամ աղքատյակին: Պատմությանը հայտնի են շատ նման դեպքեր: Հիշենք թեևուզ Մեծ Բրիտանիայի ռազմական պայմանագրերը արաբական որոշ երկրների հետ 1930-թվականներին, որի շնորհիվ մա ռազմական քազաներ էր ձեռք քերել Եգիպտոսում (Մուեզի գոտի), Իրաքում (Հաքրանիյա, Շաալբ) և այլն:

Ի տարբերություն դրա, ռուս-հայկական համագործակցությունը և Հայաստանում Ռուսաստանին ռազմական քազա տրամադրելը խաբսխված է հավասարության սկզբունքի վրա: Հայաստանը ռազմական քազա է տրամադրել Ռուսաստանին կամովին, որպես անկախ և սուվերեն պետություն, ելնելով իր անվտանգության ապահովման զեքազույն խնդրից և ոչ թե որպես ենթամանդատային տերիտորիա: Այս մտեեցումն ուղղակի ամրագրված է հայ-ռուսական պայմանագրում, որի 1-ին հոդվածում սուվում է, որ կողմերը խստորեն հավատարիմ կլինեն միմյանց սուվերենության և անկախության նարզման, հավատարության և միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքներին:՝<sup>19</sup>

Հիմա ժամանակները փոխվել են և գործում են այլ մտեեցումներ, որոնք սկզբունքորեն տարբեր են մախարղ պատմական շրջանների սկզբունքներից: Այդ բանը ընդունում և ընդգծում է ռուսական կողմը և: Անդրադառնալով այս կարևոր հարցերին, ինչպես մաև Ռուսաստանի պաշտպանության

նախարար մարշալ Ի.Դ. Մերգելի Հայաստան արաչտոնական այցին և նրա բանակցություններին Հայաստանի Հանրապետության ղեկավարության հետ, որը կայացավ 1998թ. հունիսի 14-15-ին, մեր կողմից արդեն հիշատակված Ռուսաստանի պաշտպանության մախարաբայության պաշտոնարարը «Կրասնայա Ջիզդան» շնչում է. «Այժմ շատ կարևոր է, քեզ ինչպես կկատարվեն հարաբերությունները մեր երկու երկրների միջև: Այսպես, հազիվ քի ճիշտ լինեք, եթե Ռուսաստանը, ինչպես խորհրդային ժամանակներում էր, կրկին փորձի խաղալ «մեծ եղբոր» դեր: Դա հիմա ոչ որի պետք չէ և կլինեք մեծագույն սխալը»:<sup>20</sup>

Կրկնում ենք, սա կարևոր հանգամանք է, որի շնորհիվ հայ-ռուսական համագործակցությունը կարող է լինել կենսունակ և արդյունավետ:

Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքված փոխօգնության պայմանագիրը չի ուղղված որևէ երրորդ պետության դեմ, այնուհանդերձ, նա, ինչպես նաև, Հայաստանում ռուսական քաղաքի առկայությունը և հայ-ռուսական ռազմական համագործակցությունը անհանգստացնում է, մույժիսկ նյարդայնացնում է մեր տարածաշրջանի որոշ երկրների: Մենք ի նկատի ունենք Թուրքիան և Ադրբեջանը: Նրանց անհանգստացնում է նաև ռուսական ռազմական քաղաքի հազնցումը ժամանակակից ռազմական մեր տեխնիկայով, որը քարծրացնում է հայկական պետական սահմանների պաշտպանության մակարդակը:

Ինտրկե, նրանք չէին ցանկանա, որ մեզան համագործակցություն հաստատվեք Ռուսաստանի և Հայաստանի միջև, քայց, դա արդեն նրանցից չի կախված:

Մակայն Թուրքիան և Ադրբեջանը փորձում են ինչ-որ հակադիր քայլեր կատարել: Դրա վկայությունն է Ադրբեջանի պաշտպանության մախարաբի արաչտոնական այցը Անկարա 1998թ. ղեկտեմբերին և բանակցությունները իր բուրջական գործընկերոջ հետ: Անհանգստություն հայտնելով «Կովկասում Մոսկվայի տարվող քաղաքականության առնչությամբ, Ադրբեջանի պաշտպանության մախարաբը կոչ արեց ընդլայնել ռազմական համագործակցությունը Անկարայի և Բաքվի միջև»:<sup>21</sup> Այդ կոչը դրական արձագանք է գտել Թուրքիայում, որի պաշտպանության մախարաբը «Նախարարել է, որ Թուրքիան պատրաստ է ցույց տալ Բաքվին քաղմակդմանի օգնություն հայ-ադրբեջանական կոնֆլիկտի կարգավորման գործում»:<sup>22</sup>

Բայց դա դեռ բոլորը չէ: Ինչպես նշում է «Նեզավիսիմայա զազետան», բավականաչափ փաստեր են կուտակվել «կոչու կուբախ» բացնված և քացահայտ կողմնակիցների՝ ռուսական ներքին գործերին միջամտելու վերաբերյալ: Թուրքիայում լավում են «կոչեր ստեղծելու միջազգային միավորումներ, բնականաբար, առանց Ռուսաստանի մասնակցության, վրաց-արխազական կամ դարաբարյան կոնֆլիկտների լուծման համար»:<sup>23</sup> Բայց, ընդգծում է քերքը, «դա անխուսափելիորեն կհանգեցնի մեր պատերազմների Կովկասում»:<sup>24</sup>

Ռուս-հայկական ռազմական համագործակցությունը, լինելով Ռուսաստանի կողմից հայկական ռազմական գործունի կարևորության ճանաչման արտահայտություն, ինքնին ավելի արժեքավորեց այն և բարձրացրեց նրա ադրատեղիական նշանակությունը Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում:

\*\*\*

Հայկական գործունի ռազմաքաղաքական ասպեկտի մյուս կարևոր ոլորտը Ղարաբաղյան կոնֆլիկտը և հայ-ադրբեջանական ռազմական ստանկատումն է: Հենց այստեղ փայլում կերպով դրսևորվեցին այդ գործունի հնարավորությունները և քացատիկ կարևորությունը Հայաստանի և Ղարաբաղի շահերի սրաշտպանության և ազգային անվտանգության պահպանման գործում: Իսկ դա բնավ էլ դյուրին չէր: Չպետք է մոռանալ, որ Ադրբեջանի մարդկային և որոշ իմաստով նաև տնտեսական ռեսուրսներն ավելի մեծ են քան Հայաստանինը: Կոնֆլիկտի սկզբնական փուլում, 1988-1991թթ. Խորհրդային Միության դեկալիարությունը պաշտպանում էր Ադրբեջանին, որը չէր սահմանափակվում միայն քաղաքական և նյութական աջակցությամբ: Ադրբեջանը ստանում էր նաև ռազմական աջակցություն:

Ադրբեջանին ակտիվ կերպով պաշտպանում էր Թուրքիան, որը չէր խոչընդոտ քացահայտորեն սպառնալ Հայաստանին: Թուրքիայի մախսկին պրեզիդենտ Թուրգուտ Օզալը 1993թ., Քեյրազարի անկումից հետո, հայտարարեց թե «ժամանակն է հայերին ատամներ ցույց տալ»:<sup>25</sup> Նա, ակնարկելով 1915թ. ցեղասպանությունը, հայերին մեղադրում էր, թե նրանք «ոչանք չեն քաղել Անատոլիայում ունեցած փորձից և պատժից»:<sup>26</sup> Նրա հրամանով Հայաստանի տահմանների մոտ տեղակայված թուրքական զինված ուժերը դրվեցին մարտական պատրաստականության վիճակում:

Հայաստանի գլխին լուրջ սպառնալիք էր կախված:

Հաշվի առնելով թուրքական ագրեսիայի լուրջ հետևանքները ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ անդրկովկասյան-մերձավորարևելյան տարածաշրջանի համար, Թուրքիայի վրա ուժեղ ճնշում գործադրեցին Ռուսաստանը և ԱՄՆ-ը, որպեսզի նա ձեռնպահ մնա Հայաստանի դեմ ուղղված թշնամական քայլերից: Ռուսաստանի զինված ուժերի գլխավոր հրամանատար մարշալ Շապուշնիկովը լրջորեն զգուշացրեց Թուրքիային, որ Հայաստանի դեմ ուղղված որևէ թշնամական ռազմական ագրեսիա կնշանակեր երրորդ համաշխարհային պատերազմի սկիզբ:<sup>27</sup> Թուրքական կատակությունն իր «տրուշակի մտահոգությունն արտահայտեց ԱՄՆ-ը Լեոնային-Ղարաբաղի կոնֆլիկտում Ադրբեջանին ցույց տրվող թուրքական աջակցության կապակցությամբ»:<sup>28</sup>

Մտեղծված պայմաններում Թուրքիան ռիսկի չդնեց և հրաժարվեց Հայաստանի դեմ ուղղված ագրեսիվ գործողություններից: Իսկ հայոց զինված ուժերը հասան ռազմական տալավորիչ հաղթանակների Ղարաբաղյան ռազմատանկային զինված ուժերը պարտություն կրեցին ռազմի



դաշտում: Ղարաբաղը ազատագրվեց և 1992թ. հուլիսի 6-ը Ղարաբաղի Հանրապետությունը, որի ազգային անվտանգության համար՝ ռազմական հետագա հաջողությունների շնորհիվ, ստեղծվեցին ավելի բարենպաստ սրայմաններ:

Աղբբջանի ռազմական անհաջողությունները ստիպեցին նրան համաձայնվել զինադադարի հետ, որի վերաբերյալ համապատասխան սրայմանագիր ստորագրվեց Աղբբջանի, Հայաստանի և ԼՂՀ-ի միջև 1994թ. մայիսի 12-ին:

Վստահարար կարելի է ասել, որ եթե շիններ հայկական գործունը, ապա հազիվ թե Աղբբջանը դիմեր այդ քայլին:

Եվ, դարձյալ, վստահարար կարելի է ասել, որ շնորհիվ հայկական ռազմական գործունի, Աղբբջանը ձեռնպահ է մնում դաշարադրյալ կոնֆլիկտը ռազմական միջոցներով լուծելուց:

Հայկական ռազմական գործուն մասը անվտանգության է, որը ծառայում է Հայաստանի և ԼՂՀ-ի ազգային անվտանգությանը:

Հայկական ռազմական գործունը Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի իրողություններից է, որը հաշվի են առնում Հայաստանի, առանց բացառության, բոլոր անմիջական և մերձակա հարևանները:

### 3. Հայաստանը որպես կոմունիկացիոն-հաղորդակցման գործուն:

Հայկական գործունը, բացի վերևում նշված աշխարհաքաղաքական և ռազմական մակարդակներից, դրսևորվում է նաև կոմունիկացիոն մակարդակով:

Դա առաջին հերթին կապված է այն աշխարհագրական դիրքի հետ, որ գրավում է Հայաստանը Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում, այդ երկու ենթատարածաշրջանների հատման սահմանագծում: Վրաստանը և Աղբբջանը նույնպես համանման դիրք են գրավում և նույնպես իրականացնում են կոմունիկացիոն ֆունկցիաներ:

Մակայն այստեղ պետք է ի նկատի ունենալ երկու հանգամանք:

Առաջին, Հայաստանն ավելի մախրմորելի է Հյուսիս-Հարավ ստրատեգիական կոմունիկացիայի տեսանկյունից: Դա այդպես է ստեղծված քաղաքական իրողության: Վրաստանն ու Աղբբջանն ավելի են կողմնորոշվում դեպի Թուրքիան և նրանք ավելի մախրմորելի են Արևելք-Արևմուտք ստրատեգիական կոմունիկացիայի տեսանկյունից, քան թե Հյուսիս-Հարավ: Միմյուր Հայաստանը, որն ունի ավելի լավ հաղորդություններ Ռուսաստանի և Իրանի հետ, դարձել է Հյուսիս-Հարավ գծի կարևոր օղակ: Եվ քանի որ այս գիծը ունի շարունակություն և հյուսիսից՝ դեպի Եվրոպա, և հարավից՝ դեպի Արաբական Արևելք և Պարսից ծոց, ապա դրանով իսկ ավելի է կարևորվում հայկական գործունը և բարձրանում Հայաստանի կշիռը:

Երկրորդ, Հայաստանի աշխարհագրական դիրքն ավելի նպաստավոր է Հյուսիս-Հարավ հաղորդակցման իրականացման առումով:

Մակայն անդրկովկասյան երեք համրապետությունների համար ընդհա-

նորն այն է, որ նրանք հանդիսանում են տարանցիկ ստրատեգիական կոմունիկացիաների խաչմերուկ, որը ցամաքային, ջրային և օդային ճամապարհներով Եվրասիան կապում է Մերձավոր Արևելքի և նրա միջոցով Աֆրիկայի հետ:

Ուստի այդ ընդհանուր տարանցիկ ճամապարհի բաժանումը Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք հատվածների ավելի շատ քաղաքական շահերի և հակասությունների արդյունք է, քան թե տնտեսական պահանջ: Մեր կարծիքով այս երևույթը ժամանակավոր քնույր է կրում և բոլորն էլ կշահեն, եթե անդրկովկասյան տարածաշրջանը կոմունիկացիաների առումով դիտարկվեր և հանդես գար որպես մեկ ամբողջություն:

Դրան այսօր խանգարում է երեք համգամանք:

Առաջին, շրջափակումը, որ լայնորեն կիրառվում է Անդրկովկասում:

Թուրքիան և Ադրբեջանը շրջափակել են Հայաստանը և Լեռնային-Ղարաբաղի Հանրապետությունը, իսկ Հայաստանը շրջափակել է Նախիջևանը: Վրաց-արխազական հակամարտության հետևանքով չի գործում Թբիլիսի-Մոսկվա երթուղին, որը նշանակում է Վրաստանի մասնակի շրջափակում: Դրա հետևանքով այդ կարևոր մայրաղուց չեն կարողանում օգտվել մահ Հայաստանը և Ադրբեջանը:

Այսպիսով, շրջափակման քաղաքականության հետևանքով այսօր ոչ լիարժեք են գործում և Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք ստրատեգիական կոմունիկացիոն ուղիները:

Երկրորդ, Լքնոքաղաքական կոնֆլիկտների առկայությունը Անդրկովկասում և նրան հարող Հյուսիսային Կովկասում: Ղարաբաղյան, հարավօսեթական և արխազական կոնֆլիկտները քաջասաքար են անդադարում կոմունիկացիաների նորմալ գործունեության վրա: Հիշենք քազմաթիվ հարձակումները երկաթուղային գնացքների վրա, զազամուղի, երկաթուղային ուղիների և կամուրջների անհամար պայթեցումները և այլն, որոնք այնքան հաճախ էին տեղի ունենում 90-ական թվականների կեսերից սկսած: Իսկ այսօր Ադրբեջանը, Թուրքիան և արևմտյան մավրային ընկերությունները երաժարվում են Կասպիական մավրամուղը դեպի Թուրքիա կառուցել Հայաստանի տերիտորիայով այն ոչ համոզիչ պատճառաբանությամբ, թե Ղարաբաղյան կոնֆլիկտը վտանգ է ներկայացնում դրա նորմալ գործունեությանը: Թեև ակնհայտ է այդ ուղու առավելությունը մյուս ուղիների մկատմամբ (ավելի կարճ է, ավելի էժան և այլն):

Երրորդ, հայկական գործոնի լիարժեք դրսևորմանը և անդրկովկասյան միասնական կոմունիկացիոն ցանցի ստեղծմանը խանգարում է Հայաստանը կոմունիկացիոն առումով մեկուսացնելու կամ ոչ մշաստավոր պայմանների մեջ դնելու որոշ միտումներ, որ առկա են Անդրկովկասում: Այս ուղղությամբ նուանդուն քանքեր է գործադրում հատկապես Ադրբեջանը, որը խանգարում է Հայաստանի լիարժեք մասնակցությանը ՏԲԱՄԵԿԱ-ի, մակվկին "Մետաքսի ուղու" վերականգնման, ՎՈՒԱՄ-ի (Վրաստան, Ուկրաինա,

Աղբբեջան, Մեղրվա) և այլ ծրագրերի, նախապայման դնելով Հայաստանի զիջումները Կարաբաղի հարցում:

Դրան չեն նպաստում նաև Կարս-Ախալքալաք-Թրիլիսի երկաթուղու կառուցման ծրագիրը Թրիլիսի-Գյումրի-Կաթու երկաթուղագծի առկայության պայմաններում: Իհարկե, Աղբբեջանը կցանկանա, որ Վրաստանը ևս գրավեր խիստ դիրքորոշում Հայաստանի նկատմամբ՝ նրա կոմունիկացիաների օգտագործման հարցում: Սակայն Վրաստանը չի ենթարկվում այդ ճնշմանը և Հայաստանը կայողանում է օգտվել վրացական կոմունիկացիաներից, Բաքումի և Փոթի նավահանգիստներից: Վրաստանին ձեռնառ չէ Հայաստանի մեծ ատոմանի հասնող մեկուսացումը և աղբբեջանական գործոնի արևմտական ուժեղացումը, որը հազիվ թի համապատասխանի Վրաստանի շահերին, որը ձգտում է ապագայում ևս ապահովել Անդրկովկասում հավասարակշռություն պահպանողի իր դերը:

Մյուս կողմից, Հայաստանը կարևոր է Վրաստանի համար Իրան և Պարսից ծոց դուրս գալու առումով, ուստի և մա իր քայլերը մշակելիս հաշվի է առնում հայկական գործոնը, որ կոմունիկացիոն առումով ևս թուլացնում է Վրաստանի կախվածությունը Աղբբեջանից:

Հայաստանը, մեծ նշանակություն տալով կոմունիկացիաների զարգացման խնդրին, որն ուղղակիորեն առնչվում է նրա տնտեսական զարգացման և քաղաքական դիրքերի ամրապնդման հետ, ընդունեց միանգամայն ճշտ որոշում. մասնակցել ՏՐԱՄԵԿԱ-ի ծրագրին, որը եվրոպան կապելու է Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի հետ: Հայաստանի պատվիրակությունը մասնակցեց 1998թ. աշնանը Բաքվում կայացած վեճաժողովին, նվիրված ՏՐԱՄԵԿԱ-ի զարգացման խնդիրներին և համոզու եկավ կանկրետ առաջարկություններով:

Միջազգային համալսությունը դրականորեն գնահատեց Հայաստանի մասնակցությունը այդ իսնդիպմանը և նրա ներկայացրած առաջարկությունները, որոնց նպատակն է ավելի ամրապնդել ղարձնել ՏՐԱՄԵԿԱ-ի ծրագիրը և նպաստել անդրկովկասյան կոմունիկացիոն ցանցի ստեղծմանը: Հայաստանն առաջարկում է կառուցել Մեղրի-Բաքումի և Փոթի ավտոմայրուղի, որը Պարսից ծոցի երկրները Հայաստանի և Վրաստանի միջոցով կկապի Սև ծովի և Եվրոպայի հետ, վերաբացել Նախիջևանի և Թրիլիսի-Գյումրի-Կաթու երկաթուղագծերը, կառուցել ավտոմայրուղի դեպի Թրիլիսի և այլն:

Արդեն համաձայնություն է ձեռք բերվել Հայաստան-Վրաստան-Բուլղարիա ուղու վերաբերյալ, որի շնորհիվ եվրոպական երկրները կկապվեն մերձավորարևելայն երկրների հետ:

Հայաստանը ուշադրության արժանի օղային հաղորդակցության կենտրոն է, որը եվրոպական մի շարք երկրներ՝ Անգլիա, Հոլանդիա, Գերմանիա, Ֆրանսիա, Եվեյցարիա, Բուլղարիա և այլն կապում է Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի հետ:

Այսպիսով, կարող ենք ասել, որ կոմունիկացիոն առումով Հայաստանը

համոյխամում է եվրոպական երկրները և Ռուսաստանը Անդրկովկասի և մերձավորարևելյան երկրների հետ կապուղ կարևոր ուղիներից մեկը: Ասում ենք ուղիներից մեկը, քանի որ այս կամ այն չափով մեամ ֆունկցիաներ կատարում են մաև մի դյուս երկու հարևանները: Դրամում ոչ մի արտատոց քամ չկա: Ի նկատի ունենք այն համգամամը, որ մերօրյա աշխարհում ընդունված է, աղ թվում և կոմունիկացիաների հարցում, քազմազանության սկզբունքը: Տարրեր ուղիների առկայությունը թույլ չի տալիս մեմաշնորհի հաստատումը որևէ պետության կողմից և մայաստամը դաշտ ստեղծում տարրերակների ընտրության համար:

Մեզ համար էակամը տվյալ սրարագայում այն է, որ Հայաստանը համոյխամում է անժխտելի գործոն հաղորդակցմամ ստումով, որն անտեսելու փորձերը դատապարտված են ծախտումամ:

Այսօր դա ավելի ու ավելի են հասկամում ԱՄՆ-ում, Եվրոպայում և Մերձավոր Արևելքում: Կցամկամայինք աղ ստումով վկայակոչել մեր գոյացը ԱՄՆ-ի սեմատի արտաքին քաղաքակամության համձնածաղղղի ղեկավարներից մեկի, սեմատոր Մեմ Բրատերեկի խորհրդակամ Քրիստինա Ռակայի հետ, որը կայացավ 1998թ. փետրվարին ԱՄՆ-ի սեմատում: Նա սեմատոր Բրատերեկի ամունից ասաց հետևյաղ. «Հայաստանը Կովկասի քամալի պետությունն է (Key state) և հմարավոր չէ Կովկասում որևէ հարց լուծել և հասնել խաղաղության և կայունության, ատանց հաշվի առնելու Հայաստամնի շահերն ու դիրքօրյաղումը, ատավել ևս՝ հակատակ Հայաստամնի շահերի: Մենք դա լրնիվ հասկացել ենք»:

Կարծում ենք, որ դա Հայաստամնի՝ որպես կարևոր գործոն լինելու լավագույն վկայությունն է:

#### **4. Սփյուռքի դերը հայկական գործոնում:**

Հայկական գործոնը, մրա նշանակության և ազդեցության ուժեղացմամ ստումով, ունի սնուցմամ մի քրացուցիչ և վերին աստիճամնի կարևոր աղրյուր՝ հայ Սփյուռքը: Ընդունված է ասել, և դժվար է դրա հետ չհամածայնվել, որ երև Աղրեղամն ունի մավթ, իսկ Վրաստանը՝ ծով, ատարս Հայաստամն էլ ունի Սփյուռք, որն իր նկյուծով հմարավորություն է տալիս հավասարակշռել մավթի և ծովի գործոնները:

Հայկական 5-6 միլիոնամոց սփյուռքը կարևոր դեր է խաղում, հատկապես այնպիսի երկրներում, ինչպես ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Վրաստանը, Իրանը, Լիբանանը, Միդիան և այլն և զգաղիորեն մերագղում է եղյալ երկրների քաղաքակամության վրա, կարված Հայաստամնի ատնչվող հարցերի հետ: ԱՄՆ-ում, ինչպես մաև Ռուսաստանում և Ֆրանսիայում, գոյություն ունի կազմակերպված հայկական լոքրի: Լիբանամի պաղամնեմալի 6 տեղեր պատկամում են հայ համայնքին և հայերը որպես կամոն գրաղեցնում 1-2 միլիտարական պղրոտֆիլ Լիբանամնի կատավարության մեք: Հայերը գրաղեցնում են երկու տեղ Իրանի մեղլիսում, մեկական տեղ Միդիայի և Կիպրոսի պաղամնեմոներում և այլն:

Հայ տիպուղի ազդեցության մասին է վկայում այն սպարազամ, որ շնորհիվ հայերի զանգվածային շարժման, Ռուսաստանի Պետական Դուման և Իրանսիայի սրբազանները ճանաչել են հայոց ցեղասպանությունը: Այդ ազդեցության մասին է վկայում նաև այն փաստը, որ արդեն մի քանի տարի է, ինչ շնորհիվ ԱՄՆ-ի հայկական լոբբիի, ԱՄՆ-ի կառավարությանը չի հաջողվում վերացնել Կոնգրեսի դեղումած 907 բանաձևը, որն արգելում է Ալդրիջանից ցույց տալ պետական զծով ֆինանսական և տնտեսական օգնություն, քանի դեռ նա չի վերացրել Հայաստանի և է.Ղ.Հ-ի շրջափակումը:

Սփյուռքի գործունը այս կամ այն չափով հաշվի են առնում նաև մյուս երկրները:

Սփյուռքի գործունը հայկական գործունի օրգանական մասն է կազմում, որն ավելի է շեշտում ընդհանուր համահայկական գործունի կարևորությունը:

Մեր դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ հայկական գործունի դերը միտումներ ունի ուժեղամալու Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում: Դրա ճախարայամաններն են հանդիսանում հետևյալ սպարազաները:

Առաջին, Ռուսաստանը և Իրանը համոզվեցին, որ հայկական գործունն, իբր, կարևոր է նրանց դիրքերի համար այս տարածաշրջանում: Ուստի հարաբերությունների հետագա զարգացումը Հայաստանի հետ լիովին համապատասխանում է նրանց պետական շահերին:

Երկրորդ, Թուրքիան այս տարիներին հասկացավ, որ հնարավոր չէ անտեսել հայկական գործունը, որ դա չի նպաստում նրա դիրքերի ամրապնդմանը Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում: Թուրք-հայկական հարաբերությունների կարգավորումը հավասարապես անհրաժեշտ է երկու կողմերին և մենք վստահ ենք, որ վաղ թե ուշ կգա այդ պահը:

Երրորդ, ակտիվացնում է իր քաղաքականությունը Կովկասի նկատմամբ Եվրոպական Միությունը: Իսկ դա նոր հնարավորություններ է քաջում նաև Հայաստանի առջև Եվրոմիության անդամ դառնալու, եվրոպական պետությունների հետ քաղաքական, տնտեսական և մշակութային կապերն ամրապնդելու համար:

Չորրորդ, նկատելի է, որ ԱՄՆ-ը, կասպիական նավթի գործադրի եաջող ավարտից հետո, ավելի հավասարակշռված քաղաքականություն է վարում և կվաթի Անդրկովկասում: Իսկ դա նշանակում է ավելի մեծ ուշադրություն ԱՄՆ-ի կողմից Հայաստանի և նրա խնդիրների նկատմամբ, այսինքն ավելի մեծ տեղ հատկացնել հայկական գործունին ԱՄՆ-ի անդրկովկասյան-մերձավորարևելյան քաղաքականության մեջ:

Հինգերորդ, այժմ արդեն ավելի է կարևորվում Հայաստանի մասնակցությունը Անդրկովկասի տարածքով անցնող կոմունիկացիաներին: Իսկ սպարազամ այդ միտումն ավելի է ուժեղամալու: Կասկածից վեր է, որ հայկական գործունի դերը կրթաքաղաքական Հայաստանի շրջափակման վերացումից հետո: Երջափակման վերացումն անխուսափելի է: Իսկ այդ դեպքում Հայաստանը կդառնա կարևոր օղակ ոչ միայն Հյուսիս-Հարավ, այլև Արևելք-

Արևմուտք ստրատեգիական ուղղությունների մեջ: Եվ միայն այդ ժամանակ կարելի կլինի լիարժեքորեն խոսել Հայաստանի անդրկովկասյան-մերձավոր-արևելյան տարածաշրջանի խաչմերուկ լինելու մասին:

Հայաստանում Ռուսաստանի առաջին արտակարգ և լիազոր դեսպան Վլադիմիր Ստոպչինը իր «Լադոսարդյան կոնֆլիկտը» հետաքրքիր անալիզի մեջ, քննարկելով հայ-ռուսական միջպետական հարաբերությունների համակարգը, արտահայտել է հետևյալ ուղազդով և միանգամայն հիմնավորված միտքը. «Հայաստանը պետք է Ռուսաստանին ոչ պակաս, քան Ռուսաստանը Հայաստանին».<sup>29</sup> Կարծում ենք, որ այս բանաձևը, համապատասխան փոփոխություններով, կիրառելի է նաև Հայաստանի հարաբերությունների համար Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի մյուս պետությունների հետ:

## SUMMARY

Armenia after gaining an independence in 1991, step by step became a significant factor of the Transcaucasian-Middle Eastern geopolitical region. Its functions of a factor Armenia is realizing on three levels.

The First level - geopolitical factor. On this level Armenia is playing an important role in relations with Russia, Iran, as well as Georgia. We qualify that role as constructive. The USA and the leading European states, China and other countries are more and more realistically appreciating the significance of Armenia in decision of Caucasian and Middle Eastern regional problems.

From the other hand Armenia is carrying out containing functions towards Azerbaijan, as well as Turkey, who have occupied non-friendly position to Armenia.

The Second level - military factor. Armenia is playing certain role from military aspect due to its military forces. The Armenian army together with the military forces of Nagorno-Karabakh are the strongest and best organized military forces in the Transcaucasia, and its neighbors could not ignore this circumstance. The significance of the Armenian military factor was increased due to the Treaty of Friendship, Cooperation and Mutual assistance, concluded between Russia and Armenia on August 29, 1997.

The Third level - factor of communications. Armenia is a crossroad of important communications, on the way connecting North with South and West with East. It is the shortest way connecting Europe, Russia and Georgia with Iran, Arab countries, etc.

Many political, economic, commercial and communicational problems of the

Transcaucasian - Middle Eastern geopolitical region is possible to solve in case of taking into consideration all factors and national interests of all states, including those of Armenia.

## ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Nikolay Hovhannisyen, *The Foreign Policy of Armenia*, Yerevan, Noyan Tapan, 1998.

2. "Marco Polo Magazine", Venice, No 3, 1998, No 4/5, 1998. Այս հարցը հանգամանորեն քննարկվեց 1998թ. դեկտեմբերի 11-12-ը Վենետիկում կայացած «ԼՂԲԿ սահմաններ եվրոպայի համար. Կենտրոնական Ասիա և Անդրկովկաս» միջազգային գիտաժողովում: Այն գումարվել էր եվրոպական Միության և Իտալիայի արտաքին գործերի նախարարության հովանու ներքո և նրա աշխատանքների մասնակցում էին եվրոպական Միության գամազան կամիտեների ներկայացուցիչներ, եվրոպադամնեռի անդամներ, քաղաքագետներ, դիվանագետներ, պատմաբաններ և այլ մասնագետներ աշխարհի 16 երկրներից, այդ թվում ԱՄՆ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Ռուսաստանից, Չինաստանից, Հնդկաստանից, Իրանից, Դազախստանից, Ուզբեկստանից, Հայաստանից, Վրաստանից և այլն: Տողերիս հեղինակը կոնֆերանսում համոզու եկավ ԿՀայացք Երևանից եվրոպայի նոր սահմանների և եվրոպական Միության և Կենտրոնական Ասիայի ու Անդրկովկասի միջև համագործակցության պակտի վերաբերյալ զեկուցումով:

3. Համում արդարության պետք է մշել, որ Հայաստանի Երրորդ Հանրապետության ղեկավարությունը սկզբնական շրջանում, մասնավոր 1990-1992թթ., ոչ միշտ դիրք գրավեց Ռուսաստանի նկատմամբ և ձգտում էր ինչքան հնարավոր է հեռանալ Ռուսաստանից: Վերջինիս ղեկավարությունը նույնպես այդ շրջանում մշտ և հստակ կողմնորոշում չուներ Անդրկովկասի խնդիրներում, այդ թվում և Հայաստանի հետ հարաբերությունների հարցում: Տես Nikolay Hovhannisyen, *The Foreign Policy of Armenia*, pp. 17-28.

4. "The Diplomatic Bulletin of the Foreign Ministry of the Republic of Armenia", July-September, Yerevan, 1997, p. 19-25.

5. "Красная Звезда", Москва, 17. 07.1998.

6. Graham Fuller, *Turkey Faces East. New Orientations Toward the Middle East and The Old Soviet Union*, Santa Monica, RAND, 1992, p. 56.

7. Carol Migdalovitz, *Armenia-Azerbaijan Conflict*. Congressional Research Service. The Library of Congress, Washington, D.C., 1995, p. 11.

8. Graham Fuller, *Turkey Faces East*, pp.VIII, 10.

9. Լույս տեսում, էջ V.

10. Valentino Martelli, Italy, *Central Asia and the Caucasus*, "Marco Polo Magazine", Venice, No 6, 1998, p.6.

11. "Независимая газета", Москва, 13.01.1999.

12. Graham Fuller, *Turkey Faces East*, p. 10.

13. Carol Migdalovitz, *Armenia-Azerbaijan Conflict*, p. 11.

14. Այս մասին ավելի մանրամասն տես Николай Отанесян. Карабахский

конфликт. Этапы. Подходы. Варианты решения, Ереван, 1997; Երևանի Հանրապետության Արևելահայաստանի Կարգավիճակի և իրարարարության հարցերի վերաբերյալ: - Երևան: Երևանի համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի հրատարակչություն, 1997; Nikolay Hovhannisyun. On the options of the resolution of the Karabakh problem, ի՞Marco Polo Magazine", Venice, N 4-5, 1998.

15. "The Diplomatic Bulletin of the Foreign Ministry of the Republic of Armenia", July-September, 1997, p. 19-20.

16. Երևանի տեղեկագիր, էջ 20:

17. "Красная звезда", Москва, 17.07.1998.

18. Երևանի տեղեկագիր:

19. "The Diplomatic Bulletin of the Foreign Ministry of the Republic of Armenia", July-September, 1997, p. 19.

20. "Красная звезда" Москва, 17.07.1998.

21. "Независимая газета", Москва, 13.01.1999

22. Երևանի տեղեկագիր:

23. Երևանի տեղեկագիր:

24. Երևանի տեղեկագիր:

25. "Washington Times", 4.09.1993.

26. Hrair Balian. Nagorno-Karabakh. Working Paper Submitted to the United Nations Economic and Social Council. Commission on Human Rights, France. Human Rights Advocates, 1994, p. 22.

27. Nikolay Hovhannisyun, The Foreign Policy of Armenia, p. 34.

28. J.Nichol. Transcaucasus Newly Independent States: Political Developments and Implications for US Interests. Updated August 17, 1995. Foreign Affairs and National Defense Division. Congressional Research Service. The Library of Congress, Washington. D.C., 1995, p. 5.

29. Владимир Ступишин. Карабахский конфликт.1992-1994, Москва, 1998, стр. 23.



**ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԲՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ՉԱՐԳԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ  
(XIX դարի երկրորդ կես)**

Քուրդ ժողովրդի էթնիկական ծագմանը, պատմությանը, սոցիալ-տնտեսական հարցերին, ազգագրությանը, բանավոր գրականությանն ու լեզվին ամբողջաբարձեղ են դեռևս Մովսես Խորենացին, Փավստոս Բազանը, Եղիշեն, Դազար Փարպեցին և հայ մտավորականության շատ այլ ներկայացուցիչներ: Նրանք հստակապես գրել են քրդերի նախնիների՝ մարերի մասին:

Մակայն հետազայում, ինչպես վկայում են հայկական բազմաթիվ գրավոր աղբյուրներ, հայ մտավորականության ատանձին լայնախոհ ներկայացուցիչներ փանացել են մտախկնց զբաղվել քուրդ ժողովրդի մշակույթի, նատկապես բանահյուսության խնդրով, խորամուխ լինել նրա պատմական անցյալի անցքերում: Մ.Մաշտոցի անվան մատենադարանում պահպանված մի շարք նյութեր վկայում են, որ հայ մտավորականության ներկայացուցիչները դեռ շատ հեուց ուսումնասիրել են քուրդ ժողովրդի պատմությունը, բանահյուսությունը, ազգագրությունը, լեզվի հետ կապված հարցերը:

Մակայն քրդական մշակույթի նկատմամբ հայ մտավորականության հետաքրքրությունը առավելապես այդք է զարմում XIX դարի կեսերից, երբ հայ միտքն իր նոր վերելքն էր ապրում:

Հայ-քրդական մշակութային կապերի ամեն մի ուսումնասիրող կարող է շեշտել, որ քրդասեր հայ մտավորականների առավել նյախտավորների շարքում քացատիկ տեղ է զբաղում հայ նոր գրականության հիմնադիր, մեծ վիպասան, մանկավարժ ու բուսավորիչ Խաչատուր Աբովյանը:

Մեծ ու անգնահատելի է Խ. Աբովյանի դերը քրդական մշակույթի ուսումնասիրության մարզում: Նրա յուրաքանչյուր ուսումնասիրություն այդ բնագավառում կարելի է համարել սկզբնաղբյուր քրդագիտության մեջ: Նա ոչազգալ մտքեր է հայտնել քուրդ ժողովրդի բանահյուսության ու ազգագրության, լեզվի ու գրականության վերաբերյալ, ցույց է տվել այդ ժողովրդին

քնորոշ մտածելակերպը, ազգային հոգեբանությունը: Ուսումնասիրելով իր ժամանակի պատմության սկզբնաղբյուրները՝ Արովյանն իր «Քրդեր և եզդիներ» երկում օգտագործել է հայ և ելրոպական գրականությունը, որոնք տվյալ ժամանակի հասարակական-քաղաքական դեպքերի այլի ընկնող մասնակիցներին ու ակամատեսներին և նրանց պատմածներից քաղել ամենաժեշտ տեղեկություններ<sup>1</sup>:

Գերմանական ճանապարհորդներ Ֆրիդրիխ Պարրուտի, Կարլ Կոխի, Ֆրիդրիխ Բոլեմշտեդի, Մորիս Վազմերի, Ավգուստ Ֆոն Հակտեստգենի և մյուսների հետ, հատուկ համձնարարությամբ, որպես ուղեկցող և թարգմանիչ Արովյանը շրջագայել է Արարատյան դաշտավայրում, ծանոթացել նրանց ինչպես հայ, այնպես էլ քուրդ ժողովրդի կենցաղին: Արովյանի շնորհիվ է, որ վերոնկիյալ ճանապարհորդներն իրենց աշխատություններում, ամողբարտանալով Հայաստանին ու հայ ժողովրդին, միաժամանակ ամողբարտեղ են նաև քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը, քանահյուսությանը և այլ հարցերի:

Ի. Արովյանի «Քրդեր և եզդիներ» աշխատանքը գլխավորապես մի խոշոր ներդրում էր քրդական մշակութային կյանքում, որտեղ հանդիպում ենք մի շարք հարցերի լուսաբանմանն ու լուծմանը:

Գլխավորապես խոր վերլուծության ենթարկելով քուրդ-եզդիական խնդիրը, նա համզում է այն ճիշտ եզրակացության, որ նրանց էրմիկական առումով մեկ ժողովուրդ են՝ քրդեր են, տարբեր դավանանքներով, իսկ եզդիզմը պաշտամունք է:

Հայ մեծ լուսավորիչը վեր է հանել այն անկեղծ, անմիջական ու պարզ բարեկամական կապերը, որ ունեին քրդերը հայ ժողովրդի հետ: Նա իր ուսումնասիրություններում ամողբարտեղ է հայ-քրդական զինակցական կապերին, նրանց համատեղ ազգային-ազատագրական շարժումներին: Նա գրել է. «Իրենց հարևան ազգերից ոչ մեկի հետ նրանք (քրդերը - Կ. Չ.) այնպես սերտ չեն կապված, այնպես համատեղ չեն գործում, ինչպես հայերի, որոնց նրանք անվանում էին եղբայրներ»<sup>2</sup>:

Քուրդ ժողովրդի խոսքարվեստը, քանավոր ստեղծագործությունների խորմաստոյանը հիացրել են Արովյանին, մեծ տպավորություն գործել նրա վրա: Նրա համոզմամբ, քուրդ ժողովուրդն օժտված է ստեղծագործական կարողություններով, վատ երևակայությամբ, ունի հարուստ քանահյուսություն:

Ամողբարտանալով քրդական ժողովրդական քանահյուսությանը՝ Արովյանը կարողացավ վեր հանել քուրդ ժողովրդի ինքնուրույն մտածելու ունակությունը: Նա հայ լայնախոհ մտավորականներից առաջինն էր, որ հավասրեց ու գրի առավ քրդական ժողովրդական քանահյուսության մի քանի նմուշներ, որոնք հրատարակեցին զերմաներեն, սաբա Երվանդ Օսեպիզի, հետագայում Ալան Կամադանյանի ջանքերով լույս տեսան մեկ հայերեն ու քրդերեն:

«Քրդերի ժողովրդական պոեզիան, - գրել է Արովյանը, - ապշեցուցիչ ընթացք է ունեցել և հասել հնարավոր կատարելության: Ամեն մի քուրդ, մինչև

յակ քրտուհի ի քնն հոգով քանաստեղծ է, նրանք ամենքն էլ իմպուլսիզացիայի գարնամալի շնորհք ունեն»<sup>3</sup>:

Արուլյանը հիացմունքով է խոսում ազնիվ ու պարզ քուրջ ժողովրդի քարքերի, հատկապես հյուրասիրության մասին: Նա գրում է. «Այդ ժողովրդի հյուրասիրությունը ամբողջ արևելքում առասպել է դարձել: Մինչև իսկ նրանց դեմ այնպես թշնամարար տրամադրված բուրքերն ու պարսիկները պետք է... խոստովանեն նրանց այդ առավելությունները»<sup>4</sup>:

Ամենակարևորն այն է, որ մեծ լուսավորիչն իր ուսումնասիրություններում պարզ ու հուսակ ցույց է տվել, որ հայ և քուրջ ժողովուրդների բարեկամությունն ու մշակութային կապերն ունեն դարերի պատմություն, այդ բարեկամությունը ձեռք է բերվել սոցիալական և ազգային պայքարի քովում, այն շունչ չափադիտակա՞ն որևէ նպատակ:

Մտավորականության արայծառ դեմքերից մեկը՝ Տիգրանակերտի վանահայր Մկրտիչ Տիգրանյանը, ոչ միայն լուսավորչական լայն աշխատանք է կատարել քրդերի շրջանում, կազմել հայատառ քրդերենի այբբենաբանը, այլև իր յուրաքանչյուր աշխատությունում անըրադարձել է քրդական մշակույթի հարցերին, զբաղվել քուրջ ժողովրդի պատմության, ազգագրության, բանահյուսության և լեզվի հարցերով:

1841 թ. Տիգրանյանը կազմում է մի ծրագիր, որը կոչվում էր «Կամոնք բարեկարգութեան Քյուրդիստան և Հայաստանի վանորէի՞ն և վիճակաց նոցին»<sup>5</sup>: Ինչպես վերնագրից է երևում, հեղինակը նպատակ է ունեցել Քուրդիստանում ևս բարեմշտոգումներ կատարելու, քրդերի մշակույթով զբաղվելու և լուսավորություն տարածելով նրանց մեջ՝ փրկելու քուրջական սարդոստայնից: Նա նրազել է Հայաստանը և Քուրդիստանը տեսնել որպես լուսավորված երկրներ: Նա գրել է. «Երանի այնմ ավուք, որ Քուրդիստան և Հայաստան կատարել ինքզինքը փաստավոր գիտութեան և իմաստութեան լուսին մեջ ըլլար»։ «Նսօզի ըրոյ՜ն հան քի Քյուրդիստան ու Յըստան թագմիլ հըն պրպըն պը իլմարն լոտնի»<sup>6</sup>:

Սակայն շուտով սկսվում է ռուս-քուրջական պատերազմը, և 1854 թ. Թուրքիայում բռնկվում է Եզդանիշիլիի ազատագրական պայքարը Թուրքիայի դեմ: Բնակամարար, երկրի ներքին խառը վիճակը տվյալ պահին թույլ չէր տալիս Տիգրանյանին իրագործելու իր վաղեմի նպատակը, բայց մա չի երաժարվում իր մախաձեռնությունից: Վերջապես, 1860 թ., քրդախոս հայերի ու քուրջ երևիսանների համար երատարակվում է «Այբբենաբան քրդերեն ու հայերեն» (Ալիֆայեմենդ գուրմանչի ու այրմանի) դասագիրքը՝ կազմված հայկական տառերի հիման վրա, հարմարեցված քրդերենի հնչյունաբանությանը:

Տիգրանյանն ունիր հեռահար նպատակներ, հայ և քուրջ ժողովուրդների փրկությունը մա տեսնում էր նրանց համերաշխության, միասնական արայքարի և լուսավորության ուղու վրա համատեղ ըմբասցքի մեջ: Սակայն հեղինակը լավ էր գիտակցում, որ մեծակ դժվար է այդ ծրագիրն իրագործել, ուս-

տի և որոշում է համագործակցել առաջադեմ հայ մտավորականների հետ, քաջատրեի նրանց իր ծրագրի էությունը, նրանցից խնդրել օգնություն և միասնական ջանքերի գործադրում այդ ուղղությամբ: Նրա ջանքերը հանգեցնում են շոշափելի արդյունքների:

1860թ. Կ. Պոլսում կազմակերպվում է «Քարեկարգություն արևելյան» անունով մի ընկերություն, որի նախագահն էր Մ.Մոմջյանը՝ գործակցությամբ «Մոլվի» խմբագիր Հաբոբյան Ավանյանի՝

Ընկերության անդամների անմիջական աջակցությամբ Տիգրանյանը ինչպես քրոյախոս հայերի, այնպես էլ քուրդ երիտասանների համար հրատարակում է իր հայատառ հաջորդ գրքույկը՝ «Չրայե ըօմի» («Լապտեր լուսատու»): Այս գրքի առաջին էջի վրա հայերենով գրված էր. «Լապտեր լուսատու, հորինյալ ի տեղ Մկրտիչ վարդապետե Տիգրանյան, առաջնորդ Քարդղիստանի, լույս ընծայեցավ Կոստանդնուպոլիս 1866թ.»: Երկրորդ էջի վրա հայատառ քրդերենով գրված է. «Չրայե ըօմի հատ յեզրեմ ժը Մկրտիչ Տիգրանի Միքրուան Մարախասե Քարդղիստան, պատմա պու լը Ըստամպուլ, 1866»:

Գրքի յուրաքանչյուր էջի վրա տեքստը գրված էր հայերեն, դիմացը քրդերեն կուրմանջի բազբառով տրված էր բարգմանությունը: Այսպիսով, հայ մտավորականն իր բառապաշարով, գեղարվեստական մտքի ճկունությամբ հարատացնում է քրդական գրական լեզուն:

Մ. Տիգրանյանն այն հայ մեծ լուսավորիչներից էր, որոնք հայ-քրդական մշակութային կապերի պատմության մեջ բողի են անցնցելի հետք:

Հայ հասարակական մտքի 19-րդ դարի ակնհայտոր ներկայացուցիչներից մեկը՝ «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին, իր թեթի էջերում հաճախակի լուսաբանում էր քուրդ ժողովրդի պատմության, քանակաբանության և ազգագրության հետ կապված հարցեր և ինքն էլ հանդես գալիս մի շարք հոդվածներով ու մակ առանձին գրքույկով, որոնք հետաքրքիր երևույթ են հայ-քրդական մշակութային կապերի պատմության մեջ:

Քրդական մշակույթի մասին գրած իր առաջին իսկ հոդվածում, որը վերնագրել է «Առաջին քայլերը», Արծրունին կոչ է անում հայ մտավորականությանն ուսումնասիրել հարևան ու քարեկամ քուրդ ժողովրդի անցյալը և հնարավոր բոլոր միջոցները օգտագործել՝ ստեղծելու և ամրապնդելու հայ-քրդական քարեկամական կապերը: Հետագայում իր մի շարք հոդվածներում նա անդրադառնում է նաև քուրդ ժողովրդի պատմության որոշ հարցերի: Հայ հրատարակախոսը նշում է, որ երկու ժողովուրդների ճակատագիրը համամասն է, որ հարկավոր է խորսպես ուսումնասիրել քրդերի սոցիալ-տնտեսական միճակը և ջանքեր գործադրել նրանց հետ համագործակցելու:

Արծրունին իր թեթի միջոցով քարծրացնում էր քրդերի մեջ լուսավորություն տարածելու հարցը: Նա համախ էր անդրադառնում Արևմտյան Հայաստանի քրոյախոս հայերի ու քրդերի ուսուցման խնդրին: Թեթի համարներից մեկում կարդում ենք, թե ինչպես Տարսնում, Սասունում, Ըստախում, Դիարբեքիում հայերն ու քրդերը սպրում էին կողք կողքի՝ միևնույն սոցիալ-

տնտեսական պայմաններում, սերտ քարեկամական կապերով: Քերված է մի ուշագրավ փաստ, թե ինչպես երեխաների համար առաջին անգամ 1878թ. Խալկի գյուղում (Քաղեչի և Սղերտի միջև), բացվում է դպրոց, ուր հաճախում էին 500 երեխաներ<sup>9</sup>:

Ինչպես Գ. Արծրյանու, այնպես էլ «Աշակի» մյուս խմբագիրների՝ Ա.Ասլանբարի, Հ.Առաքելյանի և այլոց օրոք բերում քյոնքի մասին տպագրվել է ավելի քան 300 հոդված ու բարակցություն:

Հայ քրդագիտության մեջ մեծ է պրոֆեսոր Ս.Ա. Եղիազարովի դերը: Նրա «Համատու ազգագրական ակնարկ Երևանի մահաճգի քրդերի մասին», ուստեղին արժեքավոր աշխատությունը մի նոր մեթոդում էր հայ-քրդական մշակութային կապերի պատմության մեջ<sup>10</sup>:

Եղիազարովի այդ ուսումնասիրությունը համարվում է քյոնքի պատմության մեջ ու ազգագրությանը նվիրված առավել լուրջ գիտական գործերից մեկը, որն, ինչպես հայ մտավորականների, այնպես էլ մասսայական ընթերցողների շրջանում լայն հետաքրքրություն է հարուցում քուրդ ժողովրդի ու նրա մշակույթի համոզել:

Սուրյունի Եղիազարովը՝ ծնված Դավալու գյուղում (Ներկայիս՝ Արարատ), իր մանկությունն անց է կացրել հարևան քրդերի շրջանում, տիրապետել քրդերենին, հետագայում գրադվել է քրդական ժողովրդական քանահյուսությամբ, հավաքել ու գրի առել նրա լավագույն նմուշները, որոնք և լայնորեն օգտագործել է իր վերոհիշյալ աշխատությունում: Այս գրքով նա նպատակ է ունեցել ուսու ընթերցողներին ներկայացնելու քուրդ ժողովրդի ոչ միայն հոգեկան պարզ ու լայն աշխարհը, այլև նրա կյանքը, նրան բնորոշ խոր ու պարզունակ մտածողությունը: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ դեռևս Հայաստանում եղած ժամանակ, նա ճանաչված է եղել որպես քուրդ ժողովրդի մշակույթի փառագով, եմուտ քրդագետ: Նա սերտ հարաբերության մեջ է եղել ուկրաինական նշանավոր քանաստեղծ Ալեքսանդր Լավրոսկու հետ, որը 14 տարի (1870-1884թթ.) եղել է Երևանում, ծանոթացել ինչպես հայերի, այնպես էլ Հայաստանում բնակվող այլ ազգերի կենցաղին, սովորույթներին, քանահյուսությանը: Նրան առավել հետաքրքրել են քուրդ ժողովրդի միտ ու կացը, կենցաղը, պաշտամունքը, հատկապես քանահյուսությունը, այս ամենն ուսումնասիրելու խնդրում Լավրոսկուն օգնում է Ս. Եղիազարովի, տրամադրելով քաղմաթիվ նյութեր: Այնուհետև Լավրոսկու խնդրանքով Եղիազարովը տասը քրդական երգեր քյոնքերից քարգճանում է ուստերին և հանձնում նրան<sup>11</sup>:

Ազատ տիրապետելով քրդերենին՝ Եղիազարովը կազմել է նաև ուսքրդերեն և քուրդ-ուստերեն բառարան: Հետագայում, երբ իր աշխատությունը 1891թ. վերանդատարակվել է «Ռուսական կայսերական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքի տեղեկագրերի» 13-րդ գրքում, բառարանները գնտեղել է այնտեղ, տպագրելով նաև «Ակնարկ թուրքիայի եզդիների մասին» ծավալուն ուսումնասիրությունը, որտեղ համզում է այն

եղրակացության, որ քրդերը և եզդիները էթնիկական մեկ ծագում ունեն: Քրդերին քաջատեղյակ Ս. Եղիազարովը ջանացել է մահ կազմել քրդական այրուքն: Այդ հարցով 1980-ական թվականներին նրան է դիմել Արևելյան Հայաստանի քուրդ-եզդիների առաջնորդ Հասան ադան, որ ցանկանում էր հայ մտավորականության օգնությամբ քուրդ-եզդիների համար դպրոցներ քանալ: Այդ խնդրանքը Եղիազարովն ընդունում է ցերեմոնիայով և պատրաստակամությամբ է հայտնում կազմելու քրդական այրուքն: Նա վաղուց արդեն ստեղծել էր ինչպես բառիմաստա, այնպես էլ ռուսաստան քրդերն այրուքնը, որ գետնել էր իննց իր քառարաններում: Սա ևս ցույց է տալիս հայ երախտաշատ քրդագետի մեծ ու շնորհակալ ծառայությունը քուրդ ժողովրդին:

19-րդ դարի արևմտահայ հասարակական մտքի ակամավոր ներկայացուցիչներից մեկը՝ Մաթևոս Մամուրյանը, իր աշխատություններում, հողվածներում և զեղարվեստական ստեղծագործություններում (տատկապես «Հայկական մամակամի»-ում և «Սև լեռան մարդը» պատմավեպում) անդրադարձել է քուրդ ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր վիճակին, քրդական հարցում քուրդական կառավարության և եվրոպական տերությունների դիրքորոշմանը և այլ հարցերի: Նա ևս իր հողվածներում հայ մտավորականության առաջ հարց էր բարձրացնում լուսավորություն տարածել քրդերի մեջ, գտնում էր, որ երկկողմանի բարեկամությունը կհասցնի ինչպես հայ, այնպես էլ քուրդ ժողովրդի իրձերի ու նպատակների իրականացմանը:

Խրիմյան Հայրիկը 19-րդ դարի այն լայնախոհ հայ մտավորականներից էր, որոնք ջանում էին լուսավորություն սերմանել քրդերի շրջանում, զբաղվել նրանց մշակութային հարցերով: Գարեգին Մրվանձտյանի հետ մա ջանք չի խնայել ամբապնդելու հայ-քրդական համագործակցությունը: Իր գործունեության առաջին իսկ շրջանից, Կոստանդնուպոլսի պատրիարքի պաշտոնը ստանձնելուց հետո, Հայրիկը բազմաթիվ փաստերով քուրդական կառավարությանն է ներկայացնում ինչպես հայ, այնպես էլ քուրդ ուսմիկ ժողովրդի ծանր վիճակը: Համակրելով քուրդ ժողովրդին՝ 1880թ. մա հատուկ հանձնարարություն է տալիս Հայաստանի սուլթանների հանձնաժողովի նախագահությանը, ցորեն, հաց և դրան քաշխել քրդերին, որպեսզի քուրդ ժողովուրդը ևս սովից չկուտորվի<sup>12</sup>: Խրիմյան հայրիկը բազմիցս այլ միջոցառումներ է ձեռնարկել օգնելու քուրդ սուլթաններին, մա մույմիսի իրեն հասանելիք գումարը հաճախ հատկացրել է նրանց, փրկելով հարյուրավոր քուրդ սուլթանների կյանքը<sup>13</sup>:

Խրիմյան Հայրիկը աջակցել է այն հայ մտավորականներին, որոնք զբաղվում էին քուրդ ժողովրդի մշակութային հարցերով: Նրա մտադրություններն այդ ուղղությամբ առավելապես արտահայտված են 1880թ. Գ.Նոբարտունյանի և Գ.Մրվանձտյանի միջև փոխամակված մամակներում: Նա միաժամանակ կապեր է հաստատել քուրդ աշիրեբապետների ու մտավորականների հետ, ջանալով նրանց աջակցությամբ հայ մտավորականության միջոցով լուսավորություն տարածել քրդերի շրջանում: Եվ պատահական չէ

հանրահայտ այն իրողությունը, որ քրդերը հատուկ նարգանք ունին հայ եղբորակամության, առավել ևս Խրիմյան Հայրիկի նկատմամբ, որին իրավամբ անվանում էին միլիարդատ (սուրբ մարդ):

Հայ ճանաչված մտախորական Երվանդ Լալայանը շատ է մտահոգվել քրդական նարգանքով: Եւ ճիշտ նշանակություն է տվել քրդական ժողովրդական բանահյուսությանը, հավաքել քրդական եղբայրներ, երգեր, վիպագրեր: Եւ բազմիցս եղել է Մոկսի, Սասունի, Բիթլիսի, Վանի շրջաններում, մասնակցել ծխակառարությունների, հարսանիքների և ինչպես քուրդ, այնպես էլ հայ բանահավաքներից զրի առել քրդական բանահյուսության և ազգագրական նյութերի լավագույն նմուշները, որոնք հետագայում տպագրել է հայկական պարբերական մամուլում:

Հայտնի է, որ ինչպես հայկական, այնպես էլ քրդական բանահյուսության բազմաթիվ նմուշներ հավասարապես հարստացրել են եղել երկու ժողովուրդներին և երկու լեզվով էլ տարածված են եղել նրանց մեջ: Լալայանին քերական հետաքրքրել է այդ իրողությունը և, պատահական չէ, որ նա փնտրել է այդ նմուշները, զրի առել, որոշ դեպքերում՝ թարգմանել, իսկ որոշ դեպքերում էլ բանասացներից լսած ձևով տպագրել:

1882թ. նա քրդերից լսում է «Թմկաբերդի առուը» և այն զրի առնում ու հենց նույն թվականին տպագրում է իր «Չավախի բարձունք» գրքում: Եւ քրդերից լսել և զրի է առել նաև «Ուտառոմ Չալի» պատմությունը և նրա քրդական տարբերակը հետագայում տպագրել իր «Լասպուրական» գրքում:

Լալայանը վկայել է, որ Վանի, Սասունի, Բիթլիսի հայերը եղյակապ տիրապետում էին քրդերին, նրանցից շատերը ինչպես քրդական, այնպես էլ հայկական բանահյուսության նմուշները պատմում էին հենց քրդերինով: Այդ երկու ժողովուրդները սերտ հարաբերությունների մեջ էին, փոխադարձաբար մասնակցում էին միմյանց ծխակառարություններին, որախոյուններին ու սուգերին<sup>14</sup>:

Քրդական մշակույթի նկատմամբ Ե.Լալայանի տածած հետաքրքրությունն ավելի ակնհայտ դրսևորվում է այն ժամանակվանից, երբ նա հիմնադրում է «Ազգագրական հանդես» պարբերականը (1896): Հանդեսի տարբեր համարներում տեղ են գտնում նաև քուրդ ժողովրդի պատմությանը, բանահյուսությանն ու ազգագրությանը վերաբերող նյութեր:

Հայ երածշտագետները նույնպես զբաղվել են քրդական երածշտությամբ: Կարա-Մուրզան և Կոմիտասը 19-րդ դարի վերջին ոչ միայն գնահատել են քրդական երգարվեստն ու երածշտությունը, այլ ուղղակի զբաղվել դրա հավաքմամբ, զբառմամբ ու մշակմամբ: Այսպես, Քրիստափոր Կարա-Մուրզան քրդական երածշտության պատմության մեջ նայում է իր մշակած «Քրդերի մաղչը» և «Կունը վալին» երգերով: Թատնուս հրատարակվող «Պայքար» թերթը, ամբողջատնաբով քրդական երածշտության բնագավառում Կարա-Մուրզայի ծառայություններին, գրում է. «Բ.Կարա-Մուրզան եղած է քրդական երգարվեստի առաջին բանահավաք մշակողներն մեկը»<sup>15</sup>:

Սակայն սլետը է պարզորոշ ասել, որ համճարեղ Կոմիտասը առաջինն էր, որ հիմք դրեց քրդական մշակված, նուտայագրված երաժշտությանը: Կոմիտասը լավ գիտեր քրդերին: Նա եղել է քրդական հարսանիքներում, մասնակցել ուրախություններին, լսել քրդական ասերն ու դրանցից քաղել քրդական երաժշտության լավագույն նմուշները: Ձերն կապեր է ունեցել Ռոստոք բեկի հետ, եղել է Շամիրամ գյուղում: 1899թ. Բեռլինում Կոմիտասը հանդես է գալիս քրդական երաժշտությանը մվիրված իր ուսումնասիրությանը, որը համարվում է նրա դիպլոմային աշխատանքը և ընդունվում է ֆեռմոթյամբ: Նա կարողացավ հերքել եվրոպական երաժիշտների այն թյուր կարծիքը, թե քրդական երաժշտությունն իբր պարսկական և արաբական երաժշտության խառնուրդ է ու հաստատել, որ այն իսկական երգ ու երաժշտություն սկզբո ժողովրդի մեջ հույս ու պատմությունն արտացոլող երաժշտություն է, որ այն ունի ազգային ինքնատիպություն: Մեզ են հասել Կոմիտասի ծայնագրված 13 քրդական մեղեդիներ և որոշ արխիվային նյութեր<sup>16</sup>:

Ամփոփելով պետք է նշենք, որ սոցիալ-տնտեսական միջավայրի և առաջադրանքների, հասարակական-քաղաքական և մշակութային իդեալների ընդհանրությունը այն կենարար հողն է, որի վրա պիտի առավել զարգանան անցյալ դարերի համատեղ ոգորմներում արմատավորված հայ և քուրդ ժողովուրդների քառեկամական փախնարարությունները:

## SUMMARY

The paper deals with the progressive role of the Armenian intelligency in the development of Kurdish culture during the second half of the XIX century.

Many Armenian scholars, literators, clergymen were involved in the study of the Kurdish history, ethnography, Armenian-Kurdish relations. Among them the author distinguishes Kh.Abovian, M.Tigranian, M.Momjian, G.Artsrouni, M.Mamourian, M.Khrimian, etc. Due to their efforts had appeared fundamental studies devoted to the Kùrdish history, language, poetry, music.



## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արտյամ, Երկերի ժող., հ.8., 1958, էջ 260:
2. Խ.Արտյամ, հ.8. Ե., էջ 260:
3. Նույն տեղում, էջ 377:
4. Նույն տեղում, էջ 257:
5. Հայկի գործոց և աշխատությանց, Սկրտիչ փարդապետ Տիգրանյան, Կ.Պոլիս, 1864, էջ 9:
6. Լապտերի լուսատու յորիննալ ի տեղ Սկրտիչ փարդապետ Տիգրանյան, Կոստանդնուպոլիս, 1866, էջ 19:
7. Մ.Նապլանդյան, Անտիպ երկեր Ա.Համաննիսյանի կոմենտարիաներով, Երևան-Մոսկվա, 1953, էջ 465:
8. «Մշակ» 1881, հ. 34, էջ 103:
9. Նույն տեղում, էջ 23-24:
10. С.А. Егвазаров, Краткий этнографический очерк Эриванской губернии, Т. 1884.
11. Журнал "Наш миссионер", Киев, 1918, N1.
12. Ա.Թերզիբաշյան, «Արծիվը իր բույնի մեջ», Փարիզ, 1938, էջ 40:
13. Նույն տեղում:
14. Ե.Լալայան, «Կատարական», Թիֆլիս, 1912, էջ 201:
15. «Պաշար», Բոստոն, 1971, հ.264:
16. Ա.Գ. Գալպարյան, Կոմիտաս, Ե., 1961, էջ 180:

## К ВОПРОСУ О МЕТОДОЛОГИИ СРАВНИТЕЛЬНОГО ИССЛЕДОВАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ГЕНОЦИДА ЕВРЕЕВ.

Геноцид относится к самым мрачным и трагическим страницам мировой истории, в котором идея абсолютного зла находит свое радикальное воплощение. На уровне обыденного сознания всякое упоминание конкретного случая геноцида неизбежно вызывает у нормального человеческого индивида реакцию, сопоставимую с негативным эмоциональным всплеском, и сопровождается оценками морального характера.

Однако как и всякое иное явление действительности, геноцид подлежит изучению методами научного познания, основанными на рационализирующей функции человеческого разума. Его научное изучение делает свои первые шаги; всеобъемлющей и общепринятой теории геноцида пока не создано. Однако уже накоплен значительный фактический материал по конкретным случаям геноцида и начинается этап их сравнительного изучения, при котором особое значение приобретают проблемы методологического характера. Основную научную задачу текущего момента четко сформулировал социолог Дж. Н. Портер; отметив в предисловии к одной из своих работ необходимость его "полномасштабного сравнительного изучения... с общемировой точки зрения"<sup>1</sup>.

В русле решения этой задачи находится сравнительный анализ двух таких случаев геноцида, как еврейский и армянский. Не случайно, что именно на основе изучения этих двух случаев геноцида польский правовед Р. Лемкин создал в 1944г. концепцию геноцида как преступления против человечества, в которой дана юридическая квалификация термина геноцид<sup>2</sup>. Эта концепция лежит в основе принятой Генеральной Ассамблеей ООН Резолюции 260 (III) от 9 де-

кабря 1948 года: "Предупреждение и наказание преступления геноцида"<sup>3</sup>. Именно в этом контексте оба случая претендуют быть уникальными.

Более того, они обладают целым рядом параметров, которые делают компаративистский подход особенно продуктивным и дают возможность на его основе делать глубокие обобщения. Так, Ф. Литтел выделяет 13 "общих характеристик" геноцида армян и холокоста, изучение которых, по его мнению, целесообразно с точки зрения более глубокого сравнительного изучения явления геноцида в целом: начиная с наличия долгой истории притеснения в качестве "презираемого и обижаемого" меньшинства и кончая использованием уголовных элементов в "стратегических направлениях программы убийств"<sup>4</sup>. Количество общих характеристик, конечно, может быть оспорено; их, на наш взгляд, меньше. Но главное, в данном случае - не это, так как эти характеристики не имеют сущностного значения. С обществено-исторической и "общемировой" точки зрения важными являются следующие обстоятельства:

а) геноцид армян был первым случаем широкомасштабного геноцида в современной истории, в котором проявились все его основные признаки;

б) геноцид евреев (или холокост) был случаем наиболее широкомасштабного и тщательно подготовленного геноцида, в котором некоторые его основные признаки нашли наиболее полное воплощение.

Эти факторы являются, на наш взгляд, детерминантами при сравнительном анализе геноцида армян и холокоста<sup>5</sup>.

К проблеме сравнительного изучения этих двух случаев геноцида обращались многие ученые. Некоторые из них посвятили ей специальные работы. Из их числа своей фундаментальностью и хорошим знанием фактического материала выгодно отличаются исследования Роберта Мелсона<sup>6</sup> и Ваагна Дадряна<sup>7</sup>, которые положили полученные ими результаты в основу оригинальных концепций о некоторых универсальных закономерностях генезиса и осуществления геноцида. Так, Р. Мелсон сформулировал концепцию о прямой связи между революцией и геноцидом, согласно которой последний имеет место во время революционных изменений в социальной и политической структуре общества<sup>8</sup>. Это обобщение он сделал на основе сравнительного изучения геноцида армян и холокоста евреев в годы господства младотурок в Османской империи и нацистов Германии соответственно, которые он квалифицировал как революционные периоды. В. Дадрян на той же основе составил трехступенчатую "парадигму геноцида", в которой рассмотрел универсальные, на его

взгляд, факторы динамики геноцидального процесса, выделив при этом его три основные фазы: инициации, организации и применения. В последней он центральное место отвел правящей партии, сделал вывод о том, что в обоих случаях геноцида "главным преступником было не государство, как таковое, а две монолитные политические партии - иттихадисты-младотурки и национал-социалисты..."<sup>9</sup>. В дальнейшем Дадрян применил эту концепцию для подробного анализа политики геноцида армян Османской империи в период, когда у власти находилась партия "Единение и прогресс"<sup>10</sup>.

Концепции Р. Мелсона и В. Дадряна выявляют некоторые социально-политические факторы геноцида и позволяют глубже взглянуть в динамику геноцидального процесса в целом<sup>11</sup>. Однако их претензии на универсальность не выдерживают испытания на прочность при столкновении с реальностью "геноцидального мира"<sup>12</sup>, если применить выражение Алана Розенберга. Например, даже при самом скрупулезном рассмотрении взаимного геноцида народов тутси и хуту в Руанде и Бурунди на протяжении последних трех десятилетий вряд ли можно обнаружить его связь с социальной или политической революцией или же выявить решающую роль правящей политической партии в подготовке и осуществлении геноцида. Эти концепции не вполне применимы и к геноциду армян, который систематически осуществлялся в Турции на протяжении почти четверти века - в последние десятилетия существования Османской империи и в первые годы после прихода к власти кемалистов. В частности, ключевую роль играет геноцид армян, осуществленный в годы правления султана Абдул-Гамида II, который не вписывается в рамки вышеупомянутых концепций. Ведь с одной стороны он предшествовал т. н. младотурецкой революции, а с другой стороны в его осуществлении основную роль сыграли различные органы государственной власти, руководимые непосредственно из султанского дворца, а политические партии вообще были запрещены. Чувствуя уязвимость своих позиций, Р. Мелсон и В. Дадрян попытались как-то выйти из положения: первый в специальной статье попытался показать, что это была резня в традиционном турецком смысле, а не геноцид<sup>13</sup>, а второй определил политику Абдул Гамида в отношении армян как "протогеноцидальную"<sup>14</sup>. Однако имеющиеся факты опровергают эту точку зрения и позволяют со всей определенностью квалифицировать эту политику как геноцид.

Думается, сужение сферы применения вышеупомянутых концепций обусловлено ошибкой методологического характера. Их авторы являются сторонниками точки зрения, согласно которой холокост рассматривается в качестве модели геноцида в целом, а все оста-

льные известные случаи геноцида квалифицируются по степени наличия в них компонентов холокоста. Одна из видных представительниц этого направления Хелен Файн назвала холокост "архетипом концепции геноцида"<sup>15</sup>. Для нее и других сторонников этой точки зрения, в том числе и для В. Дадряна и Р. Мелсона, наибольшее число компонентов холокоста можно найти в геноциде армян, поэтому и он наиболее близок к первичной модели - холокосту. Так, Иегуда Бауэр, известный как один из наиболее последовательных сторонников концепции "первичности" холокоста, определяет геноцид армян как "родственное холокосту (Holocaust-related) явление"<sup>16</sup>.

Такая методологическая установка и основанные на ней концепции, по нашему мнению, не продуктивны с точки зрения компаративистского исследования геноцида как явления мировой истории, так как зачастую ведут к механическому перенесению характерных для холокоста структурных составляющих на другие случаи геноцидов, что порождает в свою очередь искаженные представления о геноциде в целом. Так, весьма спорным является, на наш взгляд, утверждение Р. Мелсона о том, что "геноцид является своего рода социальной революцией"<sup>17</sup>. Значительно большие возможности в этом направлении предоставляет общесоциологический подход, согласно которому геноцид рассматривается как универсальный результат функционирования определенного типа общества и государства. Он был предложен американским ученым Ирвингом Льюисом Горовицем в 1976г. На основе изучения значительного количества случаев геноцида в разных уголках земного шара. Его концепция основывается на введенных им же в научный оборот понятиях "геноцидальное общество" и "геноцидальное государство", имеющих значительный сравнительно-исторический потенциал<sup>18</sup>. Дальнейшее развитие этот подход получил в известной монографии Лео Купера, в которой он сформулировал понятие "негеноцидального общества"<sup>19</sup>, то есть такого общества, в котором действуют сильные механизмы, препятствующие перерастанию репрессивной политики государства в национальном вопросе в геноцидальную.

Думается, сравнительный анализ особенностей генезиса и функционирования германского и турецкого государства, а также типов общества, порождением которых они были, является той методологической основой, на которой возможно наиболее адекватное компаративистское исследование двух тяжчайших преступлений против человечества - геноцида армян и еврейского холокоста. При таком подходе особое значение приобретает остававшееся до сих пор вне рамок серьезного научного интереса изучение различий между двумя вышеуказанными случаями геноцида, что вкупе с более осто-

рожной интерпретацией уже полученных результатов анализа их явных и скрытых "общих характеристик" углубит наши знания о природе явления геноцида в целом.

## SUMMARY

The paper deals with the methodology of Genocide, carried out on the 1915 Armenian Genocide and Jewish Holocaust. The author concluded that the true picture of both could be reached if one would carry a thorough analyses of the Ottoman Empire and Germany, focusing on the typology of these states.

## ПРИМЕЧАНИЯ

1. J. N. Porter. Preface. - In: *Genocide and Human Rights: A Global Anthology*. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. IV.

2. См. об этом: Ю. Г. Барсегоя. Геноцид армян - преступление против человечества: (О правомерности термина и юридической квалификации). Ереван, 1990.

3. Текст см.: Организация Объединенных Наций. Сборник документов. Москва, 1981, с. 566 - 571.

4. F. H. Littell. *Holocaust and Genocide: The Essential Dialectic*. - *Holocaust and Genocide Studies*, 1987, Vol. 2, No. 1, pp. 98 - 99.

5. Конкретный сравнительный анализ двух вышеуказанных случаев геноцида не входит в задачу настоящей статьи.

6. R. Melson. *Revolution and Genocide: On the Causes of the Armenian Genocide and the Holocaust*. - *The Armenian Genocide: History, Politics, Ethics*. Ed. by: R. G. Hovannisian. New York, 1992, pp. 80 - 102.

7. V. N. Dadrian. *The Convergent Aspects of the Armenian and Jewish Cases of Genocide. A Reinterpretation of the Concept of Holocaust*. - *Holocaust and Genocide Studies*, 1988, Vol. 3, No. 2, pp. 151 - 169; V. N. Dadrian. *The Historical and Legal Interconnections Between the Armenian Genocide and Jewish Holocaust: From Impunity to Retributive Justice*. - *The Yale Journal of International Law*, 1998, Vol. 23, No. 2, pp. 503 - 559.

8. Эта концепция наиболее полно изложена в: R. Melson. *Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*. Chicago, 1992.

9. См.: V. N. Dadrian. Towards a Theory of Genocide Incorporating the Instance of Holocaust: Comments, Criticism and Suggestions. - *Holocaust and Genocide Studies*, 1988, Vol. 5, No.2, pp.129- 143.

10. *Ibid.*, p. 139.

11. Վ.Տադրեան. Պետրեան մը և պետական կոտորածներն մը միասին դերը Հայկական ցեղասպանութեան մը. - Վ. Տադրեան. Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով. Watertown, 1995.

12. См. его статью с глубокими рефлексиями по поводу некоторых аспектов терминов "холокост" и "геноцид": A. Rosenberg. The Genocidal Universe. A Framework for Understanding the Holocaust. - In: *Genocide and Human Rights: A Global Antology*. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, pp. 46 - 58.

13. См.: R. Melson. A Theoretical Inquiry into the Armenian massacres of 1894 - 1896. - *Comparative Studies in Society and History*. 1982, # 24, pp. 491-509.

14. См. Соответствующий раздел его фундаментальной работы: W. Dadrian. The History of the Armenian Genocide; Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Providence - Oxford, 1995, pp. 111 - 176.

15. H. Fein. Political Functions of Genocide Comparisons. - In: *Remembering for the Future: Working Papers and Agenda. Volume III: The Impact of the Holocaust and Genocide on Jews and Christians*. Oxford-New York-Beijing-Frankfurt-San Paulo-Sydney-Tokyo-Toronto, 1989. p. 2428.

16. Y. Bauer. Is the Holocaust Exlicable? - In: *Remembering for the Future: Working Papers and Agenda. Volume II: The Impact of the Holocaust on the Contemporary World*. Oxford-New York-Beijing-Frankfurt-San Paulo-Sydney-Tokyo-Toronto, 1989. p. 1970.17.

17. R. Melson. *Revolution and Genocide...*, p. 91.

18. I. L. Horowitz. *Genocide: State Power and Mass Murder*. New Brunswick, 1976. В дальнейшем он углубил ряд своих аргументов. См.: I.L. Horowitz. *Taking Lives: Genocide and State Power*. New Brunswick-London, 1997.

19. См. соответствующую главу вкн: L. Kuper. *Genocide: Its Political Use in the Twentieth Century*

**ԻՐԱՆԱ-ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԾՄԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱԴՄՔԱԿԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ**

◀ Իրանա-իրաքյան պատերազմը սկսվեց 1980թ. սեպտեմբերի 4-ին և ավարտվեց ութ տարի անց, 1988 թ. օգոստոսի 20-ին, կողմերից և ոչ մեկին չընդհատված հաղթանակ:

Այս անմիտ ու անհեռանկար պատերազմը խոր հետք թողեց և՛ Իրանի, և՛ Իրաքի հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքում:

Իրանա-իրաքյան պատերազմի ավարտից տարիներ են անցել, սակայն գիտական հետաքրքրությունն ու կարևորությունը քեմայի առումով դեռևս ակնհայտ է: Որպես պատմական իրադարձություն՝ Իրանա-իրաքյան պատերազմը հետազոտողներին քննադրում է քազմակողմանի մոտեցումներ, որոնց թվում մաս միջազգային արձագանքները հոգուտ խաղաղ գոյակցության:

Հարկ է նշել մաս, որ հասարակական-քաղաքական մերզոքությունները, արձագանքները ներկայումս մույճրան գիտական արժեք են ներկայացնում, քանի որ լիովին ուսումնասիրված չեն:

[«Իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները Իրաքի սոցիալ-տնտեսական վիճակի վրա պատերազմի աստղին տարիներին (1980-1984 թթ.)» հոդվածում համառոտակի անդրադարձել ենք 1984թ. հուլիսի 12-ին Բաղդադում կայացած միջազգային կոնֆերանսի նշանակությանը: Այն ընթացակ «միջազգային խաղաղության և անվտանգության համար վտանգավոր իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները» խորագրի ներքո:

Ուշագրավ է, որ այս միջոցառումը կայացավ Բաղդադում, պատերազմի ընթացքում, տարբեր երկրներից Իրաք ժամանած արևմտաօրենական կազմակերպությունների, մասսայականություն վայելող հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների ուժերով ու նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ:

Նշենք Եզխալտոսի Ազգային Առաջադիմական կուսակցության գլխավոր քարտուղար Նալեյ Մեհի Էլ Գիմին, Պաղեստինի ազատության կազմակերպության ներկայացուցիչներին, Եզխալտոսի Ազգային դեմոկրատական



կուսակցության ներկայացուցիչ Ալ-Ջայաբու առաջարկել՝ ստեղծելու մշտական գործող կոորդինացիոն կոմիտե: Այդ ապագա կոմիտեն իր գործունեությամբ պետք է մայաստեղի իրանա-իրաքյան պատերազմի շտապօգնությունները:

Անրը մշված կոմիտեանի կարևորությունը ցայտուն փաստ է, որին անդրադառնում ենք այս բեմայի լուսարամման ընթացքում: Կարևոր է և ուշագրավ, որ Իրաք էր ժամանել և ակտիվ մասնակցություն ցուցաբերել մահ Իրանի ընդդիմադիր շարժման ներկայացուցիչներին Հ. Մատլին, որը «Իրանի աշխատավորության դեմոկրատական շարժում» կազմակերպության ներկայացուցիչն էր: Նա դատապարտեց իր երկրի վարչակարգը, պատերազմը շարունակելու մեղադրանքով, միաժամանակ այդ քաղաքականությունը որակելով որպես սեփական ժողովրդի դեմ ուղղված մասսայական սպանդ: Հ. Մատլին ելմանակամ մեղքը բարեց Իրանի «Մուսուլման եղբայրներ» խմբավորման վրա, վկայելով, թե այդ ժամանակ երկրում գործում էին մահ մման առաքելությամբ խմբավորումներ:

Ուշագրավ է այն փաստը, որ իրանա-իրաքյան պատերազմի դատապարտման գործում իր ավանդն ունի մահ Իրաքի հասարակական – քաղաքական գործիչ Արա Խաչատուրը, որը երկրի արհմիութենական շարժման մասնակիցն ու ցատագովն է, տարբեր տարիներին՝ սկսած 1960թ. դեկտեմբեր է Իրաքի արհմիությունների համընդհանուր ֆեդերացիան, լինելով նրա գլխավոր քարտուղարը, ինչպես մահ այդ կազմակերպության գործադիր կոմիտեի ղեկավարը և գրադեցրել այլ պաշտոններ:

1984թ. Բաղդադում արաբներեն, առանձին գրքով հրատարակվեց նրա հուշերի ընտրանին «Անճնական դիտարկումներ Իրաքի քանվորական արհմիությունների գործունեության մասին» վերնագրով:

Արա Խաչատուրը հատկապես անդրադառնում է Իրաքի աշխատավորության ծանր վիճակի դրդապատճառներին ու տալիս էլիմնավորումներ: Նա գրում է՝ «Պատերազմը ավելի բարդացրեց իրավիճակը, որն առանց այն էլ ծանր էր: Պատերազմի ավելի քան չորս տարիների ընթացքում աշխատուժը կրեց որակական լուրջ փոփոխություններ: Նրա կազմը, կառուցվածքը, մասնագիտական հատկանիշները, որակը և քանակը որոշելը դարձավ ավելի դժվար, քան մինչ պատերազմը:

Ոչ միայն արտադրության ոլորտի որակյալ մասնագետները, այլև Իրաքի ողջ հասարակության ամենատարբեր ներկայացուցիչներ, որոնք ի վիճակի էին գննք վերցնել, չչտուվեցին պատերազմի քուրան: Աշխատավորության ընտրանին առիվված էր պատեցնել պատերազմի և ավերի ամիվը, փոխանակ մյուսական բարիքներ ստեղծելու»:<sup>4</sup> Բնական է, որ աշխատավորները հայտնվեցին իրենց համար նոր կարգավիճակում, երկու երկրների համար էլ կորտարքեր պատերազմի դաշտում:

Հեղինակը հատկապես շնչտում է, որ իրանա-իրաքյան պատերազմի ծանր հետևանքներից մեկն էլ այն հակասական վերաբերմունքն էր, որ

ստեղծվեց աշխատուժի նկատմամբ: Իրացից բանվորը գնում էր մեռնելու, իսկ նրա փոխարեն, կազմակերպված կերպով, աշխատուժը համալրվում էր արտասահմանցի աշխատավորների հոսքով՝ Սլոնիայից, Եգիպտոսից, Հնդկաստանից, Պակիստանից: Ջգալի թիվ էին կազմում նաև քայվանցի և սլաոնստինցի քանվորները:<sup>5</sup>

Հետաքրքիր է նաև անդրադարձը Իրաքի ազգայնակյության սոցիալական կտրվածքին: Հեղինակը 1980–1984 թթ. ընդգրկող ժամանակահատվածը քննարկելու է որպես հասարակության ստադրմբացը ետ սլանող, երկրորդ սոցիալ-տնտեսական վերափոխումների ուղուց շեղող դաժան փորձություն:

1985 թ ապրիլի 22-ից 25-ը իսլամական ժողովրդական երկրորդ համագումարը:<sup>6</sup> Ուշադրության կենտրոնում իրամա-իրաքյան պատերազմի դատապարտումն էր և խաղաղության սրաշտաբանությունը:

Մեր տվյալները այս ընթացքում՝ այսինքն պատերազմի առաջին կեսին, մարդկային զոհերի թվի մասին հակասական են, սակայն մի բան սխալ է, որ արդեն 1983թ. զոհերի թիվը կազմում էր 200 հազ., իսկ 300 հազար մարդ վիրավորվել կամ զերի էր ընկել:

Իրամա-իրաքյան պատերազմի կոոստարեր նշանակությունը գիտակցվում էր Իրաքի հասարակական-քաղաքական շրջաններում: Այդ են վկայում պատերազմին վերաբերող փաստական նյութերը, քանի որ Բաղդադը ջերմեռանդ ընդառաջում էր իր երկրում խաղաղության նշանաբանով, պատերազմը դատապարտող միջոցառումների անցկացմանը:

Համաձայն հավաստի աղբյուրների, Իրանը գնալով ավելի լայնորեն էր պատերազմի մեջ շարժում զինվորական գործին վատ պատրաստված ֆանատիկների՝ «մարդկային ալիքների» մեթոդների հարձակումներին ապավինելով: Որոշ դեպքերում Իրանի դպրոցների աշակերտներ, որոնց հավատացնում էին, որ յուրաքանչյուր զոհված իրանցի կնայտմվի դրոստում, դասարանների լրիվ կազմով ուղարկվում էին ռազմաճակատ: Այս տվյալները վերաբերում են պատերազմի առաջին կեսին՝ 1983-1984թթ.:

Համազորը գտնում ենք Իրաքում, որի հաստատումն են երկրի նախագահի՝ Սադրամ Հյուսեյնի ճառերը, ուղերձները իր ժողովրդին, կամուսն, ծեղերին:

Դիմելով երիտասարդությանը, Իրաքի ղեկավարը նշում է.

«Ես ձեր ամուսնից եմ դիմում Թեհրանի ղեկավարներին, որ Իրաքի սպանելը և նրա զինվորները, և մեր ցամաքային գործերը և օդային ուժերը, և ծովային նավատորմի ուժերը, և ազգային բանակի մարտիկները, և Իրաքի ծեղումիները, և Իրաքի տղամարդիկ, Իրաքի կամայք, Իրաքի երիտասարդությունը, Իրաքի երիտասանները, նրանք բոլորը այսօր կանգնած են կեռ թրի նման, հայրենիքի սահմանների վրա, որպեսզի ոչնչացնեն ագրեսիայի բոլոր փորձերը, ինչպես նրանք վարվեցին անցյալ փաստաբան ժրերի ընթացքում»:<sup>7</sup>

«Այս օրերին հատկապես ողջունում եմ մեր հիանալի որդիներին՝ ուսանողներին՝ որոնք տնկյում են զենք վերցնել, քայց մենք նրանց ասացինք, որ շարունակեն պարապմունքները մինչև ամառային արձակուրդները, իսկ այդ

ժամանակ մեք մրանց հրացաններ կրածանենք: Եվ անս այսօր մրանց մախապարտրատական զինվորական մարտարներում են և պատասխանատու դիրքերում ամօր ու եպարտ պահում են հրացանները, Ձինված ուժերի և ժողովրդական բանակի, իրենց երբայրների հետ մեկտեղ պաշտպանում են բանկազին հայրենիքը»:

Ֆրանսիական լրագրողների հետ հարցազրույցում Սադդամ Հուսեյնը անդրադառնում է հակատակորդի բանակի կազմին՝ «Երկու օր առաջ իրանցիները հայտարարեցին, որ Դիզբայում և Շուշում մրանց կազմում մարտնչել են իրանցի տասնչորսամյա քաղաքացիներ: Դա ևս մի ապացույց է, որ մրանք մարտնչում են հետամնաց ուղեղներով, որոնք անցնում են միջակամ ուսումնառություն, փոխամակ օրենքներին ու կյանքին տրամաբանորեն վերաբերվելու»:<sup>10</sup>

Ֆրանսիական լրատվական միջոցները՝ Ֆրանսիական մամուլի կենտրոնական գործակալությունը, «Լուվել Օբսերվատորաթ», Ֆրանսիական եկոտատատեսության առաջին և երրորդ ծրագրերը, «Ֆիզայաթ» և «Ֆրանց առաթ» քննարկող, Ֆրանսիական ոստիոն և «Փարիզյան լիբերե» լրագրողների մախապարտրատման կենտրոնը, «Ասիա և Աֆրիկա» ամսագիրը, ֆրանսիական մամուլի գործակալության ներկայացուցիչները և «Մերձավոր Արևելքում խաղաղության ընկերության» մախագահը 1982թ. ապրիլի 1-ին Բաղդադում, հարցերի րվում ներկայացրին մաև հետևյալը՝ «Արդյո՞ք Իրաքը աջակցում է Խոմեյնու վարչակարգի ընդդեմաղիներին: Ի՞նչ կասեք Իրանին ցուցաբերված իսրայելական օգնության մասին»:

Կալո՞ղ եք հանգամանալի մեզ բացատրել այդ օգնության մամրամանները, հատկապես սպառազինության ոլորտում»:<sup>11</sup>

Արտատահմանյան առաջաղիմական մամուլը բազմիցս նշում էր, որ Իրանի ժողովրդական կուսակցությունը (ԹՈՒՂԵՐ), ելնելով Իրանի ժողովրդի շահերից և ընդհանուր իրադրությունից, որը ստեղծվել էր տաքսածաշրջանում, աղղեն պատերազմի սկզբնական շրջանից սկսած, դատապարտում էր մրա զարգացումը և կոչ անում ամհապաղ դադարեցնել այն որպես կորուտարեղ գործողություն երկրի համար:

Գերմանական հեղինակավոր ամսագրերից «Բլեթթեր Ֆյոլք դոյչե ունդ ինտերնացիոնալ սոլիտիկ» ամսագիրը գրում էր. «Այդ պատերազմի ընթացքը ուղղված չէ ո՛չ հօգուտ Իրանի, ո՛չ էլ Իրաքի ժողովուրդների, այստեղ շահող դուրս նկան մյուսյն Պենտագոնն ու Իսրայելը»:<sup>12</sup>

Արևմտանկրպակական երկրների մամուլում տեղ էին գտնում նյութեր, որոնք պարզորոշ ընդգծում էին արաբական երկրների հակասական վերաբերմունը Իրաքին և Իրանին, պատերազմող երկու երկրներին. «Ցամախիքն» գրում էր, որ այդ պատերազմը «ծառայում է արաբների մասնատմանը»:<sup>13</sup>

Միաժամանակ պատերազմական մթնոլորտը նպաստում էր Մերձավոր Արևելքում նոր քեժ կետեր ստեղծվելուն: Նշենք, որ 1982թ. հունիսին Իսրայելը ներխուժեց Լիբանան, որը գրեթե միաժամանակ էր, կամ համընկնում էր

իրանա-իրաքյան ռազմաճակատում «Ռամադան» անվանումով արյունահեղ գործողությունների զարգացմանը:

Այդ օրերին «Ինդիան էքսպրես» թերթը գրում է, որ իրանա-իրաքյան պատերազմը Լիբանանում ծավալված ազդեցիկացի կարող էր ոչադրությունը չեղել և արաբներին ավելի մասնատել:<sup>14</sup>

Այս իրադրությունը ընկալվում էր նաև արաբական մյուս երկրների կողմից, որոնք ընդգրկված չէին իրանա-իրաքյան պատերազմում:

Միջինասի նախագահ Հաֆեզ Ասադը իր հարցազրույցներից մեկում նշում է՝ «խաղաղությունը տարածաշրջանում կարող է հիմնվել Միացյալ Ազգերի կազմակերպության որոշումների վրա, որոնք կճանաչվեն միջազգային համալսարանի կողմից: Մենք արդեն բազմիցս հայտարարել ենք, որ ընդունում ենք այդ քանաձևերը»:<sup>15</sup> Այդ նույն հարցազրույցի ընթացքում նաև նշվում է՝ «Հաշվի առնելով, որ Իսրայելը ծրագրում է հետագա էքսպանսիոնիստական քայլեր, ընդհուպ միչև «Մեծ Իսրայելի» ստեղծումը, որը կտարածվի Նեղոսից մինչև Եփրատ, ինչը սիռնիստական շարժման ներկայացուցիչները առաջին համաշխարհային պատերազմից հետո հասցեագրեցին Փարիզի խաղաղասիրական կոնֆերանսին հատուկ մեծորանդումով, որով առաջարկվում էր Լիտանի գետի ակունքները, ներկայիս հարավում, ընդունել որպես Իսրայելի տարածքի մի մասը, դրանից կարելի է եզրակացնել, որ Իսրայելը գործնականորեն ձգտում է ամենախիստի ենթարկել Լիբանանի հարավային մասը»:<sup>16</sup>

«...Պատերազմը Իրաքի դեմ, դա նրանց (ճակատի ունի Իրանին - Կ.Ս.) հիմնական նպատակն է, և Իրաքի օկուպացումը ճանապարհ է դեպի Լիբանան, հետևաբար անհրաժեշտ է, որ արաբ ազգը բույլ տա Խոնյուն գրավել Իրաքը, որպեսզի նա և Բեզիկը միմյանց ձեռք բռնվեն Լիբանանում, կամ միգրացի մեկ այլ արաբական երկրում: Այո, դա է նրանց պահանջը, և դա է նրանց իրական ծրագիրը, և սա է այդ կուրսի քննական հետևանքը, որին հետևում է Խոնյունին այն թուլեցից, երբ իշխանությունը ստանձնեց»:<sup>17</sup>

Ի դեպ Լիբանանից նույնպես աշխատուժի զգալի խոսք էր սկսվել Իրաք, հենց պատերազմի առաջին տարիներից՝ «ավելի քան 250 հազ. լիբանանցիներ աշխատում են արաբական այլ երկրներում. Դրանք որակյալ և լավ, այսինքն քարժր վարձատրվող մասնագետներ են: Բանկերը ծաղկում են, քանի որ նրանք տնօրինում են այն գումարներին, որը կուտակվում է լիբանանցիների այդ հատվածի աշխատանքով: Էմիգրացիան դարձել է երկրի «արդյունաբերության հիմնական ճյուղերից մեկը»: Այս հանգամանքը պայմանավորում է ևս մեկ լուրջ կառուցվածքային փոփոխություն հասարակության կազմում: Երբ նախկինում լիբանանյան կենցաղսպասարկման ոլորտը իր աշխատուժը օգտագործում էր իր երկրում՝ Լիբանանի կարիքները իրագործելով, ապա այսօր տնտեսության այդ քնազավատի մասնագետները երկրից մեկնում են Իրաք, Պարսկական ծոցի պետություններ կամ Սաուդյան Արաբիա և այնտեղ են առաջարկում իրենց ծառայությունները: Լիբանանում 1981-

1982թ. սկսեցին բացվել մի քանի մասնավոր դպրոցներ, համապատասխան լինելով հանրային մասնագիտական ծրագրերով, որոնք ուսուցանում էին երիտասարդ լիբանանցիներին, նկատի ունենալով երկրից նրանց մեկնելու հնարավորությունը:

«Ըմբռնող ուսանողները մեկնել են, - պատմում է մի պրոֆեսոր, փողոցում հանդիպելով Էր-Ռիյադից արժակալորդներին տուն վերադարձած ուսանողի քարկին պատասխանելուց անմիջապես հետո: (Այսինքն սա ամենացավոտ խնդիրներից մեկն է):

Նրանք բոլորը պետք է սկսեն նրանից, որ փող վաստակեն արտասահմանում: Նրանցից ոմանք ավելի ուշ վիճակի են լինում փողը կուտակել մեք երկրում կամ Եվրոպայում: Պարսկական ծոցի երկրներում նրանց ավելի քարծր են վճարում: Նրանք ապրում են համեստ ու խնայողաբար: Չէ որ այնտեղ շատ չես վաստակի, եթե չաշխատես: Ահա թե ինչու են զմարդ ավելի նորանոր բանկեր բացում »:<sup>18</sup>

Հողվածագիրն ավելացնում է նաև, որ «դա վերջին հաշվով պայմանավորում է այն փաստը, որ լիբանանյան քրիստոնյաները հրաժարվեցին իրենց երկրից առանձնաճակ, հեմվել Իսրայելի վրա և տեղծել սեփական միևի պետություն: Չէ որ մեզան քաղաքականությունը կհանգեցնի նրան, որ այլևս չեն կարողանա մեկնել մալթով հարուստ երկրներ: Իսկ եթե այդ կապը, կամ հնարավորությունը խախտվի, ապա նրանք իրենց ամբողջում սովից կմահանան»:<sup>19</sup>

Այս մեջբերումը հետաքրքիր փաստ է, քանի որ Իրաքում պատերազմից շատ ժամանակ չէր անցել (1980թ. սեպտեմբեր), և արդեն առաջին սլամում Իրաքն էր, որը աշխատուժի զգալի կարիք ուներ:

Եվ եթե լիբանանցի մասնագետները ստիպված էին հեռանալ իրենց երկրից երկարաձգվող պատերազմի պատճառով, ապա եզիպտացի բանվորների համար մույն Իրաքը գործազրկությունից փրկվելու մի նոր վայր էր: Բավական է ճշել, որ իրանա-իրաքյան պատերազմի տարիներին Իրաքում հայտնվեցին մտավորապես երկու միլիոն եզիպտացի բանվորներ, այն տեղերում աշխատելու համար, որ աշխատողները բանակ էին գոյակույվել և պատերազմի դաշտում էին: Ընդ որում, այս երկու միլիոն քիվը բազմիցս շեշտվում էր պատերազմի ընթացքը լուսաբանող տեղեկատվական աղբյուրներում:

Որքան էլ որ ներկա բեմայի շքեանակից դուրս է, սակայն տեղին ենք համարում ավելացնել, որ այդ աշխատատեղերը դրախտավայրեր չէին, անգամ ոմանց համար ճակատագրական եղան, քանի որ խոսքը վերաբերում է արագ բացվալովոր մալթամթերքների արտադրության ոլորտին, ինչպես նաև զինամթերքի արտադրությանը, ռազմական կոմպլեքսին, որոշ նյութերի պահեստավորմանը և այլն:

Ինչպես հայտնի է, իրանա-իրաքյան պատերազմի ուր տարիների ընթացքում եզիպտոսը պաշտպանում էր Իրաքին, իսկ երբ նրանք Հորդանանի

և Եմենի հետ մեկտեղ հիմնեցին արաբական համագործակցության խորհուրդ, այդ երկու արաբական երկրների՝ Իրաքի և Եգիպտոսի փոխհարաբե-  
րությունները ավելի սերտ բնույթ կրեցին: Մակայն 1989թ., այդին պատե-  
րազմի ավարտից հետո, մամուլում հանդիպում են տարբեր հրատարակում-  
ներ՝ քայքայյալների մատվածքով, Իրաքի և Եգիպտոսի փոխհարաբերությու-  
ններում, որոնց հիմքում Եգիպտոսի քանվորների աշխատավարձի, առուջու-  
թան, արտադրամասերում դժբախտ պատահարների, անխուսափելի վնաս-  
վածքների, վթարների, անգամ զգալի զոհերի մասին մտահոգությունն է:

Եգիպտական որոշ լրատվական աղբյուրներ վկայում են, որ այդին  
1989թ. ամռանը երկու միլիոն եգիպտացի քանվորների կետը, այսինքն մեկ  
միլիոնը սոխիված էր վերադառնալ Եգիպտոս, քանի որ Իրաքում, պատե-  
րազմից հետո, բանակից զորացրվածները, վերադարձածները պետք է գրա-  
վեին իրենց մահակին աշխատատեղերը, կամ եթե ոչ, ապա պետք է աշխա-  
տանք գտնեին: Հետևաբար, Իրաքի կառավարությունը պատերազմի ավար-  
տին անհրաժեշտ համարեց որոշակի սահմանափակումներ մտցնել, Իրա-  
քից դեպի Եգիպտոսի քանկերը ֆինանսական փոխադրումները նվազեցնե-  
լու նպատակով:

Տեղին ենք համարում նաև նշել այս հրատարակումը պատերազմող  
մյուս երկրի՝ Իրանի մասին «Լուրջ ֆինանսա-տնտեսական ճգնաժամ» վեր-  
նագրով:<sup>20</sup>

«Այդուր՝ այդ լուրջ ֆինանսա-տնտեսական ճգնաժամը, որ ապրում էր  
Խոմենյու վարչակարգը, այն պատճառով է, որ զինվորների և կրոնական  
գործիչների միջև առկա են տարածայնություններ նաև պատերազմական  
լայնածավալ հարձակման, երկարաձգման շուրջ, ինչի մասին Թեհրանում  
արդեն մի քանի շաբաթ առաջ հայտարարել են»:

Այդ ճգնաժամը բացատրվում է մի քանի պատճառներով: Բնական է,  
պատերազմով և ռազմական տեխնիկայի գնումներով, ինչպես նաև այլ  
տեխնիկայի գնումներով, ինչպես նաև այդ տեխնիկայի համար անհրաժեշտ  
պահեստամասերի ձեռքբերումով, որոնց համար շատ քանկ զին է վճարում,  
ինչպես նաև կառավարման պատճառով, որը իրեն չի արդարացնում, ազ-  
գայնացված ձեռնարկությունների կոտակված դեֆիցիտով, ներմուծվող  
արտասահմանյան ապրանքների աճով լայն սպառման ապրանքների ոլոր-  
տում, որը հետևանք է քաղաքականության երկրի ներսում ազգային ար-  
տադրության, նրա կրճատման, սահմանափակման հետևանքով:

Իրանում զործազուրկների թիվը երեքից-հինգ միլիոն էր կազմում, իսկ  
երկրի քնակչության թիվը քառասուն միլիոն էր (1984թ. տվյալներով): Սրան  
ավելացնենք նաև երկու միլիոնի արտահոսքը Իրանից, պատերազմի  
հետևանքով:

Իսկ այդ նույն ժամանակ, Իրաքում բավական սուր էր դրված նաև ներ-  
քին երկպառակությունների հնարավորության փտանգը: Թեև պատերազ-  
մական գործողություններն ընթանում էին հիմնականում ճահճուտներում և

հարավային սահմանի ամսադատում, Իրաքի կառավարությունը, ինչպես նախկինում, լրջորեն մտահոգված էր, որ Իրանը անսպասելի հարձակումներ կարող է ձեռնարկել քաղաք խռովարարների օժանդակությամբ:

Այդ մտավախությունը բացատրվում էր ուժերի տեղաբաշխմամբ՝ իրաքյան զինուժը տարածվել էր վաղի ամբողջ սահմանի երկարությամբ՝ 700 մղոն: Իրաքյան վերջին երկու պահեստային զոչամասերը ուղարկվել էին դեպի հարավային տարածք և այդևս պահեստայիններ չկային, պատրաստ ուղարկելու համար Իրաքի հյուսիսային սահմանները, ռազմական գործողություններ սկսվելու դեպքում:

Ի դեպ, Իրաքի քրդերին աջակցում էին ոչ միայն իրանցիները, այլև այլախոս շիաներ Իրաքից: Մի քանի քրդական գյուղերում, ուր Բարզանուն նախատարին էին, քոյր տղամարդկանց հավաքեցին պատժելու կամ խոնարհեցնելու նպատակով: Այդ և վերջի մի դիվանագետ:

Սադան Հուսեյնը միաժամանակ ստեղծեց նոր դաշինք, համաձայնության գալով քրդական ժախ ուղղության դեկավար Ջալալ աք-Թալաբանու հետ՝ (Բարզանու կրանի հակառակորդի հետ): Իրաքի կառավարությունը Թալաբանուն տվեց մեծ արտոնություններ և կրճատեց Սուլեյմանիայի ժայռամասերի քրդաբնակ շրջաններում իրաքյան զինվորական հսկողությունները, միջամտության ներքո:

Թեև առանձնակի լայնածավալ ռազմական գործողություններում քուրդ խռովարարները չեն մասնակցել, նկատի ունի Բարզանու դեկավարությամբ վերջին ժամանակներս, սակայն նրանք շարունակում են Թեհրանին օգնել մատակարարման բնագավառում: Հետաքրքիր է նաև այս տեղեկությունը՝ «Աք Թալաբանին ցանկանում է օգտագործել նավթից ստացված եկամուտները՝ բարելավելու համար կենցաղային, բնակարանային պայմանները և կրթության ամբողջարար վիճակը: Սակայն իրականում, Իրաքի կառավարությունը չցանկացավ երաժարվել նավթից ստացված եկամուտների մեկ մասից, երբ երկրի տնտեսությունը լճացած էր, քանի որ անկրթածը էր Իրանի հետ ձգձգվող ու շատ քանակ մատուց պատերազմը կրել իր աջ բեռով»:<sup>21</sup>

Աք-Թալաբանին հույս ուներ, որ պատերազմական իրավիճակում անկաշուն իրադրությունը հարավային ճակատում Իրաքի կառավարությանը կտեսչի գնալ որոշ զիջումների և քրդերի հետ կնքել առավել շահեկան համաձայնագրեր:

Չցանկանալով ստեղծել ամբարենմապատ նախադեպեր, Իրաքի նախագահը ձգտում էր զոհարելով ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ է, որպեսզի հանգիստ լինի քրդերի կողմից աջակցության հարցում քաղաքար խաղաղություն պահպանելու, հյուսիսային ճակատում, և ոչ ավել:

Գալով իրանա-իրաքյան պատերազմի տարիներին երկրի ներքին քաղաքական ու տնտեսական կյանքին, ապա Սադան Հուսեյնը անհանգստացած էր նաև շիաների աղքատ, ընչազուրկ համայնքների հնարավոր խռովության վտանգից:

Նրանց ապրում էին երկրի հարավում, ուր տեղաբաշխված էին երկրի ամենախոշոր մավրախորերը: Իրանի կառավարությունը ստիպված էր զնալ զիջումների, 1980-ի սկսած, այսինքն պատերազմի հենց սկզբից, երբ առանձնացվեցին բավական խոշոր միջոցներ, շիաներով քնակեցված այս շրջաններին: Սակայն այդ ամենը դարձյալ բավարար չէր և չէր համապատասխանում այն եկամտուններին, որոնք ստացվում էին այն շրջաններից արտահանվող մավթի պաշարներից, ուր շիաները մեծամասնություն էին կազմում քնակչության թվաքանակում:<sup>22</sup>

Իրանա-իրաքյան պատերազմը պայմանավորեց մեկ միջազգային մեր իրադրություն տարածաշրջանում, նոր խնդիրներ և պատերազմի ծանր հետևանքները երկու երկրների համար էլ խոչընդոտեցին սոցիալ-տնտեսական ծրագրերի նպատակային իրականացմանը:

## SUMMARY

The Iran-Iraqi war had certain impact on the social-political life of Iraq and Iran. Among the significant social-political factors of regional importance was the problem of the peace.

The article deals with the analyses of the social-political consequences of the Iran-Iraqi war, the absurd character of this conflict, destroying the two countries.

## ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կ. Սամվելյան, Իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները Իրանի սոցիալ տնտեսական վիճակի վրա պատերազմի առաջին տարիներին (1980-1984), «Անթրոպոլոգիա և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» 16, Երևան, 1996, էջ 71:

2. К.Х. Самвелян, Рабочий класс Ирака в борьбе за упрочение республиканского строя и демократию. Ереван, 1979, с.50-51.

3. Արա Խաչատուր, Մին քաջարիք շախմայա ֆիլ անալ ալմիկղաթի ալումալ ֆիլ Իրակը, Բաղդադ, 1984 (արաբ.):

4. Նույն տեղում, էջ 58:

5. Նույն տեղում:

6. Վակդասի ալմուրաժար ալ իսլամի, 1985 (արաբ.):

7. «The Times» 2, 1984, 1-15, 2

8. Президент Саддам Хусейн в Национальный день, по случаю 14-ой годовщины ирольской революции. Багдад, Дар аль-Мамун, с. 49.

9. Նույն տեղում, էջ 47:



10. Интервью президента Саддама Хусейна с французскими журналистами, 1. 4. 1982. Дар ал-Мамун, Багдад, с. 23.
11. Նույն տեղում, էջ 16:
12. "Blätter für Deutsche und International Politik", 1984, II.
13. "Humanite", II - III, 1984.
14. Տես "Indian Express", 1984, III.
15. "The Washington Post", 14, VIII, 1983.
16. Президент Саддам Хусейн в Национальный день... с. 28.
17. Նույն տեղում, էջ 26:
18. "Neue Züricher Zeitung", 22 XII, 1981.
19. Նույն տեղում:
20. "Monde" 12, VII, 1984.
21. "The Washington Post" 27, III, 1984.
22. Նույն տեղում:

## ԱՆՈՒՇ ԱՏԱՄՈՒԹՅԱՆ

### **ԻՐԱՆԻ ՆԿԱՏԱՄԱՐ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ 1978- 1979 ԹԹ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

1978-1979թթ. իրանական հեղափոխության ընթացքում Մյացյալ Նահանգների անբաբայց միջամտությունն Իրանում ընթացող պրոցեսներին, ինչպես և նրա քաղաքական ակտիվության ամնախաղեպ սատակացումն ամմիջապես պայմանավորված էին ոչ միայն Իրանում, այլև ողջ տարածաշրջանում նրա տնտեսական, ռազմավարական և քաղաքական շահերով:

ԱՄՆ-ի համար կենսական կարևորություն ներկայացնող այդ քազմարևույթ շահերն ապահովվում էին, ճախ և առաջ, Իրանի ներքաղաքական կաշունությանը, որի պահպանումը մշտապես Իրանում ամերիկյան քաղաքականության հիմնական և ամփոփոխ ասպեկտներից մեկն էր:

Մյացյալ Նահանգների հետ ամենատերտ հարաբերությունների զարգացմամբ հավասարապես շահագրգռված էին մաս Իրանի ղեկավար շրջանները և, մասնավորաբար, Սոհամմեղ Ռեզա Փեհլևի շահը, որն ԱՄՆ-ի հետ համագործակցությունը համարում էր իր վարչակարգի պահպանման և զոյատևման հզոր նրաշխիք և ամեն կերպ խրախուսում էր այն:

Հեղափոխության ընթացքում Իրանի նկատմամբ Մյացյալ Նահանգների քաղաքականության էվոլյուցիայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ուղղակիորեն թելադրվում էր իրադարձությունների բուտն զարգացմամբ և երկրի ներսում արագ փոփոխվող որոշակի իրադրությամբ:

Չնայած Իրանում քաղաքական լարվածության ակնհայտ նշաններին՝ 1978թ. սկզբներին Մյացյալ Նահանգների ղեկավարությունը շահի վարչակարգը շարունակում էր անկեղծորեն դիտել որպես միանգամայն կայուն և վստահելի դաշնակից, իսկ շահին՝ որպես իր ժողովրդի կողմից սիրված իմաստուն ղեկավար և զործիչ՝ ընդունակ զսպելու և հարկ եղած դեպքում դիմակայելու ցամկացած ընդդիմության:

Հավատարիմ ընդունված ստերեոտիպին՝ այդ ընթացքում Թեհրանում ամերիկյան դեսպանատան զեկույցներում Իրանում ծավալվող զանգվածա-

յին ելույթներն ավելի հաճախ ներկայացվում էին անհամեմատ մեղմ, չոկ որպես հասարակության առանձին խմբերի արտահայտություն, ինչը և մեծ չափով պայմանավորում էր հեղափոխական իրադարձությունների սկզբնական փուլում ԱՄՆ-ի պաշտոնական շրջանների ակնհայտ պասսիվությունը: Դատելով վերջիններիս կեցվածքից՝ պետք է ենթադրել, որ ԱՄՆ-ի ղեկավար շրջաններում դեռևս չէին ընկալում այդ իրադարձությունների ողջ լրջությունն ու նրանց հավանական հետևանքների վտանգավորությունն ԱՄՆ-ի համար: Մասնավաճ, որ ԱՄՆ-ը հեղափոխական ուժերի կողմից դեռևս չէր ենթարկվում խիստ քննադատության, համզամանք, որն իրադարձությունների զարգացմանը սևեռուն կերպով հետևող որոշ դիտորդների առիթ էր տալիս չքացատել նույնիսկ մախազահ Ջ. Քարտերին որպես հաշտարար դատավոր երավիրելու հավանականությունը<sup>1</sup>:

ԱՄՆ-ի ղեկավար շրջանների արտաքուստ տարօրինակ և իրադրությանը ոչ համապատասխան անեզություն և անտարբերության վկայությունն էր և այն, որ խմբերին առանձնապես կարևորություն չտալով՝ Քարտերը նույնիսկ հարկ չհամարեց իր օգնականներից որևէ մեկին հասնադարձել զբաղվել Իրանի գործերով, իսկ Ջ. Բեթզինակու՝ այդ պայտականությունն ստանձնելու չքաքցրած հավակնությունը, ըստ վկայությունների, նրան որոշակաբին նյարդայնացնում էր<sup>2</sup>:

Ավելորդ չէ նշել, որ Միացյալ Նահանգների ղեկավար շրջաններն ընդհանրապես ընդգծված դժկամությամբ էին ընդունում Իրանին վերաբերվող ցանկացած անհաճո լուր<sup>3</sup> չկասեմալով թեկուզ զուտ տեսակետորին թույլատրելի համարել այդ երկրում իրենց դիրքերի թուլացման կամ հեռուն գնացող ծրագրերի ձախտման որևէ հնարավորություն:

Հարկ է հիշատակել, սակայն, որ այդ նույն ժամանակ Իրանի հարցերով զբաղվող շատ մասնագետներ և վերլուծաբաններ, իրատեսորին և սրտի գնահատելով ստեղծված իրադրությունը, կանխատեսում էին ոչ միայն դեպքերի հավանական զարգացումները, այլև նույնիսկ չափի տապալման հնարավորությունը, որը, սակայն, ցուցադրաբար անուշադրության էր մատնվում ԱՄՆ-ի ղեկավարության կողմից: Ս. Ջարլինի իրավացի բնորոշմամբ՝ 1978թ. ողջ առաջին կեսը ԱՄՆ-ի համար դեռևս ոչ թե տագնապի և անհասցատության, այլ սպառաժի և իրադարձությունների զարգացմանը հետևելու շրջան էր<sup>4</sup>:

Այսուհանդերձ, աստվել ասպահելության և իր համար իրադրությունը մինչև վերջ պարզաբանելու դիտավորությամբ Միացյալ Նահանգներն ընդարձակ հետախուզական գործունեություն էր ծավալել՝ հենվելով ոչ միայն սեփական հետախուզական ինժրաստորակտուրայի վրա, այլև լայնորին օգտագործելով իր դաշնակիցների (հատկապես Իսրայելի) համապատասխան ծառայությունների հնարավորությունները<sup>5</sup>:

Իրանում ծավալվող իրադարձությունների նկատմամբ ԱՄՆ-ի անտարբերության ոչ սրկաս կարևոր պատճառներից մեկն էլ, անտարակույս, այն էր, որ ԱՄՆ-ի պրագմատիկ ղեկավարներն ուղղակի խուսափում էին ներ-

քաշվել այդ զգայուն և նուրբ խնդրի մեջ, քանի որ ընդդիմության հարթամակի և իշխանավարության դեպքում չէր բացառվում միանգամից ամեն ինչ կորցնելու վտանգը: Իրանի նշանակությունն ԱՄՆ-ի համար չափազանց մեծ էր, որպեսզի վերջինս պատրաստ լիներ այդպիսի համարձակ քայլի: Պատահական չէ, որ աներիկյան միջամտությունը Իրանում (ինչին նա, ի վերջո, ձեռնամուխ եղավ) բավական ժամանակ զգուշավոր էր: Իրանում դեպքերի հախտոն զարգացումն անկանխատեսելի էր և, ծավալանալուքին, ԱՄՆ-ի կողմից առնվազն ամխտեմություն կլիներ բացահայտորեն ցուցադրել իր շահագրգռություններն ու աջակցությունը, քանի որ այն կարող էր ծայրահեղ անցանկալի հետևանքների հանգեցնել, եթե Իրանում իրավիճակն ավելի բարդանար: ԱՄՆ-ի ղեկավար շրջանների համար միանգամայն պարզ էր, որ այս անգամ այլևս դժվար թե հնարավոր լիներ կրկնել 1953թ. նախադեպը, երբ Միացյալ Նահանգների ամնիջակա ջանքերով հաջողվեց տասարել Ազգային ճակատ կազմակերպության ղեկավար Մոհամմեդ Մոսադեղի կառավարությունը և շահին վերադարձնել իշխանություն:

Ինչպես և պետք էր սպասել, իրադարձությունների հետագա զարգացումն ի վերջո հարկադրեց ԱՄՆ-ի ղեկավարությանը ճշգրտել և որոշակիացնել Իրանի նկատմամբ իր քաղաքական կոնցեպցիան և գործնական քայլերը, քանի որ հետագա հասարդումը սպառնում էր ճակատագրական լինել ԱՄՆ-ի շահերի համար ոչ միայն Իրանում, այլև տարածաշրջանում ընդհանրապես: Համաձայն այդ նոր քաղաքական գծի, որի վերջնական նշակման մեջ առաջատար դեր էր հատկացվում պետքարտուղար Ս. Վենսին<sup>6</sup>, ԱՄՆ-ի առաջնահերթ մտահոգությունը դեպքերի հետագա զարգացումը կասեցնելն էր և շահի իշխանությունն ամեն գնով պահպանելը: Պատահական չէ, որ այդ պահից սկսած ԱՄՆ-ի ղեկավարներն, իրենց ապագա գործողություններն արդարացնելու միտումով, ջանում էին առիթ բաց չբողնել կրկին և կրկին հավաստելու ոչ միայն ԱՄՆ-ի, այլև ողջ Արևմուտքի համար Իրանի ռազմավարական և տնտեսական կարևորությունը, տարածաշրջանում կայունության գործոնի նրա անվիխսարիճելի դերը, հետևարար և Իրանի ներքին իրադրության հաստատումությունը պահպանելու կենսական անհրաժեշտությունը, որի միակ երաշխավոր էր ներկայացվում Մոհամմեդ Ռեզա Փեհլևի շահը: ԱՄՆ-ի ղեկավարներն ու նրանց քաղաքականության ջատագովները չէին դատարում հիշեցնել նաև Իրանի և ԱՄՆ-ի միջև վանդաբար ձևավորված բարեկամական, «հատուկ» հարաբերությունները և շահին ունեցողություններից պաշտպանելու ԱՄՆ-ի ազնիվ պարտականությունը:

Ի հավաստումն շահի համդեպ իր ցեղմ զգացմունքների՝ 1978թ. նոյեմբերի սկզբներին Քարտերը հանդիսավոր ընդունելություն կազմակերպեց Միացյալ Նահանգների ռազմա-օդային ակադեմիայում ուսանող գահաժառանգ Ռեզայի պատվին<sup>7</sup>: Հատկանշական է, որ նույն ժամանակ, երբ Իրանում Միացյալ Նահանգների դեսպան Վ. Սալլիվանը որբորդ անգամ ահագանգում էր Իրանում մեղքադարական լարվածության սաստկացման և

տազմասպահարույց իրադրության մասին, Քարտերն ուղղակի բայլ չտվեց կազմակերպել Իրանից ամերիկյան քաղաքացիների զանգվածային դուրս-բերումը<sup>8</sup>, ամենայն հավանականությամբ, շահի վստահությունը չկորցնելու և նրա հետ հարաբերությունները չփչացնելու համար: Իր մամուլի ասուլիս-ներից մեկի ժամանակ Քարտերը համոզվածությամբ էր հայտնում, որ շահը կաշահաբանի իշխանությունը և Իրանի ներկայիս սղործմանը կառավար: «Մենք աջակցում ենք շահին և միաժամանակ վստահում ենք նրան»<sup>9</sup>, ասաց նա:

ԱՄՆ-ի ղեկավարության կողմից շահի իշխանության սրահայանման ամենախտտումնալից տարրերակ էր դիտվում ռազմական կառավարության ստեղծումը, քանի որ քանակն էր այն միակ կազմակերպված ուժը, որը հավատարիմ էր շահին և կարող էր նրան ամուր հենարան ծառայել: 1978թ. նոյեմբերի 5-ին շահը, Միացյալ Նահանգների իսամաձայնությամբ և իր խոստովանությամբ՝ այլընտրանք չունենալով, վարչապետ նշանակեց Իրանի զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար Դոլամ Ռեզա Ազհարիին<sup>10</sup>, որի կառավարությունը չեսպաղեց իրադրությունը հսկողության տակ վերցնել: Փորձելով որևէ կերպ պատճառաբանել ռազմական կառավարության ստեղծման ամխոստափելիությունը, շահը վստահեցնում էր, որ այն ժամանակավոր է<sup>11</sup>, և խոստանում էր երկրում կայունություն հաստատելուց անմիջապես հետո փոխարինել այն քաղաքական ուժերի լայն շրջանակ ներկայացնող կառավարությամբ և արդեն 1979թ. ամռանն անցկացնել մեջլիսի իսկապես ազատ ընտրություններ<sup>12</sup>:

Շահին և նրա հովանավոր ամերիկացիներին քակական զայրակղիչ քվազող այս խոստմանն ի պատասխան՝ հեղափոխական շարժման հիմնական և ամենահեղինակավոր ուժերից մեկը՝ Ազգային ճակատ կազմակերպությունը, միանշանակ հայտարարեց. «Բանակի ղեկավարին կառավարության ղեկավար դարձնելը և քանակը ժողովրդի դեմ դուրս բերելը հանցագործություն է»<sup>13</sup>: Ինչպես նշում էր անգլիական «Ֆայնենշլ թայմս»-ը, Ազգային ճակատի մնամ դիրքորոշումն արդեն իսկ սկզբից ևնք բացառում էր ռազմական կառավարության՝ քաղաքական օրինակաչություն ձեռք բերելու հնարավորությունը<sup>14</sup>: Մամավանդ, որ Ազհարիի կառավարությունն, իրոք, մտադիր էր հիմնական շեշտը դնել ռազմական ուժ գործադրելու վրա<sup>15</sup>. օգտվելով Միացյալ Նահանգների աջակցությունից:

Դեկտեմբերի սկզբներին արդեն Ազհարիի կառավարությունը ճգնաձամ էր ապրում, և վիճակը փրկելու համար ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում նրանից հրաձարվելու անհրաժեշտությունը: Դեկտեմբերի 21-ին շահը հարկադրված ընդունեց Ազհարիի հրաձարականը և ասաջարկեց նրան շարունակել կատարել վարչապետի պարտականությունները՝ մինչև նոր կառավարության կազմումը<sup>16</sup>:

Ռազմական կառավարության ֆիասկոն առանձնապես չանհանգստացրեց ԱՄՆ-ին: Իրանի նկատմամբ ամերիկյան քաղաքականության վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած իշխանությունների վերին շերտերում

անկա տարածայնություններին, պաշտոնական Վաշինգտոնը, օգտագործելով իր տրամադրության տակ եղած բոլոր հնարավորությունները, նշակել էր Իրանում իր դիրքերի ամօժեման օրինակությունն ապահովելու և ցանկացած պարագայում Իրանի արտաքին քաղաքականության ամերիկյան տեսլանորշունը պահպանելու մի ամբողջ շարք տարբերակներ:

Իրադարձությունների զարգացման այս փուլում լայնորեն արձարձվում էր Միացյալ Նահանգների մտահաղացմամբ և շահի հովանավորությամբ երկրում այսպես կոչված կռալիցիոն քաղաքացիական կառավարություն ստեղծելու գաղափարը, և ԱՄՆ-ի ներկայացուցիչներն ամենագործուն մասնակցություն էին ցուցաբերում ընդդիմության «չափավոր» գործիչների հետ այդ մպատակով վարվող բանակցություններին<sup>17</sup>:

Միացյալ Նահանգների դեկլարությանը միանգամայն կրավարարներ, եթե շահը ժամանակավորապես հեռանար երկրից, իսկ նրա պարտականությունները համձնվեին «Բարձրագույն խորհրդակցական խորհրդին», որի կազմի մեջ կմտնեին Իրանի հիմնական քաղաքական ուժերի ներկայացուցիչները՝ շահի ընտրությամբ և երաշխավորությամբ: Գործադիր իշխանությունը կհամձնվեր կռալիցիոն կառավարությանը՝ ընդդիմության «չափավոր» քնի որևէ առավել հարմար ներկայացուցչի գլխավորությամբ<sup>18</sup>:

Այդ մտահաղացումն իրականացնելու դիտավորությամբ խորհրդակցականների անվան տակ Իրան էին քափանցել ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական վարչության, Պետդեպարտամենտի և այլ գերատեսչությունների ու ծառայությունների մեծաթիվ ներկայացուցիչներ, որոնց իսկական մպատակը այնպեսի գործիչներ որոնելն էր, որոնք, ըստ հիշյալ ծրագրի հեղինակների, կարող էին ներգրավվել նորաստեղծ կառավարության կազմի մեջ, որի միջոցով և փորձելու էին պահպանել շահի իշխանությունն ու շահական կառույցն ընդհանրապես:

Պաշտոնական ԱՄՆ-ն, ի դեպ, հակված չէր քողարկել Իրանում ընդդիմության դեկլարանների հետ ամերիկյան ներկայացուցիչների և, մասնավորապես, ամերիկյան դեսպանատան կապերը: Ըստ հավատոյի տեղեկությունների՝ Միացյալ Նահանգներին հաջողվել էր կապեր հաստատել նույնիսկ այսբողա իրոնյում շրջապատից որոշ հեղինակավոր գործիչների հետ<sup>19</sup>: Քաղաքական շրջաններում ԱՄՆ-ի նման կեցվածքը զնահատվում էր որպես մի նոր վկայություն այն բանի, որ վերջինս չէր հրաժարվում հնարավոր բոլոր միջոցներով Իրանում ծավալվող իրադարձությունների վրա ազդելու փորձերից՝ հետապնդելով խիստ որոշակի շահեր<sup>20</sup>:

Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի նշակած հիշյալ քաղաքական գիծն, ըստ էության, միաժամանակ մի քանի մպատակ էր հետապնդում: Դրանցից մեկն, անտարակույս, շահի հոգևոր և աշխարհիկ հակառակորդներին մի կառավարության մեջ համախմբելն ու դրանով իսկ նրանց վնասագեթծելն էր: Քարտերի խորին համոզմամբ՝ միմիայն այս խելամիտ մտահաղացումը կիրկեր վիճակը, և այդ պարագայում այլընտրանք չէր տեսնում<sup>21</sup>:

Այսպիսի դիրքորոշման մյուս ասպեկտն ընդդիմության ներկայացուցիչների մի մասին կառավարության մեջ ներգրավելով՝ վերջիններիս պատակտեղն ու բուրասնելն էր: Անկասկած, կառիցիոն կառավարություն կազմելու առաջարկը միանշանակ չէր ընկալվի ընդդիմության առանձին ուժերի կողմից և առիթ կտար հակառուսթյունների: Եվ եթե գործնականում հաջողվեր էլ ստեղծել այդպիսի կառավարություն, ապա այն, ամենայն հավանականությամբ, երկար չէր գոյատևի, քայքայ և միանգամայն քաղաքար կլինեք կրքեքր հանդարտեցնելու և ժամանակ չափելու համար:

Եվ վերջապես, շահագրգիռ կողմերը եռյս ունեին նաև, այդ միջոցով շահի կորճը գրավել ընդդիմության մի մասին՝ հետոքին օգուտագործելով վերջիններիս քաղաքամուտը լինելու, որոշ խմբերի՝ քաղաքական հատակ ծրագիր չունենալու հանգամանքն է իշխանության գալու նրանց բուն ցանկությունը:

Այսպիսով, առաջին հայացքից միմյանց միանգամայն հակադիր թվացող այս սկզբունքներն իրականում հետապնդում էին միևնույն նպատակը՝ կասեցնել ընդդիմադիր ուժերի հնարավոր հաջողությունը, ինչն արևեսայի կլիմեր ոչ միայն շահի և նրա վարչակարգի, այլև, հավասարապես, Միացյալ Նահանգների համար:

Հեղափոխական պրոցեսի ընդլայնումն ու խորացումը, սակայն, վիժեցրեց չափավոր ընդդիմության հետ այդ պահին համաձայնության գալու փորձերը: Այս ծրագրի ձախողման գործում վճռորոշ դեր խաղաց արմատականների դիրքորոշումը՝ հրամայելու գլխավորությամբ, որը կտրուկ կերպով մեթոճեց շահի առաջարկած գործարքի քացարձակապես բոլոր տարրերակները և հանդես եկավ լիբերալների խիստ քննադատությամբ՝ գործնականում գրկելով վերջիններիս վարչակարգի հետ շփման և, առավել ևս, նրա հետ գործակցելու որևէ հնարավորությունից<sup>22</sup>:

Միացյալ Նահանգների համար վրա էր հասել նոր դաշուններ կայացնելու ժամանակը, քանի որ նախկին քաղաքական գիծն իրեն սպառել էր, և ամերիկյան դեկավար շրջաններում տարակարծություններ էին նշմարվում Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության հետապնդած ընթացիկ նպատակների հարցում: Մասնավորապես, կասկածի տակ էր առնվում Իրանում ԱՄՆ-ի շահերն ապահովելու համար որպես միակ վստահելի միջոց շահի հետ եռյսեր կապելու նպատակահարմարությունը<sup>23</sup>, ինչն աննախադեպ էր և շատերի համար անսպասելի:

1978թ. դեկտեմբերի 7-ին լրացողների հետ ճապարակային ժամանակ նախագահ Քարտերին ուղղված այն հարցին, թե արդյոք շահը կախախանի՝ իր իշխանությունը, վերջինս խուսափողաբար պատասխանեց. «Չգիտեմ: Հույս ունեմ: Անձամբ ես զերադատեմ եմ, որ շահը գլխավոր դեր պահպանի պետության մեջ, քայքայ վճրում իջնանական ժողովուրդը պիտի կայացնի...»<sup>24</sup>:

Այս արտահայտությունն, իրավամբ, և՛ Իրանում, և՛ Միացյալ Նահանգներում մեկնաբանվեց որպես շահին անվերապահորեն աջակցելու ԱՄՆ-ի նախկին քաղաքականությունից քացահայտ նահանգ:

Նվ իրոք, չմայած Վաչինգտոնը դեռևս պաշտոնապես չարժանակում էր ցուցադրել իր աջակցությունը շահին, սակայն ակնհայտորեն տեղի էր ունենում Իրանի նկատմամբ նրա քաղաքականության վերանայում և վերագնահատում: Միասպետական համակարգը բացահայտորեն քայքայվում էր, և ստեղծված իրադրության պայմաններում շահի իշխանությունն ամպայմանորեն պահպանելու ճգնաժամը միանգամայն անհետանկար էր դառնում: Իրանական իրադարձությունների մեջ ամմիջականորեն ներքաշված որոշ քաղաքական գործիչներ արդեն չէին քաղցնում իրենց դժգոհությունը շահի վարած քաղաքականությունից՝ հրապարակայնորեն քննադատելով ընդդիմությանը ճնշելու և երկրում կարգուկանոն հաստատելու գործում նրա ցուցաբերած «հանցավոր անվճռակամությունն ու հատկապես բանակի հմարավորությունները ոչ բավարար օգտագործած լինելու հանցանանքը»<sup>25</sup>:

ԱՄՆ-ի Պետդեպարտամենտում Իրանին մվիրված հեղթական աշխատանքային խորհրդակցության ժամանակ փորձագետներն ու վերլուծաբանները գրեթե միաձայն այն կարծիքը հայտնեցին, որ ոչ՝ երկրի քաղաքական կլանքի հետագա ազատականացումը (որի հետ ժամանակին մեծ հույսեր էին կապում) և ոչ էլ ճնշումների սատակացումն ալլա ի գորու շն կասեցնել շահի վարչակարգի փլուզման անդամադի ընթացքը<sup>26</sup>:

Իրադրության այսպիսի գնահատականից տրամաբանորեն բխում էր վերջիններիս այն առաջարկը, որ ժամանակն է անհապաղ և վերջնականապես հրաժարվել շահին աջակցելու քաղաքականությունից և վերակողմնորոշվել դեպի առավել կենսամակ և ժողովրդականություն վայելող արևմտամետ քաղաքական ուժերը<sup>27</sup>: Ավելորդ չէ հիշատակել, որ այդ գիծն էր պաշտպանում նաև պետքարտուղար Մ. Վենսը:

Մյացյալ Նահանգների դեկտվար շրջաններում, այսպիսով, հաստանում էր շահին րելու անհրաժեշտության գաղափարը, որը մինչ այդ միանգամայն անհավանական էր քվում: Դա Իրանում ամերիկյան քաղաքականության գարգացման նոր, որոշակի, նախորդներից որակապես տարբերվող, բայց և օրինաչափ և իրատեսական փուլ էր: Պաշտոնական Վաչինգտոնն այժմ արդեն չէր քաղցնում, որ, ինարկե, ոչ առանց ափսոսանքի, նպատակահարմար է գտնում շահի ժամանակավոր (անհրաժեշտության դեպքում գուցե և ընդմիշտ) հետանալը երկրից և, վերջապես, քաղաքացիական կառավարության ստեղծումը, որը նա այդ պահին չափազանց կարևոր էր համարում:

Հարկադրված լինելով հրաժարվել շահից, ԱՄՆ-ը, այսուհանդերձ, նրա դիրքը դեռևս վերջնականապես ավարտված չէր համարում: Մասնավորաբար, շահի առջև խնդիր էր դրվում առավելագույնս օգտագործելով իր ազդեցությունն ու հնարավորությունները, ապահովել իշխանության փոխանցումը այնպիսի ուժերի, որոնք ընդունակ լինեին սրահպանել միասպետության անձեռնմխելիությունն ու Իրանի արևմտամետ կողմնորոշումը իրենից հետո և առանց իրեն:



Ինչ խոսք, դա ամենևին էլ այն պարտականությունը չէր, որ կարաւ, էր խանդավառող դեպքերի զարգացման ընթացքից շփոթված և հուսալքված շահին: Մակայն այդ «մամբարքն» ԱՄՆ-ի ղեկավարներին այլևս չէր հուզում. շահի ջանքերով 1979թ. հունվարի 5-ին Ազգային ճակատ կազմակերպության ճանաչված գործիչներից մեկի՝ Շահխուր Բախթիարի կատավարության ստեղծումը՝ միանգամայն համապատասխանում էր նրա անկեղծախոսներին:

Այժմ արդեն ԱՄՆ-ի համար հատկապես կարևորվում էր Իրանի զինված ուժերի վրա հսկողության պահպանումը և նրանց շարքերում սլառակտման հնարավորության կասեցումը, քանի որ միայն վերջինս կարող էր այդ քարոյ իրադրության արայմաննելում ոչ միայն գորակից լինել Բախթիարի կատավարությանը, այլև մեծապես նպաստել Իրանում ամերիկյան ծրագրերի իրականացմանը: Բացի այդ, ԱՄՆ-ի ղեկավարությունը վախենում էր շահի նկատմամբ իրենց նոր դիրքորոշումից դժգոհ բարձրաստիճան զինվորականության պտոբկումից, որը կխոչընդոտեր շահի հետացումը նրկրից:

Պատահական չէ, որ Քարտերը չհասպաղից Իրան գործադել Երկուսայում ՆԱՏՕ-ի միացյալ զինված ուժերի փոխնրամանատար, զեներալ Ռոբերտ Հոյզերին<sup>29</sup>, որի առաքելությունը, սակայն, շատ ավելի լուրջ էր, քանի միայն Իրանի զինված ուժերին ծայրահեղ քայլերից ետ պահելը, ինչպես հայտարարվում էր սրաշտոնական վարկածում<sup>30</sup>: Իրականում, Հոյզերին համձմարարված էր դյուրացնել նրկրից շահի հետանալը, ներկայացնել այն որպես Բախթիարի կատավարության կարևորագույն քաղաքական ձեռքբերում՝ հուսալով դրանով իսկ բարձրացնել վերջինիս հեղինակությունը և նրա կողմը հակել «չափավոր» ընդդիմությանը: Հոյզերին համձմարարված էր մաև ռազմական հեղաշրջման արտակարգ ծրագիր մշակել՝ անհրաժեշտության դեպքում ԱՄՆ-ի ամենաակտիվ աջակցությամբ այն իրականացնելու և Իրանում ռազմական ղիկտարտուրա հաստատելու նպատակով<sup>31</sup>:

1979թ. հունվարի 16-ին, վաղորոք վտտահելի գործիչներից կազմված իմանակարական խորհուրդ ստեղծելուց հետո, որը պետք է փոխարիներ իրեն, շահը զարտնի մեկնեց նրկրից<sup>32</sup>: Ինչպես հաղորդում էր «Յունամելտեն», նրկրից հետանալու շահի վճիղը կայացված էր «Վաշինգտոնում, և աշխարհն այդ մասին առաջինը լսեց ԱՄՆ-ի պետքարտուղարի շուրքերից<sup>33</sup>: Թերևս ճշմարտությանը մոտ է Իրանի նախկին բարձրաստիճան զինվորականներից մեկի այն պատկերավոր արտահայտությունը, թե «Գեներալ Հոյզերը շահին տատկած մկան պես դուրս շշտեց նրկրից», որն ի դեպ, ԱՄՆ-ից վերջնականապես հնարարիված և վիրավորված շահը հետագայում ցավով մեջքերում էր վտարանդության մեջ գրած իր վերջին՝ «Պատասխան պատմությանը» գրքում<sup>34</sup>:

Հայտնի է, որ Իրանում հետագա քաղաքական զարգացումները ԱՄՆ-ի համար ավելի քան անմաբատ եղան: Մակայն հայտնի է մաև, որ Միացյալ Նահանգները մտաղիւր չէր ոչ միայն նրկև հետանալ Իրանից, այլև նույնիսկ որևէ շափով բուրացնել այնտեղ իր դիրքերն ու ազդեցությունը: Իրանական

ճգնաժամի ողջ շրջանում ԱՄՆ-ի ատազնահերթ խնդիրը եղել և մնում էր Իրանի ամերիկամետ կողմնորոշման պահպանումը, որին և նպատակաուղղված էր վերջինիս նկատմամբ նրա ողջ քաղաքականությունը: Հատկանշական է, որ արդեն 1978թ. վերջերից ԱՄՆ-ում լայն տարածում էր գտել այն տեսակետը, թե շահի վարչակարգի տապալման դեպքում Իսլամական հանրապետության հնարավոր ստեղծումը Իրանի քաղաքական զարգացման վատագույն տարրերակը չի լինի, անշուշտ, և խելամիտ մտեցումների դեպքում, թերևս, հնարավոր կդառնա ԱՄՆ-ի դիրքերի վերականգնումը Իրանում, քանի որ նոր վարչակարգը, այսպես թե այնպես, հարկադրված է լինելու Արևմուտքի հետ սերտ հարաբերություններ զարգացնել<sup>35</sup>: Գաղտնիք չէ, որ այս շրջանում ևս ԱՄՆ-ը կապեր էր պահպանում ինչպես Իրանի ամենատարրեր քաղաքական խմբավորումների, նույնպես և Խոմեյնու որոշ կողմնակիցների հետ<sup>36</sup>, և նրա ղեկավարները հայտարարում էին, որ ուժի մեջ են մնում ԱՄՆ-ի և Իրանի միջև նախկինում կնքված բոլոր պայմանագրերը՝ անկախ այդ երկրի կառավարության մեջ կատարված փոփոխությունների<sup>37</sup>:

Ամերիկյան քաղաքական շրջաններում հնչում էր նույնիսկ այն լավատեսական կարծիքը, որ եթե այսբոլոր Խոմեյնու և նրա Իսլամական կառավարությանը հաջողվի ամրապնդել իր հսկողությունը Իրանում, հնարավոր է, որ ԱՄՆ-ն այնտեղ հայտնվի ավելի քարեմպաստ վիճակում, քան ենթադրել էին տալիս ոչ վաղ անցյալի իրադարձությունները<sup>38</sup>:

Իրանում ծավալված հետագա քաղաքական զարգացումները, սակայն, Միացյալ Նահանգների ղեկավար շրջաններին հարկադրեցին տևականորեն սահմանափակել Իրանի նկատմամբ իրենց հնոում գմացող հավակնությունները, անշուշտ, երբևէ մտադրություն չունենալով նրանցից վերջնականապես հրաժարվել և հուսալով առաջիկ իսկ հարմար առիթով Իրանը վերադարձնել ԱՄՆ-ի ակտիվ քաղաքական ոլորտը:

## SUMMARY

The paper deals with policy of the USA towards Iran during the 1978-1979 Islamic Revolution, which at this period was aimed to keep its influence on Iran. The author discusses also the background of the policy of the USA and those circumstances which led to its failure.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. "Echo", 31.X.1978.
2. "Washington Post", 14.I.1979.
3. "Christian Science Monitor", 18.I.1979.
4. Zabih S. Iran Since the Revolution, London, 1982, p. 4.
5. "Правда", 24.XII.1978.
6. "Washington Post", 14.I.1979.
7. Hoveyda F., The Fall of the Shah, NY, 1980, p.168.
8. Նույն տեղում:
9. The United States and Iran. A Documentary History. NY, 1982, p. 464.
10. «Երթերարար», 5.XI.1978 (պարսկ.):
11. Stempel J., Inside the Iranian Revolution, Bloomington, 1981, p.142.
12. Liring L., Iran, Turkey, and Afghanistan. A Political Chronology, NY, 1981, p.163.
13. «Երթերարար», 12.XI.1978 (պարսկ.):
14. "Financial Times", 17.XI.1978.
15. Sullivan W., Mission to Iran, NY, 1981, p.171.
16. «Երթերարար», 21.XII.1978 (պարսկ.):
17. "Правда", 24.XII.1978.
18. «Երթերարար», 21.XII.1978 (պարսկ.):
19. Hoveyda F., նշվ. աշխ., էջ 182.
20. "Правда", 30.XI.1978.
21. "Washington Post", 14.I.1979.
22. "Guardian" 21.XI.1978.
23. "Washington Post", 5.I.1979.
24. The United States and Iran. ..., p. 463.
25. "Правда", 5.I.1979.
26. Иранская революция 1978-1979. Причины и уроки, М., 1989, с.146.
27. "Правда", 5.I.1979.
28. «Երթերարար», 5. I.1979 (պարսկ.):
29. Zabih S., նշվ. աշխ., էջ 11.
30. Sullivan W., նշվ. աշխ., էջ.227-228.
31. Zabih S., նշվ.աշխ., էջ 11.
32. «Երթերարար», 16. I.1979 (պարսկ.):
33. "Humanité", 15.I. 1979.
34. Մահամմադ Ռեզա Փահլավի, Փառխո քի քարիխ, L., 1983, էջ.273-274 (պարսկ.):
35. "Washington Post", 18.I.1979.
36. Նույն տեղում:
37. "Wall Street Journal", 26.II.1979.
38. "Wall Street Journal", 9.III.1979.

# ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

## ԼՈՐԵՏՏԱ ԴԱՆԵՐՅԱՆ

### ՀԱՅ ԵՎ ՄԱՐՄԵԴԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԳԱՐԱՓԱՐԱԿԱՆ ԱՐԵՐՄՆԵՐԸ

Աղանդավորական շարժումները սկիզբ են առել տակավին քրիստոնեության շեմին (հետագայում տեսնալով «զնոստիկյան» անվանումը), իսկ մահմեդական աշխարհում դրանք գոյություն են ունեցել դեռևս նախախլամական շրջանում (նամիքնական, մագյաքյան են), հիմք ծառայելով մահմեդական աղանդավորական-ապոստամբական շարժումներից շատերի համար:

Մեր խնդրո առարկան միջնադարյան աղանդավորական-ապոստամբական ժողովրդական շարժումներն են, որոնք այս կամ այն աղանդավորական դրաշխի ներքո սցիսալ-տնտեսական, իրավական խնդիրներ են առաջ քաշել և վերաճել հիմնականում հակաֆեոդալական ու հակախլամական շարժումների: Ս. Մելիք-Բախչյանի բնութագրմամբ՝ «Միջնադարյան Հայաստանում առաջացած աղանդավորական շարժումները, ըստ էության, դասակարգային խնդրատարածների հիմքի վրա առաջացած շարժումներ էին»<sup>1</sup>:

Պատմությունն արձանագրել է բազում աղանդավորական շարժումներ: Հիշենք՝ մեսայան (մեղավորական), թոնդրակյան, պավլիկյան, Մելիքուի, Մուքաննայի, Բարեքի (քուրամյան), Սուրաս-Մոզի, Աբու-Մուսլիմի, զինջեթի, կարմատների, ալավիիների, իսմաիլականների և այլ աղանդավորական շարժումները, որոնցից շատերը մեծ տարածում են ունեցել և խոր հետք թողել ժողովուրդների պատմության մեջ:

Ծավալք, այս շարժումների ուսումնասիրությունը դժվարությամբ ու դանդաղ է ընթանում<sup>2</sup>, և դա՝ ոչ միայն աղբյուրների աղության պատճառով: Հայտնի է աղանդների մկատմամբ հայ իրականության մեջ եղած խիստ քաջասական վերաբերմունքը, որի հետևանքով ոչ միայն եկեղեցական այրերը, այլև պատմիչները, քանաստեղծները, հիշատակագիրները մակդիրներ չեն խնայել՝ նշավակելու աղանդները և նրանց հետ սերտորեն առնչվող

ժողովրդական շարժումները: Միջնադարյան ընկալմամբ աղանդը մինչև ուղևորածը դաստապարտվել է, այն հերձվածոդություն է, շեղում «արքունի պալատայից», ընդվզում, անջատողականություն, ընդունված սրբություններին հակառակ: Նույն որակումները տրվում են աղանդավորական-ապստամբական շարժումներին, թող որ դրանք չարքաշ կյանք վարող աշխատավորական զանգվածների ընդվզում էին աղանդի քողի տակ՝ ընդդեմ իրենց հարստանաբարդների:

Դիտենք հարցը մահմեդական իրականության մեջ: Նույն պատկերն է: 17-րդ դարի պարսից շահ Աբբաս Մեծի պալատական պատմիչ Իսքանդար Մուհշին աղանդավորական շարժման և, ընդհանրապես, որևէ ապստամբության մասնակիցներին անվանում է «աջամեր վա օտրաշ» («նասարակության տակաճրճներ»): Նույն կերպ է քննադատում 16-րդ դարի պարսից պատմիչ Հասան-բեկ Ռումլուն, օր.՝ 1571թ. Քավրիզի ապստամբության մասնակիցներին, ավելացնելով մահ այլ մակդիրներ ու որակումներ, ինչպես՝ «աջաֆ» («տառոյին խավեր», «տունդուկ» «քաւիրփուկներ» ևն): Արաբական աղբյուրներից ևս այնքի են ընկնում աղանդավորական շարժումների նկատմամբ արհամարհական արտահայտություններով: Մ. Տոմարայի հաղորդմամբ, Բարբեյի հետևորդները, որոնք ապստամբել էին իշխանությունների դեմ, արաս պատմիչների կողմից անվանվում էին «ամհավատ քարդայարներ», «տառք ամբոխ»<sup>3</sup>: Արաբական խալիֆայի տիրապետության ենթակա տարածքների տարբեր ժողովուրդների աղանդավորական շարժումները միանշանակ ուղղված էին խալիֆայի դեմ և աներկբայորեն գնահատվում էին իշխանությունների կողմից իբրև անբարո արարք:

Անշուշտ, և՛ հայ, և՛ մահմեդական իրականության մեջ իշխած այս տեսակետներն աղանդավորական շարժման վերաբերյալ որևէ նպաստավոր տեղեկություն չէին կարող թույլ տալ: Ուսումնասիրողին մնում է լրացնել այդ պակասը՝ հետազոտելով աղանդավորների նկատմամբ զոյություն ունեցած հակամարտության պատմությունը, այսպես ասած՝ «թշմամական» տեղեկությունը, որը որոշակիորեն ուշագրավ մյուս է տալիս հետազոտողին:

Աղանդավորական շարժումների պատշաճ ուսումնասիրության խոչընդոտ պատճառներից է մահ տերմինների իմաստների հստակության քաջակալությունը, որը, առհասարակ, գիտական շատ հարցերի հետազոտման «աքիճեսյան զարչասարճ» է: Գաղտնիք չէ, որ տերմինների կամայական գործածությունը քիչ խառնաչփոթություն չի առաջացրել գիտության մեջ: Այսպես է ստացվել մահ կրոն, աղանդ, կրոնական թև կամ ճյուղ, հոսանք և հարակից քառ-տերմինների հարցում, նրբ տարբեր հեղինակների ժողովուրդներում միասնություն չկա: Այլ խոսքով խախտվել է «իբրեն իրենց անուններով կոչվել» սկզբունքը:

Ոչ պակաս խառնաչփոթ է տիրում աղանդների անվանումների հարցում: Այստեղ պատճառը գլխավորապես աղանդների վտխմեքթախանցումն ու մրասնց միջև կրոնափիլիսոփայական ուսմունքների սեղոս կապն է: Մակայն

երբեմն առանձին մանրամասների նույնությունն է դեր խաղացել:<sup>4</sup> Ուստի աղբյուրներում հաճախ կարելի է հանդիպել փաստերի, երբ պավլիկյաններին շփոթում են մանիքեականների հետ, իսկ փրօզիներին՝ 3-րդ դարից հետո ծայր առած մի շարք այլ շարժումների մասնակիցների հետ: Հովհան Օճնեցու մոտ կարդում ենք. «Չպետք է շարադանդ մծղնեակների, որոնք կոչվում են պավլիկյաններ, օրհանելու տեղ տալ կամ միանալ նրանց...»:<sup>5</sup> Նկատելի է «մծղնեական» (կամ մեսալյան) աղանդի անվան գործածումը որպես հերետիկոսների հավաքական անուն:

Մակայն այս կարևոր հարցի վաղժեք հետազոտումը կասեցնող քիվ առաջին խոչընդոտը, կարծում ենք, պետք է դիտել այն իրողությունը, որ հայրցի ուսումնասիրությունը տարվել է մեծ մասամբ միակողմանիորեն, առանց մյուս աղանդավորական շարժումների հետ ունեցած գաղափարական կապերի հետազոտման: Մինչդեռ յուրաքանչյուր աղանդավորական շարժման և սահմանակից երկրներում տեղի ունեցած ժողովրդա-աղանդավորական ապստամբությունների միջև գաղափարական զուգադասումները քազմաքիվ են: Ուստի և այլ շարժումները պետք է լուսարանվեն փոխկապակցված:

Նժամ մոտեցմանն առանձին կարևորություն էր տալիս ակադ. Ա. Հովհաննիսյանը, որին պետք է արժանին մատուցել: «Չեն ուսումնասիրված, գրում է նա, - կամ վատ են լուսարանված, մասնավաճ, բուրդակյանների և Հայաստանի սահմանակից կամ սլաւոնականորեն նրա հետ առնչված ժողովուրդների աղանդավորական շարժումների միջև եղած կապերը»:<sup>6</sup>

Նույնը կարելի է ասել մանձեղական, քյուզանդական և այլ աղանդավորական շարժումների հետազոտման մասին, որոնք, անտարակույս, չէին կարող գերծ մնալ ընթատության «բափառող» ալիքներից: Թե որքան վարակիչ էին աղանդավորական շարժումները և ինչ արագությամբ էին նրանք տարածվում շրջակա երկրներ, դիպուկ է 9-րդ դարում Քյուզանդիսյում բռնկված՝ Թովմա Գազիդացու ապստամբության (820-824) օրինակը, որից տարվորված՝ Բյուզանդիայի Միքայել 2-րդ կայսրը գրում էր, քե ճարակելով կայսրությանը սահմանակից արևելյան երկրները, այդ ապստամբությունն ընդգրկել է իրերներին, հայերին, արխազներին և ուրիշ ժողովուրդները: Իսկ նույն պատմիչ Գեննեդիոսը նույն ապստամբության մասին հաղորդում է. «Ոչ որ անհաղոթ չէր մնում նրան՝ ո՛չ արևելքից, ո՛չ արևմուտքից, ո՛չ օտար ցեղերից, ո՛չ տեղացիներից, ո՛չ հարևաններից...»:<sup>7</sup>

Կասկածից վեր է, որ նման ազդեցիկ շարժումները չեն կարող ուսումնասիրվել մեկուսի: Եզրահանգումը մեկն է, աղանդավորական շարժումների միջև կապերը պետք է դառնան հատուկ ուսումնասիրման առարկա:

Բովանդակությամբ պետք է նշել, որ աղանդավորական շարժումների հետազոտումն արդեն իսկ երևակել է այդ շարժումների միջև քազմաքիվ ընդհանրությունների առկայության փաստը և՛ ժամանակի, և՛ տարածության մեջ, մաև այն իրողությունը, որ շարժումները երբեմն այն աստիճան «շարժում» են եղել, որ նրանցից ոչ բոլորի ծննդավայրը հետակորեն կարելի է ո-

յուշել, մյուս կողմից, միևնույն շարժումը, օր.՝ մանկությունը (3-րդ դ.), որը «չրջել է» Պարսկաստանում, Հայաստանում, Վրաստանում, Չինաստանում, Հնդկաստանում և այլուր, կարելի է վերագրել մի քանի ժողովուրդների, քանի որ յուրաքանչյուր երկրում, որտեղով խորշակի պես անցել է շարժումը, խմբորմմանը է առաջացրել և որոշակի հետք է թողել նրանց ժողովուրդների պատմության մեջ:

Ի մտած ծանոթությունն աղանդավորական շարժումներին՝ գնտախկյան և մախախարամական շրջանից սկսած մինչև ուշ միջնադար, թույլ է տալիս վառահորեն խոսելու նայ և մահմեդական միջնադարյան աղանդավորական շարժումների փոխներքափանցիկ լինելու մասին՝ նրանց գաղափարախառնությունից մինչև կազմակերպչական և այլ մանրամասներ:

Մեզ համար, անշուշտ, առանձին հետաքրքրություն են ներկայացնում գաղափարամեթոդական այն դրսևորումները, երբ աղանդավորական շարժումն իր շուրջն է նամախմբել տարակրոն հասարակական շերտերի, մասնավորապես՝ նայ և մահմեդական: Դրա ցայտուն օրինակն է նայ իրականության մեջ հանդես եկած, այսպես կոչված՝ Մեխլուի շարժումը<sup>9</sup>, որը ծավալվեց 17-րդ դարի սկզբին՝ իբրև արծազանք այդ շրջանում տարածում գտած եկեղեցական-վանական քառմանելի բարքերի:

Աղբյուրները (Ա. Դավրիժեցի, Գ. Դարամաղցի, բազում ձևագրերի հիշատակարաններ, ժամանակագրություններ ևն) միաբերան վկայում են, որ 15-17-րդ դդ. Հայաստանում վանական բարքերի անկում էր տիրում: Հայ եկեղեցականների բարոյաբույժ, ձգտումը շփայտ կյանքի, եպիսկոպոսների, քահանայների ձեռնադրումն «արծաթով», համատարած կաշառքը, եկեղեցու վերածումը վաճառանոցի, այլ խոսքով՝ եկեղեցուն անհարկը մեթոդիստի առկայությունը ստիպում էր կաթողիկոսներին ժամանակ առ ժամանակ որոշակի միջոցներ ձեռնարկել՝ կարգի հրավիրելու օրինազանց եկեղեցականներին:<sup>10</sup> Այս մեթոդորոշ նմյատուն էր նաև վանականների սեփականատիրական ձգտումները, մասնավորապես՝ եկեղեցական հողատիրության աճը և վանական կաղվածատիրության ծնած հետևանքները, որ առանձնապես վնասակար անդրադարձում էր ունենում եկեղեցուն ենթակա հողի, քնակչության ճնշվող ու շահագործվող աշխատակոր խավի տնտեսական վիճակի վրա: Այսպիսով, բարձրանում էր վերջիններիս դժգոհության ալիքը, և հաճախ փոքրիկ առիթը լցնում էր համբերության բաժակը՝ ծնունդ տալով ժողովրդական հուզումների, որոնց ամենադրոյունված ձևը աղանդավորական-ասպետամբական շարժումն էր:

Առա այսպիսի ժողովրդական դմրոստության պտորկումներից էր Մեխլուի շարժումը:<sup>11</sup> Մեխլուն<sup>12</sup> քնիկ գամձակեցի էր և Գամձասարի Հովհաննես կաթողիկոսի հավանությամբ ստացել էր ավագ սարկալագի հոգևոր կոչում: Վերը նկարագրված վանական մեթոդորոշ Մեխլուի վրա բացասական ներգործություն է ունենում և հակակրանք ծնում հանդես հոգևոր դասը, որի դեմ էլ նա սկսում է քարոզել, շրջագայելով նախ Աղվանից աշխարհում, ապա

Գեղամա գավառում և շրջակա վայրերում: Անշուշտ, այս վարքագիծը չէր կարող անհետևանք մնալ, ուստի նա զրկվում է վերաբից և ի վերջո հալածվում ինչպես կարողիկոսի, այնպես և խաճի կողմից: Սակայն դուս փոխարեն Մեխլուի շուրջը համախմբվում են մեծաթիվ հետևորդներ, որոնց ոգևորում էին նրա գաղափարները՝ վամակա՛ն կեղեցումենքի դեմ, ի պաշտպանություն յբավոր աշխատավորական գանգվածին: Մեխլուին արժանակցում էին վամակա՛ն կալվածքներում շահագործվող գյուղացիները, որոնց մեջ կային և՛ հայեր, և՛ աղբրեցանցիներ: Ե՛վ նրանց թիվը գնալով աճեց այնքան, որ շաժմանը ժամանակակից Գր. Դարամաղցու պատկերմամբ՝ «մորեխակոյտ» էին հիշեցնում: Իսկ Ջաքարիա Մարկավազի խոսքերով՝ նրանց թիվն ավելի քան հինգ հարյուր էր («ԳԸ»): Մեխլուի գաղափարական հիմքում ուշագրավն այն էր, որ նա խտրություն չէր դնում կրոնների միջև, Քրիստոսի ու Մահմեդի միջև, և նրան հետևում էին ինչպես քրիստոնյաներ, այնպես և մահմեդականներ: «Եր այսպէս տարածեցաւ խաբիբա ամուսնը նորս ի մէջ Տաճկաց և Քրիստոնէից» պատմում է Ջաքարիա Մարկավազը:<sup>12</sup> Մեխլուին հարում էին նաև ալլ Եկեղեցականներ, որոնք նույնպես դժգոհ էին վամակա՛ն կեղեցումենքից: «Գոեհիկ աշխարհականք և ոսմիկք, այլ և տգետք երիցունք, և փարթա՛ն և մեծագոհ մարդիկք»- այսպես է թվարկում Ջաքարիա պատմիչը շարժման մասնակիցների խմբերը, որից ակնհայտ է, որ Մեխլուին սատարում էին նաև հասարակության վերնախավից:<sup>13</sup> Պետք է ներառել, որ վերջիններս հենց այն ջուղայեցիներն էին, որոնց մասին Գր. Դարամաղցին վկայում է իբրև Մեխլուին աջակցողների (հիշենք՝ 17-րդ դ. ջուղայեցիների ընչել ասցելակերպը համրահայտ փաստ է):

Մեխլուի գալլույթը հարուցում էին հատկապես արեղաները, որոնց նա անվանում էր «շնացողք և պիղծ»: Դառնալով նրանց հալածիկը, Մեխլուն իր զինված ջոկատին երանանգում էր բռնազրուվել նրանց գույքը, սեփականությունը և որտեղ արերս էր տեսնում, «մերկացուցանէր և բրածեծ սանէր»:

Մեխլուի գաղափարախոսության համար աղբյուր էր «զիցք մի ժողովածու», որը վկայակոչելով նա քաղազում էր հոգևորականների արժանափայլ վարքագծի պահանջները, օր.՝ որ հոգևորականները չպետք է ստանան ո՛չ սակի, ո՛չ արծաթ: Բռնազրուվելով հոգևորականների ունեցվածքը, Մեխլուն, փաստորեն, իրականացնում էր աղանդավորական-ապոստամբական շարժումներից շատերին քնորոշ՝ ունևորների սեփականազրկման պահանջը: Եվ քանի որ շահագործման դեմ պայքարը գոնացնում էր նույն շահագործման բեռի տակ կցած և՛ հային, և՛ մահմեդականին, նրանք միավորվում էին այս շարժման մեջ նպատակի միասնությամբ:

Մեխլուի շարժումը չէր կարող, սակայն, զրոքալ խնդիրներ լուծել և կամ ուղղվել Մեխլուի հարստության դեմ, ինչպես գտնում պատմաբան Պ. Հալուրյունյանը:<sup>14</sup>

Հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ զոչալով իր արարքների համար, Մեխլուն իր մեղքերը քաղելու նպատակով ի վերջո ուղևորվում է Ե-



րուսադեմ: Մա չի՝ վկայում այն մասին, որ նա մնաց իր կրոնին հավատարիմ քրիստոնյա և միայն հոգևորական հարստահարիչների դեմ էր ընդվզել:

Արդ, Մեխլուի շարժումը, որը մեզանում մեծ մասամբ դիտվում է իբրև եկեղեցուց խարտակված գործունեություն, իրականում միավորել էր տարակրճ և սոցիալապես տարբեր հասարակական շերտեր, որոնց նազուրկ կարելի է ասել, ամենևին էլ կրոնը չէր, այլ՝ սոցիալական անարդարության, չահագործման հարկերի ծանրության այն մթնոլորտը, որի «հեղինակները» տվյալ դեպքում եկեղեցական վերար կրող ֆեոդալներն էին ու նրանց կամակառայները:

Կրոնների համեքաշխտության մեամատիպ գաղափարախոսությունը հատուկ է եղել այլ շարժումների և: Ակադ. Ա. Հովնանյայանի հետևողական պատկերմանը շնորհիվ իրագրել ենք դառնում Մեխլուի շարժման և նրան ժամանակամեթո՞ւստաջակորասիական աղանդավորական շարժումների գուգադիպության փաստերին: Այսպես, 1415-1420թթ. Թուրքիայում բռնկվել է գյուղացիական ապստամբություն Բեռլը-էր-դին Միմալի շեյխի գլխավորությամբ, որը կրոնների համեքաշխտության կողմնակից էր և եղբայրություն էր քարգում իսլամական, քրիստոնեական և մուսիսական կրոնների միջև: Ուստի և Թուրքիայի տարբեր վիլայեթների տարակրճ գյուղացիները ի նշան սուրբանական դաժան դրվածքների և տեղական ֆեոդալների կամայականությունների դեմ իրենց բողոքի, միավորվեցին Միմալի շեյխի շուրջը: Նրանց արահանջների կարևոր կետերն էին՝ ունևորների սեփականագրվում, քնության բարիքների համայնացում:<sup>15</sup> Միմալի շեյխի աչակերտը՝ Մուստաֆան, իրեն հռչակել էր մարգարե և մեծ քանակությամբ համախոհների մեջ առանձնապես մտերմություն էր հաստատել իրենների և հայերի հետ, իսկ վերջիններս նրա քարգաները տարածում էին Թուրքիայի քրիստոնյաների մեջ, ընդվզումի սերներ ցանկում նրանց շրջանում:<sup>16</sup>

Մահմեդական աղանդավորների մեջ գոյություն ունեղ «իսլամը ցեղային խարանք չի ճանաչում» կարգախոսը, որից օգտվում էին շատ դեպքերում՝ արտահայտելու համար խալիֆաթի ճնշված ժողովուրդների ագատագրական տեղը: 776թ. Մահմեդանահեղում Միջին Ասիայում և նրան կից Խորասանում բռնկված հուժկու ապստամբության ղեկավարը՝ Մուքամման<sup>17</sup> (կամ Աթան), իրեն հայտարարում էր մերթ մարմնացած աստվածություն, մերթ Բրիատուսի կամ Մահմեդի և կամ Արու-Մուսլիմի հաջորդ:<sup>18</sup> Պարսկական աղբյուրները վկայում են, որ Մուքամման մեծ ժողովուրդականություն էր վայելում, և նրան երկար ժամանակ կարողացել են թաքցնել այնպես, որ խալիֆաթն անկարող է եղել գտնել նրան: Միայն մեծ դժվարություններից հետո 783թ. ապստամբությունը ճնշվեց, իսկ Մուքամման ինքնապաշտելով: Ուշադրության է արժանի, որ Մուքամմանի գաղափարախոսության հիմքում ընկած էր Մագդաթի ուսմունքը, ասել է քի՛ շարժման կողմնակիցները հետևում էին Մագդաթի ստեղծած կրոնա-քարոյական նորոնդին: Անդրադառնանք այդ շարժմանը:

Մազդաքյան շարժումն առաջացել է 6-րդ դարում Պարսկաստանում իր գաղափարախոսության հիմքում ունեւ գույքի հավասարության, տղամարդկանց հետ կանանց իրավահավասարության սկզբունքները: Շարժումը հենց սկզբից իր մեծաթիվ կողմնակիցների նվաճելու համարում էր կրոնական քրեականաշտությունը և Աստծո կամքը: Նրա ուսմունքի կրոնական հիմքերի արտահայտությունն են եղել մի շարք պատվիրաններ, ինչպես՝ միս ուտելու և ալյուրահեղուքյան արգելքը:<sup>15</sup> Ի դեպ, վերջին պատվիրանն ուխտադրծոքն չի կիրառվել այն դեպքերում, երբ հաշվեհարդար էին տեսնում իրենց աղանդի հակառակորդների հետ: Իսկ հաշվեհարդարը պարտադիր սկզբունք էր, քանի որ, ըստ Մազդաքի, հասարակությունը բաժանվում էր երկու խմբի՝ «ճշմարիտ հավատքի հետևորդներ» (յւնա՝ Մազդաքյաններ) և նրա թշնամիներ: Վերջիններին ոչնչացնելու ծրագիրը անհրաժեշտ էր, մասնավորապես, ազնվականության դեմ պայքարում, որը զգալի խոչընդոտ էր նրանց շարժման ճանապարհին և որն ի վերջո դարձավ շարժման գլխավոր զոհը: Սասանյան Կավադ 1-ին բազմավորը ևս իր հաշվներն ուներ ազնվականության հետ և այս հարցում պատրաստ էր անգամ համագործակցել Մազդաքի հետ: Մակայն, երբ սասանված էին ազնվականության դիրքերը (նրա զգալի մասը պարզապես ոչնչացված էր), Կավադը, որ հասցրել էր բարձր պաշտոններ տալ Մազդաքին ու նրա հետևորդներին, կտրակամապես փոխեց իր դիրքությունը՝ շրջվելով և երես թեքելով Մազդաքյաններից: Դա ամխոտափելի էր, քանի որ մազդաքյան սկզբունքներն ուղղված էին պետության սոցիալական հիմքերի դեմ: Հետևանքը եղավ ոչ միայն բոլոր մազդաքյանների պաշտոնազրկումը, այլև նրանց անխնայ հալածանքը, որը շարունակվեց նաև Մազդաքի տանջամահ արվելուց և շարժման ընդհատակ անցնելուց հետո:

Մազդաքյան շարժումը գաղափարամերժության ակնառու օրինակներ է տալիս և՛ նախախաղամական մյուս (մանիքեություն), և՛ մանենդական (Աբու-Մուսլիմ, Սուեբաթ-մոզ, Մուքաննա ևն) աղանդավորական շարժումների հետ: Մազդաքյան գաղափարական արձագանքները նկատելի են նաև բունդրակյան շարժման մեջ, մասնավորապես՝ հանուն գույքային հավասարության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, ընդդեմ բռնության ու ժողովրդի կեղեքման կոչելով:

Նկատենք՝ ուշ միջնադարի հայկական միջավայրում ծագած Մեվլանայի շարժման կրոնների համերաշխության գաղափարը գտանք 15-րդ դ. Թուրքիայում գործած Միճափի շեյխի քարոզչության մեջ, նույն գաղափարը տեսանք Մուքաննայի մարմնավորումների շարքում: Նույն Մուքաննան, ինչպես տեսանք, հետևում է Մազդաքի գաղափարներին, որոնց արձագանքը նկատելի է նաև բունդրակյան շարժման մեջ, իսկ Մազդաքի համար ուղեկից է եղել մի քանի երկրներ հուզած Մանին, որից սնվեցին մեծ թվով աղանդավորական շարժումներ, այդ թվում և՛ պավլիկյան: Այս սխառնատիկ դիտարկումները կարելի է շարունակել: Անդրադատմանը թվարկված շարքի մյուս աղանդավորական շարժումներին:

Նախ՝ մամիքեության մասին:

Երկաստվածության (դուալիզմի) սկզբունքի վրա էր հենվում մախախալամական խոշորագույն աղանդներից մամիքեությունը, որի դրոշի տակ ծավալված շարժումը տևեց գրեթե մեկ հազարամյակ:<sup>20</sup> Սկիզբ առնելով 3-րդ - դարում Իրանում<sup>21</sup>, այս աղանդավորական շարժումն իր ժողովրդամետ գաղափարախոսությամբ կարճ ժամանակում բազում համակիրներ նվաճեց: Ընդհանուր առմամբ մամիքեության գաղափարը երկու հակադիր ուժերի՝ քարտ և շարի, լույսի և խավարի գոյության ընդունումն էր: Սակայն ի տարբերություն գրադաշտականության, որը գոյություն ունեցած աշխարհը և իրավակարգն ընդունում էր որպես համայն լուսավորություն, ըստ Մամիի՝ գոյություն ունեցած կյանքը և մարդիկ չար առեղծագործություն են. մարդն իր ողջ կյանքի ընթացքում պարտավոր է օգնել լուսավոր ուժին՝ պայքարելու չարի դեմ: Իսկ փրկությունը, ըստ Մամիի, հնարավոր է՝ ազատելով մարդու հոգին երկրային, մյուսական ձգտումներից: Եվ այս բոլորին հասնելու համար մարդը պետք է խտրորեն հետևի սահմանված քարոզչին, մասնավորապես՝ քարոչական կյանք վարի, իսկ ընտրյալների համար առաջադրվում էր ժուժկալության առավել խիստ շրջանակ՝ արգելվում էր ամուսնամատ, մեղեմ գործածել, բույսեր քաղել:

Դժվար չէ նկատել, որ մամիքեական ուսմունքը հարստության ու շվայտության նկատմամբ արեամարիանքով հակադրվում էր շահագործող դասին ու իշխանությանը: Վաղ ֆեոդալիզմի շրջանն Իրանում, որ քնուրազվում էր ստրկատիրության մնացուկներով, սոցիալական անհավասարության և դասակարգային հակասությունների սրմամբ, չէր կարող շատազանց ներհարակության ստորին շերտերի առելությունը ճնշող ազատների նկատմամբ, ուստի և հարստահարվող ժողովրդական լայն զանգվածների համար մամիքեությունը փմտրված աղանդ էր՝ մյուսական կյանքը մերժող գաղափարախոսությամբ: Սակայն միայն այսքանը. մյուսական կյանքի քացասումը զագաբնակետն էր այն պահանջների, որ ընդունակ էին առաջադրել մամիքեականները. հետևաբար և խոսք չէր կարող լինել հասարակության վերափոխման կամ, քննուզ, զինված ապստամբության մասին:

Մամիքեության արագընթաց տարածումը (Իրանից Հայաստան, Բյուզանդիա, Սիջիս Ասիա, Չինաստան ևն) ուղիղ համեմատական էր նրա դեմ տարվող հալածանքներին, որոնց սկիզբը դրեց Սասանյան պետական մեքենան: Որքան էլ պասիվ էր մամիքեության բողոքը և որքան հեռու էր շարժումը հեղափոխական լիցքից, նրա նկատմամբ սկզբնական շրջանում մույնիսկ անուարբեր պարսից արքունիքն ի վերջո դատասպարտեց շարժումը՝ նրա միևիպիտական քարոզի մեջ գտնելով հակապետական միտում: Հետևանքն էր Մամիի մահաբարտիժը 276 թ.<sup>22</sup> և նրա հետևորդների անցումն ընդհատակ: Դրանից հետո էլ, սակայն, չէր նվազում շարժման ազդեցությունը հասարակական կյանքի վրա, որով և պայմանավորվեց մամիքեության երկարակեցությունը:

Պակաս դաժան հետապնդումների չենթարկվեցին նրանք Բյուզանդիայում, որտեղ նույնպես ստիպված էին ընդհատակ անցնել կամ հեռանալ: Հարածանքը տարվում էր մահ նրանով, որ տեղիվեց այդ աղանդը դատապարտող սովոր գրականություն: Ի դեպ, մանիքեականները ևս ունեցել են գրականությունը, ընդ որում, նրանք տիրապետել են գիրքը գեղարվեստորեն ձևավորելու արվեստին: Վլադյակոչիով Ի-բն-ալ-Ջաուդիին, Ալամ Սեցն իր «Մուսուլմանական վերածնունդ» գրքում գրում է. «Մանիքեական սուրբ գրքերը ևս չքել ձևավորված էին»:<sup>23</sup> Նույն հեղինակի հաղորդմամբ՝ 923 թ. Բաղդադի պալատի «հասարակական դասընթացների» մտտերի մատնվեցին Մանիի պատկերը և 14 պարկ հերետիկոսական գրքեր, և «խարույկից հետո էլ հարված ոսկի և արծաթ»:<sup>24</sup>

Մանիքեությունն անժխտելի հետք բողեց հետագայի աղանդավորական շարժումների վրա, ինչպես՝ բողոքական (Հայաստանում), արքիգոյցիների (Եվրոպայում), բոգոմիլների (Բուլղարիայում) ևն: Որոշ աղանդներ, (օր.՝ մագդաբյան) համախ կոչել են Մանիի անվամբ՝ ելնելով նրանց գաղափարական կամ այլ մեամությունից: Ուշագրավ են մանիքեության որոշ պահանջների (քարոյակում կյանքի մասին ևն) գաղափարական աղերսները քրիստոնեական պատվիրանների հետ: Մանիի ուսմանքին գաղափարամերձ են, մասնավորապես, Սերաստագիների և պակիկյանների աղանդները, որոնք նույնպես ընդունում էին բարի և չար աստվածների գոյությունը: «Նոժ աղանդոց» աշխատության երկրորդ՝ «Պարսից կրոնի հեքքումը» գրքում Եզմիկ Կողբացին տալիս է Մանիի իսլամների և նրան մոլորագեղձ արած գրադաշտականների գաղափարախոսության համեմատական քննադատությունը, եզրակացնելով, որ նրանք միայն վարքով են միմյանցից տարբերվում, իսկ «ելրոնով երկուսն էլ մեկ են, նրանք երկարմատյաններ են»<sup>25</sup>, սրանք՝ նույնպես. նրանք արևապաշտներ են, սրանք՝ արեգակի ծառաներ. նրանք կարծում են թե քոյր անշունչները շունչ ունեն, սրանք էլ նույն ձևով (նույնն) են հասկանում»:<sup>26</sup> Կողբացին նշում է նաև այլ աղանդների հետ մանիքեության սկզբունքների նույնության մասին (օր.՝ ամուսնությունը սրժություն են համարել մահ մեալյանները, Մարկիոնը և այլք): Ե. Տեր-Մինասյանը մանիքեությունն անվանում է մահ «վերամոտրված մի իրականություն», քանի որ մանիքեության առջև «տղին արդեն հարթել էր Միերի կրոնը»:<sup>27</sup> Այս մեկնաբանությունն ուղղակիորեն խոսում է աղանդների գաղափարական կապերի հարցում հաջորդականության բեզի օգտին (այդ մասին ստորև):

7-րդ դարում Արևմտյան Հայաստանում ծայր առավ Պակիկյան աղանդավորական շարժումը, որ տարածում գտավ մահ Արևելյան Հայաստանում և գրեթե երեք հարյուրամյակում այնպիսի չափեր ընդունեց, որ դարձավ միջնադարյան հակաֆեոդալական շարժումներից ամենագործող ոչ միայն Հայաստանում, այլև՝ Բյուզանդիայում:<sup>28</sup> Ծարժումը հետևանք էր 5-րդ դ. Բյուզանդիայի կողմից սկսված և աստիճանաբար ուժեղացած քաղաքական ու տնտեսական ճնշումների, որոնք գործարկվում էին ինչպես հայ նախա-

բարոյությունների, այնպես և աշխատավոր խավերի նկատմամբ:

Պալիկեյանների գաղափարախոսությունը, թեև «քաղցածր» էր,<sup>20</sup> բայց հիմքում ուներ երկաստվածության սկզբունքը՝ քարի և շար աստվածների գոյության ընդունումը:<sup>21</sup> Քարի (այն է՝ երկնային) աստծու արարչագործությունն էին համարում արեգակը և մարդկային հոգին, իսկ շարի ստեղծագործությունը՝ մայրու մարմինը և աշխարհում հաստատված ամեն տեսակ անօրինակությունը, ճնշումը, կեղեքումը անարդարությունը, սոցիալական անհավասարությունը: Ուստի պալիկեյանների գլխավոր մպատակն էր պայքարել այդ բոլոր չարիքների դեմ, դրանով իսկ մտեցնելով այն երանելի ժամանակը, երբ քարի Աստվածը կիշխի այս աշխարհում:

Դժվար չէ կրոնական քողի տակ նկատել պալիկեյան աղանդի աշխարհիկ, դասակարգային բնույթը: Եվ սրա խոսում փաստերից է աղանդավորների վերաբերմունքը վանականների նկատմամբ: Ջանի որ հոգևորականությունը 5-րդ դ. նույնպես իր կոչմանն անհարկը կենցաղ էր վարում<sup>22</sup>, իր վարքագծով գաղիս էր բողոքելու հարկերից ու իրավագուրկ վիճակից կրամ հայ աշխատավորական զանգվածների դժգոհությունն ու զայրույթը: Վանականների, իբրև շահագործողների, նկատմամբ ատելությունից բխում էր մերժողական վերաբերմուքը եկեղեցու նկատմամբ, թեև պալիկեյաններն ամփոփաբանորեն ընդունում էին Քրիստոսին, համարելով նրան երկնային (այսինքն քարի) Աստծու որդի, ինչպես մաև նրա երեշտակը:

Այդ, ակնհայտ են պալիկեյանների գաղափարական աղերսներն այլ շարժումների հետ. հոգևորականների դեմ ըմբոստության և պայքարի գաղափարը, որ սոջ միջնադարի ընթացքում զգալ է տվել իրեն, մենք արդեն հանդիպեցինք Մելիտի և Սիմափի շեյխի շարժումների անդրադարձներում: Ինչ վերաբերում է երկաստվածության գաղափարին, ապա այն հատուկ է եղել մաև մամիքեությանը, Սուրբամայի, Բարեքի շարժումներին:

Ի դեպ, Բարեքի աղանդավորական շարժումն առանձնապես նշելի է, քանի որ այն հիմք է տալիս խոսելու ոչ միայն գաղափարական աղերսների, այլև հայոց հետ նրա զինակցության մասին: Անդրկովկասում արար զոքալմբերը, որոնք ջանում էին ճնշել Աղվանից և Սյունյաց ֆեոդալների՝ Մաել իբն Սմբարի և Վասակի ապստամբությունը, պարտության են մատնվում Բարեքի զինակցության հետևանքով:<sup>23</sup> Հօր ու տևական այս աղանդավորական ապստամբությունը սկիզբ առավ Ատրպատականում և արագ տարածվեց հարևան երկրներում, ցնցելով խալիֆաթը: Բարեքը որդեգրել էր քուտանյանների<sup>24</sup> գաղափարախոսությունը, որոնց վրա խոր ազդեցություն էր ունեցել Մազդեպի շարժումը: Նրանք հետևում էին կրոնական հանդուրժողականության, բնության քարիքների օգտագործման հավասարության, հասարակության մեջ կնօջ իրավագործության գաղափարներին: Քուտանյանների հայացքները դեմ էին իսլամի սկզբունքներին, միաժամանակ՝ խալիֆաթին: Բարեքի ապստամբությանը մասնակցում էին ոչ միայն գյուղացիներն ու արհեստավորները, այլև՝ խալիֆաթից դժգոհ ֆեոդալները: Երբժու-

մը համակրանք էր գտնում տարբեր ժողովուրդների, այդ թվում և՛ հայերի կողմից: Երբ Բաքեցի ռազմական տևական հաջողություններին հաջորդում է տեղատվությունը, և երբ խալիֆ Մուքասիթը բոլոր ուժերը կենտրոնացնելով, ստիպում է Բաքեցին շարունակ մահամջել, վերջինս փախուստի է դիմում Հայաստան: Այստեղ Բաքեցի նկատմամբ համակիրների մեծ թիվն արդյունք էր արաբ իշխողների նկատմամբ հայ ժողովրդի ընդերքում գոյություն ունեցած մեծ ընդդիմության, և մեկ անգամ չէ, որ ընթատության ալիքն ավարտվել է ապստամբությամբ: Խալիֆաթի դեմ Բաքեցի զինված ուժերի կարիքն զգում էր հայ ֆեոդալական վերնախավը, որը ժամանակակից ռուսաց սօսագործելով Բաքեցի զինուժը, վերջինիս քաղաքում հետ դավաճանեց նրան, և վերոնիշյալ նույն Մահլ Իրն Սմբաթը 837թ. կալանեց Բաքեցին և հանձնեց խալիֆաթին: Բաքեցի սպանությունից հետո դեռ երկար շարունակվեց հսկայական ժողովրդականություն վայելող այս շարժման մասնակիցների և խալիֆաթի միջև դաժան ու համառ «երկյտեսությունը», որի ընթացքում մահապատժի ենթարկվեցին մեծ թվով քուռամյաններ: Ավելի քան երկու տասնամյակ խալիֆաթի տարածքներն ալեկոծած այդ շարժումը ճնշվեց, սակայն նրա թողած ազդեցությունը հարատևեց, ամենից առաջ, նրանով, որ սենց ժողովրդական լայն զանգվածների կենսահայեցողությունը, էլ ավելի ամրապնդելով դիմադրական շարժման գաղափարը և իր ավանդը բերելով Արևելքի շատ ժողովուրդների ազատագրական պայքարի ձևավորման գործին:

Ուշադրության արժանի է նաև 9-11-րդ դդ. Հայաստանում ասպարեզ իջած բռնդրական աղանդավորական շարժումը (Ա. Հովհաննիսյանի արտահայտությամբ՝ «եհեղափոխական ընդդիմություն»): Թոնդրակյանները մերժում էին քրիստոնեական եկեղեցու նվիրապետությունը, նրա խորհուրդները, ծիսակատարությունները, խաչապաշտությունը: Թոնդրակյանների աղանդապետը՝ Չարեհավանցին, Քրիստոսին համարում էր սուկ «մարգարե», այսինքն գտնում էր նույնը, ինչ՝ իսլամը: Չէ՞ որ Դորանի մեղինյան սուրաներում Հիսուսը ներկայացված է որպես մարգարե, որն անչափելիորեն ավելի բարձր է, քան իմն հրեական աստվածաշնչական մարգարեները:<sup>34</sup> Թոնդրակյանները սբահանջում էին կանանց և տղամարդկանց իրավահավասարություն, ժխտում էին հանդերձյալ կյանքի և հոգու անմահության գաղափարը, մարդու փրկությունը որոնում էին այս կյանքում, կոչ էին անում, որ վերացվեն ամեն բռնություն, անիրավություն, կեղեքում: Եվ այդ բոլորը՝ առանց եկեղեցու միջնորդության կամ ֆեոդալ իշխանության օգնության: Այն-հայտ է շարժման դասակարգային ուղղվածությունը, հակաֆեոդալական բնույթը:

Իրենց տնտեսական ու իրավական պահանջներով բռնդրակյան շարժմանը հար և նման էին այլ շարժումներ և՛ հայ, և՛ մահմեդական իրականության մեջ, ինչպես սրավիկյան, մեսադան (մոնեմեական), Բաքեցի, Մուքամ-նայի, Մազրաքի ևն:

Առանց շարունակելու անդրադարձը յուրաքանչյուր շարժմանն առանձին, փորձենք ամփոփել ադանդավորական շարժումների գաղափարական աղբյուրների դիտարկումը՝ խմբավորելով դրանք առանձին հարցերի շուրջ:

Հայ և մահմեդական ադանդավորների գաղափարամերձությունը դասակարգել է դավանաբանական, սոցիալ-տնտեսական, իրավական ոլորտներում: Նշելի է հատկապես սոցիալական անհավասարության մերժումը, որից թխտմ էին և գույքի, հարստության ժխտումը կամ սրանց հավասար բաժանման պահանջը: Այս բնույթը մասամբ իրագործվում էր համայնքների տեղիմամբ (յինչպես՝ Սերաստիայի «հերետիկոսական» համայնքները (4-րդ դ.)), որոնց տնտեսական հիմքը գույքային հավասարությունն էր, ասել է թե՛ մասնավոր սեփականությունից հրաժարումը:<sup>35</sup> Գործադրվում էին նաև առավել արմատական քայլեր, բնակչության ընչազուրկ շերտերը ռոքի էին ելնում և ադանդավորական շարժումը վերածում տնտեսական ու իրավական պահանջները հետապնդող պայքարի: Ունեորների սեփականազրկման, գույքի բռնազրավման գործողությունները հատուկ են եղել և՛ մահմեդական, և՛ հայ շատ ադանդավորական շարժումների (թոնդրակյան, պավիկյան, Բարբքի, Մուքաննայի, Միմավիի, Մազդաքի, Քուֆայի<sup>36</sup> ևն): Այս սկզբունքի ավելի չափավոր կերպն էր արհամարհանքը հարստության նկատմամբ (օր.՝ մանիքեականների կաղմից): Հավասարության պահանջների մեջ առանձին տեղ ունեւր կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցը, որ առաջ էին քաշում թոնդրակյանները, Բարբքը, Մազդաքը ևն:

Կրոնական նաևդորժողականությունը և տարագգի ադանդավորների միավորումն այս կամ այն ադանդավորական շարժման մեջ հանդիպում ենք Մեխլոտի (Հայաստանում), Միմավիի (Թուրքիայում), քուտամյանների (Իլյասում), Մուքաննայի (Միջին Ասիա, Խորասան) գանգվածային շարժումների պատմության մեջ:

Նավանաբանական հարցերում գաղափարամերձության օրինակներից է և երկաստվածության (դուալիզմը) ընդունումը, որ առկա էր դեռևս զրադաշտականների մոտ և ժամանակ առ ժամանակ ի հայտ է եկել միջնադարի ընթացքում Նվատաթիասի դեկավարած Սերաստացի «հերետիկոսների», պավիկյանների, Մանիի, Բարբքի, Մուքաննայի ադանդավորական շարժումների գաղափարախառնությունների մեջ:

Ընդհանուր ճանաչում է գտել նաև եռգո փոխանցման և մեսիանիզմի գաղափարը, որ դարերով կենսունակություն էր պահպանում տարբեր ժողովալուների մոտ (նշենք թոնդրակյաններին, քուտամյաններին ևն) և հարստու է ցարդ:

Ճգնակեցության (ասկետիզմի) տարբեր դրսևորումները, որոնցով արգելվում էին մտակերությունը, ամուսնությունը, բույսեր քաղելը ևն, այս կամ այն չափով հատուկ են եղել մանիքեությանը, մազդաքյաններին, մեդենականներին ևն: Վերջիններս առավել անհանդուրժող են եղել ամուսնության նկատմամբ և այն պղծություն են համարել: Եզնիկ Կորյացու դիտարկմամբ՝

նույնն են քարոզել Մանին, Ջրադաշտը, Մարկիոնը: Սեբաստացի «հեքստիկոսները» ևս մերժում էին ընտանիքը:

Ավելորդ ենք համարում կանգ առնել դարերու վիճամանցված զուտ արտաքին ընդօրինակումների վրա (որոշ աղանդապետների սպիտակ հագուստը, դիմածածկումը, 12 թվի սքրագումը ևն):

Համառոտակի անդրադառնալով այն հանգամանքներին, որոնցով պայմանավորված էր հայ և մանեղական աղանդավորական շարժումների միջև որոշակի աղերսների առաջացումը: Այս հարցը դիտարկելիս առաջին հերթին այլի է զարմում շարժումների դրոյապատճառների, ասել է թե՛ «հարուցիչներին» նույնությամբ կամ նմանությամբ: Արարական խալիֆաթի տիրապետության շրջանում շարժումների մեծ մասի համար որպես հարուցիչ է ներկայանում ինքը՝ խալիֆաթը: Բողոքն ու ընդվզումը նրա դեմ ծնվել են նրա հետ մեկտեղ, առաջին չորս խալիֆաներից երեքը սպանվել են ընդդիմության կողմից<sup>17</sup> Խալիֆաթի գրաված տարածքներում իսլամի տարածումն իրականացվել է ոչ միևնույն հաջողությամբ և հենց ի սկզբանե հանդիպել է ընդդիմադիր ուժերի: Հակահալամական պայքարի (կրոնական աղանդներ) հետ գրեթե միաժամանակ սկիզբ է առնում և դասակարգային պայքարը: 7-րդ դ.՝ խալիֆաթի կազմավորման արշալույսին արդեն զոյություն ունեց ընդդիմադիր կազմակերպություն, որը պայքարում էր համում շարքային մանեղականների շահերի՝ նվաճումներով ուժեղացած արիստոկրատիայի դեմ: Ի դեպ, դասակարգային պայքարն արտացոլվել է հենց հանդիսներում<sup>18</sup>, այսինքն՝ իսլամի գաղափարախոսության մեջ և գնալով ավելի խորացող հակաֆեոդալական շարժումներում: Խալիֆաթն ստիպված է լինում հարկային զիջումներ անել, դադարեցնել հալածանքները շիաների և այլ ընդդիմադիր խմբերի դեմ: Մակայն դա չէր կարող փրկել դրությունը: Ե՛վ Օմայան վերջին խալիֆ Մուլան II-րդի, և՛ նրան հաջորդած Աբբասյանների օրոք արաբական լուծը նվաճած ժողովուրդների վրա առավել ծանրացավ, մեծ չափերի հասան հարկերը, որոնք չլատում էին քնակչությանը և ուժ տալիս նրա ընդերքում աճող դժգոհության ու ընդվզումի տարերքին: Զմուռանալով, որ նվաճված ժողովուրդները քազմալեզու, քազմազգ, տարրակրոն հասարակական զամբվածներ էին, որոնք կրելով միևնույն լուծը, գրեթե միատեսակ պայքարի ձևեր էին գտնում՝ միջմադարյան պայմանների քերտմով, այն է՝ ապստամբություն այս կամ այն ընդդիմադիր աղանդի դրոյի ներքո: Այս պայմաններում էին զոյանում հայ մանեղական (նաև ընդհանրապես՝ արևելյան, նաև արևմտասելլուսաբան) աղանդավորական շարժումների միջև գաղափարական աղերսները, հանգեցնելով հար և նման ապստամբական պայքարի ձևերի (ընդհուպ մինչև կազմակերպական մանրամասներ):

Խոշոր աղանդավորական շարժումների պատմության մեջ այլի է զարմում ևս մի օրինաչափություն. շարժումներն իրենց հիմքում ունեցել են ավելի վաղ զոյություն ունեցած շարժումներին հատուկ գաղափարական սկզբունքներ: Օր.՝ 9-11-րդ դդ. ծավալված բուդդիստական, 7-9-րդ դդ. սլավոնական շար-



ժամների գաղափարական ակունքները գտնում ենք 5-րդ դ. Մարգարեան-  
կան Հայաստանում հանդես եկած մեսայանների և նույն ժամանակ Բյու-  
զանդական Հայաստանում տարածում գտած բորբոքիտների գաղափարա-  
կան սկզբունքներում: Եւայն երևույթն ակնբախ է մահմեդական աղանդավո-  
րական շարժումների պարագայում. ընդ որում, գաղափարական ընդհան-  
րություններ են առկա ոչ միայն մերիսլամական շրջանակներում, այլև վեր-  
ջիններիս և նախաիսլամական շարժումների միջև. և ըստ այդմ էլ հնարավոր  
է խոսել գաղափարական սերտ կապի մասին Ջրադաշտի, Մանիի, Մազդա-  
քի միջև:

Թեև Ա. Հովհաննիսյանն անցնողունելի է համարում մնամ մտեցումը,  
«զգնեռիկ հաջորդականության» մասին, սակայն իր իսկ քերտծ օրինակ-  
ներն ու վերլուծումները նույնն են վկայում: Այսպես, հենց միայն այն փաս-  
տը, որ բուդդայական աղանդապետ Միթատ Ջարեհտականցին նպատակ էր  
դրել ի մի քերելու իրենց առաջ և իր ժամանակի բոլոր աղանդավորական  
սկզբունքները, այլ խոսքով՝ իրրև իր նոր գաղափարախոսության ակունք օգ-  
տագործել անցյալի փորձը, խոսում է հաջորդականության թեզի օգտին: Ան-  
շուշտ, հասարակական-քաղաքական կենսապայմանների և դրանցից  
բխած խնդիրների ընդհանրությունը կարևորագույն պայմաններն իսկ կա-  
րող են կրկնվել պատմության ընթացքում, յուրաքանչյուր ժամանակ յուր-  
վի: Խոսելով 4-րդ դ. Փոքր Հայքում աշխատավորական լայն զանգվածների  
ընդլվզման հետևանքների մասին, Լ. Խաչիկյանն ընդգծում է, որ շարժման  
մշակած առաջավոր գաղափարները յուրացվեցին հայ ժողովրդի հաջորդ  
սերունդների կողմից:<sup>40</sup> Կամ՝ «Փոքր Հայքի շարժման գաղափարները այլ  
սոցիալական պայմաններում ժառանգում ու զարգացնում են մահ նրանց  
հետավոր սերունդները»:<sup>41</sup>

Ինչպես նշում է Հ. Բարթիկյանը, պավլիկյան շարժման գաղափարախո-  
սությունը մի ժամանակաշրջանի արգասիք չէր, և շատ քան նրա մեջ մուտք  
է գործել նախորդած աղանդավորական շարժումներից:<sup>42</sup> Օրինակները և  
հավաստիացումները մեծաթիվ են:

Ուրեմն, աղանդավորական շարժումների մեջ գաղափարական հաջոր-  
դականությունն ակնբախ է և հավատարմում է պատմությանը:

Վերջ դիտարկված և քազում այլ շարժումների բնույթը, իրրև կրոնական  
քողի տակ ընթացող դասակարգային պայքարի ձև միջմտղում, զալիս է  
փաստելու այն իդողությունը, որ կրոնական դրոշը, Էնգելսի այրոտանայտու-  
յամբ, ամենևին չի փոխում զործի էությունը, և դասակարգային շահերը հեշ-  
տությամբ քացատրվում են ժամանակի պայմաններով:

Ուստի միանգամայն տրամաբանական ենք զտնում, որ շնայած բոլոր  
ժամանակներում աղանդների շատ ցածր վարկամիչին, պատմազխտության  
մեջ միջնադարյան աղանդավորական-ապստամբական շարժումներին  
տրվում է «հեղափոխական» մակդիրը (ըստ Ա. Հովհաննիսյանի՝ «ուսույու-  
ցիան օպոզիցիա»): Իհարկե, քանն այն չէ, որ աղանդները եկեղեցու դավա-

նական հայացքներից խտորվելով, մերժում են եկեղեցու միջամտությունը հավատքի գործերում. սա դեռ «հեղափոխական ընդդիմություն» չէ: Այլ է, երբ կրոնական միատիկան և դավանաբանական խնդիրները կասկած են հակաֆեոդալական գործողությունների հետ, վերաճում ազգագրական շարժման: Այստեղ արդեն վերջինս ստանում է առաջադիմական նշանակություն և հենց այդպես էլ որակվում «պրոգրեսիվ»: Ըստ Ս. Մելիք-Քալաշյանի Միջմադարյան Հայաստանում աղանդավորական շարժումները ճնշված ու շահագործվող դասակարգերի մասնակցությամբ դառնում էին հեղափոխական-սոցիալական շարժումներ ուղղված ֆեոդալական հասարակարգի դեմ»:<sup>43</sup>

Սակայն, ոչ բոլոր պատմաբանների կողմից է դա նկատված: Քննադատական խոսք ուղղելով պատմաբան Լեոյին՝ աղանդավորական շարժմանն իրենախտական դիրքերից տված գնահատականի և ոչ գիտական մոտեցման համար, Լ. Խաչիկյանը գրում է, որ նա «չի կարողացել արժանի գնահատական տալ սծղնյանների պրոգրեսիվ (ընդգծումը մերն է - Լ. Դ.) շարժմանը»:<sup>44</sup>

Դիտարկենք մույն հարցը պարսից պատմագիտության մեջ: Իրանի հմուտ պատմաբաններից Էհսան Յարաբին, որն ընդարձակ աշխատություն է նվիրել Իրանի հասարակական շարժումներին<sup>45</sup>, խոսելով միջմադարյան մի շարք աղանդների և ժողովրդական շարժումների մասին (ինչպես՝ զինգների, խլամականների, դերվիշական շարժումների, «ետուֆիյե» կոչված աղանդի, բաքինների ևն), դրանք դիտում է որպես ազատագրական շարժումներ, որոնց հիմքում ընկած էին մասն ալ կողմեր, ամենից առաջ՝ գաղափարական-քարոչական: Պատահական չէ, որ մագդաբյան շարժմանը վերաբերող գլուխը նա սկսում է Ենյի Սոհամեդ Խիարբանիի և Ֆիքրուսու խոսքերից ընտրած քննաբաններով, որոնք ընդգծում են Իրանի ժողովրդի ազատատենչ ոգին: Այսպիսով, պարսից պատմագիտության ներկայացուցիչը ևս աղանդավորական-ապստամբական շարժումների մեջ տեսնում է տնտեսական խթան և ազատագրական գաղափարի դրսևորում, համարելով դրանք պրոգրեսիվ:<sup>46</sup>

Այսպիսով հայ և մահմեդական միջմադարյան աղանդավորական շարժումների միջև գաղափարական աղերսներն ակնհայտ են և արդյունք են սոցիալ-տնտեսական ու քաղաքական միևնույն կամ նման կենսապայմանների առկայության, մասն՝ հետապնդած նպատակների միասնության, իբրև ընդհանրություններ հակաֆեոդալական, ազատագրական շարժումներում և շահագործման, հարստահարման, ճնշումների դեմ պայքարի ձևերում:

Հարկ ենք համարում անվերապահորեն ընդգծել, որ այս կամ այն աղանդավորական դրոշի ներքո ծավալված միջմադարյան հակաֆեոդալական ապստամբություններին տրված հիշյալ գնահատականն ամենևին չի վերաբերվում ներկայիս աղանդավորական զանազան խմբերի ու հոսանքների գործունեությանը (ինչպես՝ քրիշնայականներ, Եհովայի վկաներ ևն): Պատ-

մությանը քաջ հայտնի են մեզն աղանդավորական քաղաքացիական հեռա-  
հար մպատակները, ներառյալ՝ լատինադական միսիոնարական տարբեր  
կազմակերպությունների (օր.՝ կարմելիտների) ծավալած փութաբան գործու-  
նեությունը՝ իրենից ցանցը մեքքաչելու այլակերտ ժողովուրդների, այդ թվում  
և՛ հայերին: Միջնադարյան դժնդակ պայմաններում հայերը նույնիսկ օտար  
ազիերում համառ պայքար են տարել կրոնափոխության դեմ, արժանապա-  
շով այսպիսի գնահատականի. «Հայերն իրենց կրոնի նկատմամբ այնքան  
մոլեռանդ ու հավատարիմ են, որ մրանց մտա այլ կրոնի մասին խոսել չի լի-  
նի» (Քրավերնյե):<sup>47</sup> Արդ, մեր հասարակությունը չպետք է արվի բոլոր տեսա-  
կի աղանդավորական քաղաքներին և մազաչափ ամզամ չպետք է խոտորվի  
հայ աստիճական եկեղեցու դարաւոր սկզբունքներից:

## SUMMARY

The medieval sectant-liberatory movements were in fact consequences of social struggle, their demands limited to social-economic and juridical ones. The study of these movements show a considerable number of similarities between Christian and Muslim sectant movements. Such movements as Paulician, Thondrakian, Mesalian, Mekhlu, Babek, Mukanna, Abu Muslim etc., mostly were based on one and the same ideological ground - dualism, denial of rich life, equality of sexes.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ս. Մելիք-Բախչյան, Պալիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953, էջ 232:
2. Այս առաջադեղում ուղագրով են՝ Ե. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդնե-  
րի ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, Հ. Բարբիկյան, Աղանդա-  
վորական շարժումները Հայաստանում ըստ միջնադարի հայ և օտար հեղինակների  
(4-5-րդ դդ.) (ՀԱՍՀ ԳԱ «Լրարբեր» հաս. գիտ., 1984, ք. 10), Լ. Խաչիկյան, Փոքր Հայ-  
քի սոցիալական շարժումների պատմությունից (4-րդ դ.), Երևան, 1951, և Տեր-  
Սկրոյան, Պալիկյանը Բյուզանդական կայսրության մեջ և մերձավոր երրվածա-  
յին երևույթներ Հայաստանի մեջ, Երուսաղեմ, 1938, Ս. Մելիք-Բախչյան, Պալիկ-  
յան շարժումը Հայաստանում, Երևանում, 1953, В. Беляев, Мусульманское сек-  
тантство, М., 1957; Я. Ленцман, Происхождение христианства, М., 1960; М.  
Томара, Бабек, М., 1936 ևն:

3. М. Томара, անդ, էջ 31:

4. Այսպես, մազդեականների պարտությունից հետո աղանդի երեք հազար հետևորդների դաժան խաչտանգումների ենթարկելով սպանեցին: Եվ քանի որ այդ խաչտանգումները հար և նման էին միջոցներին, որոնցով տանջամահ էին արվել մանկեքականները, վերջին անվանումը վերագրվում էր մաս մազդեականներին:

5. «Հայ ժողովրդի պատմության քրեատոմատես», հ. 1, Երևան, 1981, էջ 735:

6. Ա. Հովհաննիսյան, Գրվազնի հայ ազատագրական մտքի պատմության, գ. 1, Երևան, 1957, էջ 365:

7. Անդ:

8. 17-րդ դ. պատմիչ Ջաքարիա Սարկավազը (Ջանաքեղոցի) իր «Պատմագրություն» մեջ այս շարժման նկարագրությանն առանձին զտելու է հատկացրել՝ «Դիպուտանք շարաց ի տրա ժամանկի»: Լինելով հոգևորական, պատմիչն առավել ցավազին էր ընկալում հակակնիդեցական եղալքները, ուստի իր զրի տեղ կարողությամբ քանոմ էր նշակակել Մեխյու կոչված աշանդապետի և՛ զաղափարն ու զործը, և՛ անձը (տե՛ս - Ջաքարիա Սարկավազ, Պատմագրություն, Վաղարշապատ, 1870, հ. 1, էջ 47-53):

9. Օր.՝ 15-րդ դ. 40-ական թթ. Կիրակոս Վիրապեցի կարողեղևի կողմից սահմանվեցին կանոններ, որոնցով, իբր, պիտի կանխվեր կրոնավորների քառույթությունը: Հաղորդելով այդ մասին, Ա. Հովհաննիսյանն իրավամբ նկատում է, որ շքանով հագնվի թե՛ որևէ րան փոխվեց (տե՛ս Ա. Հովհաննիսյան, անդ, էջ 467-468):

10. Թուրքերն այդ աշանդապետին հորջորջում էին Մեխյու-բաբա (Ջաքարիա Սարկավազի երկի հրատարակչի բացատրությանը՝ «րևեստվոր հայր»), իսկ հայրը՝ Մեխյու վարդապետ: Այս անունը տարբեր մեկնարանումներ է ստացել, կապվելով «մեխ» կամ «տեղ» բառերի հետ:

11. Հազիվ թե Ջաքարիային հայտնի չէր Մեխյուի իսկական անունը, քայք նրա մասին ամբողջ պատմումի ընթացքում աղանդավորի դեմ գայրտյությամբ լրված պատմիչը ոչ մի անգամ չի հիշատակում նրա անունը, բավարարվելով մակամկամք և սկզբում «այր մի» արտահայտությամբ: Ի դեպ, Ա. Առաքելյանը Մեխյուին բյուրիմացարար կոչում է Աղվան, ելնելով Ջաքարիա Սարկավազի «այր մի ազգաւ Աղուան» արտահայտությունից (տե՛ս Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2-րդ, Երևան, 1964, էջ 562-563):

12. Ջաքարիա Սարկավազ, անդ, էջ 49:

13. Անդ:

14. Տե՛ս Ս. Արутչոյան, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, с. 124.

15. Տե՛ս Ա. Հովհաննիսյան, անդ, էջ 475:

16. Տե՛ս Գ. Ибрагимов, Крестьянские восстания в Турция в XV-XVII вв. («Византийский восточник», VII, с. 134) (ընդլում է ըստ Ա. Հովհաննիսյանի):

17. Մուրամնա՝ աջարերեն նշանակում է քոթով ծածկված: Մերվի քնակիչ արիստավոր Հաչիմ իբն Հաքիմն այս մակամկամք համոզու էր զայիս իբրև ազատամբության դեկավար:

18. Ա. Հովհաննիսյան, անդ, էջ 356:

19. Ե. Տեր-Մինասյան, անդ, էջ 109:

20. Տե՛ս անդ, էջ 92:

21. Հարծման հիմնադիրը՝ Մամին, ծնվել է մառ 215թ. Բարեւոմոս, իսկ քարոզչական գործունեությունն սկսել Քոնստանդնուպոլիսում 242 թ. (տե՛ս «Ասիայի և Ալեքսիայի երկրների միջին դարերի պատմություն», Երևան, 1973, էջ 104):

22. Ամբ, էջ 105:

23. Адам Меи, Мусульманский ренессанс, М., 1973, с. 250.

24. Ամբ, էջ 151:

25. Ինձ՝ երկու արժատ ոմնեղո, դրախտ:

26. Եզնիկ Կոջրացի, Եղծ աղանդոց, Երևան, 1970, «Հայ ժողովրդի պատմության քրեատմատիկա», էջ 823:

27. Ե. Տեր-Մինասյան, ամբ, էջ 92:

28. Պալիկյան շարժման վերաբերյալ առկա են մեծաթիվ հետազոտություններ, որոնց բնում է. Բարթիկյան, Պալիկյան շարժումը Հայաստանում 7-9-րդ դդ. («Հայ ժողովրդի պատմություն», Խ. II Երևան, 1984, էջ 389-415), որտեղ քիզված է շարժման մասին Ամրի Գրեզուարի, Հ. Բարթիկյանի, Է. Լիպչիցի, Ն. Գաբրյալյանի, Ե. Տեր-Մինասյանի և այլոց ուսումնասիրությունների քվարկումը:

29. Հ. Բարթիկյանն այդ հանգամանքը բացատրում է պալիկյան աղանդավորների դասակարգային և էթնիկական քաղաքացիական պայմաններում, որը պատճառ էր դարձել շարժման մերտուս երբեմն գլուխ քարքայացնող տարածայնությունների և ընդհանուր գաղափարախառնության մեջ տարբեր հասանքների առաջացման (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», էջ 399):

30. Պալիկյան շարժման գաղափարախառնության հանգամանալի դիտարկումը տե՛ս Հ. Բարթիկյան, Պալիկյան շարժման գաղափարախառնությունը («Լուսերթ» հաս. գիտ., 1979, թ. 8):

31. Այդ մասին Հ. Բարթիկյանը նշում է. «Հոգևորականները զտաղված էին գործառուներ պահելով, վաշխառությամբ, նրանք քահանա կամ նույնիսկ եպիսկոպոս էին ձևանալուով, հաղորդություն էին տալիս դեանով, ժամանակում թուրքական մեթոդաբանությունից կամ ծխալուծությունից և այլն» («Հայ ժողովրդի պատմություն», էջ 390):

32. Տե՛ս Ա. Հովհաննիսյան, ամբ, էջ 357:

33. Քառամյաններ կամ խուսամիներ՝ պարս. (Խուսամի) բառից, որը նշանակում է ուղախություն, զվարթություն, կենսաուղախություն: Այս աղանդավորները մաքրակենցաղ էին, գիր ու զբաղանություն սիրող, իսլամի սկզբունքներին ընդդիմացող:

34. Ե. Տեղես, ամբ, էջ 12:

35. Լ. Խաչիկյան, ամբ, էջ 51:

36. 685 թ. Քուֆայում շիիզմի դրոշի տակ սկսված ապստամբությանը ժամանակացում էին արաբները և պարսիկները, որոնք հարձակվում էին տեղի մեծահարուստների վրա: Նրանց նույնիսկ հաջողվեց որոշ ժամանակով գրավել Քուֆան:

37. Ե. Տեղես, ամբ, էջ 17-18:

38. Հաղիսներ՝ ինձ մուսուլմանական ավանդության՝ սուննայի, քաղկացուցիչ մասեր:

39. Ա. Հովհաննիսյան, ամբ էջ 355:

40. Տե՛ս Լ. Խաչիկյան, ամբ, էջ 83:

41. Ամբ, էջ 82:

42. Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», էջ 398-399:

43. Ա. Մելիք-Բախչյան, Պալիկյան շարժումը Հայաստանում, էջ 232:

44. Լ. Խաչիկյան, ամբ, էջ 74:

45. Էռան Թադևոսի, Հետազոտություն որոշ հասարակական շարժումների և գաղափարախոսությունների մասին Իրանում, Թեհրան, 1348 (հեջրի), 406 էջ (պարսկերեն):

46. Անդ, էջ 240. Թարաթին իր միտքն ապացուցում է մոտավորապես «հոտուլի»-յն աղանդի օրինակով:

47. Իրանախաղի աշխարհաչքի և վաճառական Ժամ Բափթիսթ Թավերնին սկսած 17-րդ դ. 30-ական թթ. երկար տարիներ եղել է Իրանում և իր տպավորություններն ամփոփել «ճամփորդագրքում»: Մենք օգտվել ենք գրքի պարսկերեն թարգմանությունից (Թավերնին, ճամփորդագիրք, Թեհրան, 1321 (հեջրի), էջ 81):

**ԱՐՈՒ- Լ ՖԱՐԱՋ ԳՐԻԳՈՐԻՈՍ ԻԲՆ ԱԼ - ԻԲՐԻԻ  
(ԲԱՐ ՉԵԲԲԵՆՈՍ) ԱՐԱՐԱԼԵԶՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՉԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Քրիստոնյա արաբական և ասորական մատենագրության խաչոր ներկայացուցիչ և նշանավոր պատմիչ Աբու-լ Ֆարաջ Գրիգորիոս (Յուհաննա) Իբն ալ-Իբրիի (1226-1286) պատմական ժառանգությունը վաղուց է զբաղել արևմտյան և արևելյան հետազոտողների ուշադրությունը: Նրա՝ ասորիքն լեզվով գրած «Համընդհանուր (տիեզերական) պատմությունը»՝ «Մախբեք-համուս զարհնեն» (քառօցի՝ ժամանակագրություն, արաբական պատմագրության մեջ հայտնի է «Թարքիխ աղ-զաման» (ժամանակագրություն) խորագրով) կազմված է երկու մասերից: Առաջին մասը՝ «Աշխարհիկ (քաղաքական) պատմությունը» Եվրոպայում հայտնի է «Ասորական ժամանակագրություն<sup>1</sup>», իսկ 2-րդ մասը՝ «Եկեղեցական ժամանակագրություն<sup>2</sup>» անուններով, որոնք 18-19-րդ դարերում թարգմանվել են լատիներեն, իսկ ալիքի ու՝ Ասորական ժամանակագրությունը թարգմանվել է մաև անգլերեն<sup>3</sup> և արաբերեն<sup>4</sup> (նատվածաբար):

Թեև Աբու-լ Ֆարաջի «Համընդհանուր պատմության» երկու մասերը վաղուց են թարգմանվել և դարձել եվրոպացի հետազոտողների ուսումնասիրության առարկա, սակայն մինչև օրս դրանք պատմագիտական և աղբյուրագիտական վերլուծության չեն ենթարկվել:

Աբու-լ Ֆարաջի վերոհիշյալ «Ասորական ժառանգությունը» (Քաղաքական պատմությունը), որը գիտության մեջ հայտնի է մաև որպես հեղինակի «Աշխարհիկ պատմության» ընդարձակ խմբագրություն, դեռևս 1286թ. հենց հեղինակի կողմից «Ազնվական արաբների», հավանաբար, զրչակից ընկերների և տեղի (Իրանի Մադադա քաղաքի) իշխանավորների խնդրանքով, թարգմանվել էր արաբերենի: Իսկ նրա քննադիրը գիտության մեջ հետազայում հայտնի է դարձել որպես «Աշխարհիկ պատմության» համառոտ խմբագրություն<sup>5</sup> (Արաբական խմբագրություն) ստանալով «Թարքիխ մախ-

քասար աղ-դուվալ» (ավելի ճիշտ է՝ «Մուխրասար ֆի աղ-դուվալ») «Գինաստիանների համառոտ պատմություն» խորագիրը: Սիս «Աշխարհիկ պատմության» այս արարական խմբագրությունը դեռևս 17-րդ դարի կեսերին քարգմանվել էր լատիներենի և հրատարակվել Օքսֆորդում (1663 թ.)<sup>6</sup>, իսկ ավելի ուշ՝ Անտոն Սալիհանիի կողմից<sup>7</sup> կազմվեց նրա քննական քննազիշը և հրատարակվեց Բեյրութում 1890թ., ապա վերահրատարակվեց դրա սրբագրություն-ժամոթագրություններով 1958թ. և 1983 թթ. Բեյրութում<sup>8</sup>:

Արու-1 Ֆարաջի աշխարհիկ (քաղաքական) պատմության արարական խմբագրության աղբյուրների կազմը պարզելու համար միայն և առաջ պետք է ճշտել Ասորական ժամանակագրության աղբյուրների շրջանակը, որը, ըստ էության, ընկած է մահ արարական ժամանակագրության հիմքում, քանզի վերջին ժամանակագրությունը շարադրվել է հենց Ասորական ժամանակագրության քարգմանության, նրա քննազրի վերամշակման և նոր աղբյուրների նյութերի օգտագործման հիման վրա: Այսպես, արարական խմբագրությունը շարադրելիս հեղինակը օգտագործել է մահ Մարադայի (Իրան) զբաղաբանում եղած արաբերեն, պարսկերեն և ասորերեն նոր պատմական երկերի ծնագրերը, ինչպես մահ մոնոլոգական (ուղղորդական) կարևոր պաշտոնական և դիվանագիտական այնպիսի փաստաթղթեր, որոնք առնչվել են մոնոլո (ոլիսանական) տիրակալների կողմից քրիստոնեության ընդունման և ժամանակի նրանց ռազմաքաղաքական ու դիվանագիտական գործունեության հետ: Բացի դրանից, հեղինակը որպես շատ դեպքերի ականատես-մասնակից և ժամանակակից աշխատության մեջ ընդգրկել է իր եկեղեցական ու դիվանագիտական շխտմաների դիտարկումները, նկարագրությունները և զննատականները<sup>9</sup>:

«Համընդհանուր պատմության» առաջին մասը՝ աշխարհիկ պատմությունը կամ Ասորական ժամանակագրությունը Արու-1 Ֆարաջը սկսել է գրել 1276թ., ընդ որում, հեղինակը նախապես մտադրվել էր շարունակել Միքայել Ասորու (1226-1199) ժամանակագրությունը, որը իր շարադրանքը հասցրել էր մինչև 1196թ. դեպքերը<sup>10</sup> և շարադրել դրանից հետո 80 տարիների ընթացքում (1196-1276) տեղի ունեցած դեպքերի պատմությունը<sup>11</sup>: Ավարտելով վերջին 80 տարիների քաղաքական պատմության շարադրանքը, Արու-1 - Ֆարաջը սկսեց հետ զնալ՝ շարադրելով մահ ավելի հին շրջանի պատմությունը և որպես հիմք օգտագործեց Միքայել Ասորու հայտնի ժամանակագրությունը<sup>12</sup> Կազմելով իր «Համընդհանուր պատմությունը», հեղինակը հատուկ տեղ հատկացրեց հեթանոսական շրջանի պատմությանը՝ արարագործությունից սկսած մինչև իր մահվան տարին՝ 1286թ., օգտագործելով Միքայել Ասորու ժամանակագրությունը, ինչպես մահ այլ ասորի, արաբ, պարսիկ և բյուզանդացի պատմիչների երկերը:

Այսպիսով, Արու-1 Ֆարաջի, ինչպես ասորական, այնպես էլ արարական ժամանակագրության («Մուխրիս մուխրասար աղ-դուվալ») առաջին և զվտավոր սկզբնաղբյուրը Միքայել Ասորու ժամանակագրությունն է, որը շարադր-



վել է, գլխավորապես, հակերիկ ասորիների (միաբնակ) համար՝ էքմոդավանական և, աշխարհայացքային հատուկ նպատակներով, այն է՝ նիշեցնել իր ազգային պատմությունը, հարուստ ճշակույթը և ինքնատիպ լեզուն, որոնք կազմում են նրա ինքնությունը քաղաքացիությանը և դրանով՝ հոգևոր սնունդ մատակարարել՝ իրենց ազգային ինքնությունը պահպանելու նպատակով: Սակայն արաբական ժամանակագրության մեջ նա աստպնորդվել է այլ քաղաքական, էքմոդավանական ու աշխարհայացքային նկատառումներով և որպեսզի նպատակներ է հետապնդել, այն է՝ մահմեդական արաբներին և իսլամական աշխարհին ցույց տալ քրիստոնյա հակերիկ ասորիների այն փաստացի մեծ ներդրումը, որը նրանք կատարել են արաբ-մահմեդական ճշակույթի և գիտության զարգացման ու բարգավաճման գործում, քանզի ասորի ճշակույթային գործիչները յուրատեսակ կապող օղակ դարձան եելիե-նական ճշակույթի և իսլամի միջև և հելլենական ճշակույթը արաբական մտքին մատուցեցին ասորական տարբերակով<sup>13</sup>:

Հետևելով բյուզանդական ու արաբ-մահմեդական պատմիչներին Աբու-լ Ֆարսը իր ժառանգությունը՝ «մարիխ մուխրասար ալ-դուվալը» քաժանեց տասը անհամամասնական գլուխների (Ֆասլ), որոնցից յուրաքանչյուրը ընդգրկում է մեկ համաշխարհային քազավոդության (պետության) պատմությունը և, կլնելով քրիստոնեական տերմինաբանությունից, այն անվանեց «Դասուլա» (դինաստիա)<sup>14</sup>: Այնուհետև յուրաքանչյուր գլուխ կառուցված է ժամանակագրական կարգով ըստ կառավարիչների տիրակալության:

Համաշխարհային (տիեզերական) պատմության քաժանման համակարգը ըստ դինաստիաների (դասուլաների) և ենթաքաժանումը ըստ կառավարիչների քավական էին է և տարածված, ինչպես արևելյան, այնպես էլ հունա-բյուզանդական պատմագրության մեջ: Իրանական պատմական ավանդաբանությունը (պատմագրությունը) պատմությունը քաժանում է ըստ կառավարիչների գահակալության, որովհետև պարսից պատմիչները կառավարչի և քաղաքական ղեկավարության (սղմինխտրագիայի) բարդական հատկանիշները համարել են պատմության կարևորագույն տարրեր, որի իսլամական պատկերաստեսակը արտահայտվել է քաղաքական և վարչական ինդիքների նկատմամբ դրսևորված հատուկ ուշադրությամբ<sup>15</sup>: Հայտնի արևելագետ Յ. Ռօզենբալի կարծիքով, «Դասուլայի» (դինաստիայի) գաղափարը իրանական հասարակայնության մեջ ավելի խոր արմատներ ունի և այն մարմնավորում է էին իրանական ազգային և շիական իդեոլոգիան: Պատմական նյութի մասնատումը արաբ-մահմեդական պատմագրության մեջ ըստ «դինաստիաների» և կառավարիչների, հավանաբար, կատարվել է իրանական պատմական ավանդության ազդեցության ներքո<sup>16</sup>: Համենայն դեպս, պատմագրական երկերի արաբ հեղինակները ընդօրինակեցին նման երկերի, իրականում, պարսկական մոդելը<sup>17</sup> հավանաբար, պահպանելով նրանց կառավարված արաբական բարգձմությունների միջոցով (Ց-դո դ.)<sup>18</sup>: Պատմական նյութի քաժանումը ըստ «դասուլաների»<sup>19</sup> և կառավարիչների արա-

քական պատմագրություն մուտք գործեց 8-րդ դարում<sup>20</sup> և «դասուլա» տերմինը սկսեց գործածվել դիմաստիայի (կատավարող ընտանիքի) իմաստով 8-9-րդ դդ: Թեև 9-րդ դարում ըստ «դասուլաների» պատմագրական երկերի կատուցումը սկսեց ավելի հաճախ հանդիպել արարալեզու (ծագումով պարսիկ) պատմիկների երկերում<sup>21</sup>, սակայն Աբու-լ Ֆարաբի մոտ պատմական նյութի մասն կատուցումը ավելի շուտ սկիզբ է առնում բյուզանդական պատմագրական ավանդությունից:

Բյուզանդական պատմագրական ավանդության ազդեցությունը Աբու-լ Ֆարաբի արարալեզու ժամանակագրության մեջ արտահայտվել է շարադրանքի կատուցման (սխեմայի), նյութերի հաջորդականության և իրադարձությունների պարբերացման եղանակի մեջ: Չափանորին ժամանակագրությունը բաժանված չէ նախախաղանակալի և բուն իրադանակալ պատմության ժամանակաշրջանների, ինչպես, սովորաբար, ամուսն են մանմեղական արար եղիմակմերը, այլ ընդհակառակը՝ այն պահպանում է քրիստոնեական պատմագրության հայր, խոշոր եկեղեցական պատմիչ և բյուզանդական մատենագիր Երևերիտս Կեսարացու (265-339), Անանիոս Ալեքսանդրացու (4-րդ դարի կեսը) և Պանդարոսի կողմից մշակված պարբերացման սկզբունքը, որի համաձայն ընդհանուր պատմությունը կազմված է այն ժողովուրդների պատմություններից, որոնք նկարագրված ժամանակաշրջանում աշխարհում առաջատար դեր են խաղացել: 'Դասնք են՝ երբայացի (երեւա), քաղղեսացի (կամ քարեղեմական), մարական (մեդիական), պարսիկ, հույն (մակեդոնական) և հռոմեական թագավորությունները: Ժողովուրդների (կամ թագավորությունների) այս կազմը, որոնց պատմությունը Աբու-լ Ֆարաբը շարադրում է, մոտ է այն կազմին, որը տրվում է բյուզանդական պատմագրական երկերում և հենվում է Երևերիտս Կեսարացու ավանդության վրա:<sup>22</sup>

Դեռևս 19-րդ դարի 80-ական թվականներին գերմանացի հայտնի գիտնական Գեյցերը ասացուցել էր, որ Աբու-լ Ֆարաբի ինչպես արարալեզու, այնպես էլ ասորական ժամանակագրության հիմքում ընկած է այն սկզբունքը, որը սկիզբ է առել Սեքստոս Հուլիոս Աֆրիկանոսի «Ժարոնեգրաֆիայի» ժամանակագրական հիմքից:<sup>23</sup> Հետագայում այդ աշխատությունը մշակվել է Երևերիտս Կեսարացու, Անիանոս Ալեքսանդրացու և Պանդարոսի կողմից և դարձել է Բյուզանդիայի, Արևելքի և Արևմուտքի բոլոր քրիստոնեական ժամանակագրությունների հիմնական աղբյուրը<sup>24</sup>: Ուստի հետագատող Ն. Սերիկովի կարծիքով, Աբու-լ Ֆարաբի արարական ժամանակագրության «Հին» աշխարհի պատմության (առաջին ութ գլուխները) սյուժետա-ժամանակագրական միջուկը, ընդհանուր գծերով, սկիզբ է առնում Սեքստոս Աֆրիկանոսի, Անիանոս Ալեքսանդրացու և Երևերիտս Կեսարացու երկերից<sup>25</sup>:

Երևերիտս Կեսարացին միացնում է աստվածաշնչային-քրիստոնեական և հեթանոսական պատմությունը, ընդ որում նրա պատմական հայեցակարգի հիմքում ընկած է այն թեզը, որ պատմությունը պետք է համընդհանուր (ունիվերսալ) լինի:

Այս հայեցակարգը ընկալվեց միջնադարյան ժամանակաշրջանում և համընդհանուր (տիեզերական) պատմությունը դարձավ միջնադարյան պատմիչների խոսքը<sup>26</sup>: Եվսերիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը», «Ժամանակագրությունը» և այլն ստեղծեցին պատմության ընկալման քրիստոնեական ժողով, որը լայնորեն կիրառվեց միջնադարյան պատմագրության սրբակոչկայում<sup>27</sup>: Այդ մոդելին հետևեցին 9-13-րդ դդ. գրեթե բոլոր ասորի և քրիստոնյա արաբ մատենագիրները (Ագասեոս, Եվտիմեոս, Յահյա Ամոտիցացի, Միքայել Ասորի և այլն) և մասնավորապես Աբու-լ Ֆարաջ Իբն ալ-Իրրին, որը իր աշխատությունը շարադրելիս հետևել է բյուզանդական պատմագրական ավանդույթումը և իր ժամանակագրությունը բաժանել է 10 համաշխարհային քաղաքությունների (10 գլխիներ), իսկ ամեն մի քաղաքություն (կամ դինաստիայի) պատմությունը տրվել է ժամանակագրական կարգով՝ ըստ կառավարիչների: Եվսերիոս Կեսարացին նույնպես իր «Ջրոնոգրաֆիա» աշխատության մեջ պատմական իրադարձությունները հաշվարկում կամ բվագրում է անտիկ շրջանի հույն պատմիչների օրինակով՝ ըստ կայսրերի գահակալության<sup>28</sup>:

Հետևելով բյուզանդական և արաբ-մահմեդական պատմիչներին, Աբու-լ Ֆարաջը իր ժամանակագրության շարադրանքը բաժանում է երկու համաշխարհային դարաշրջանների՝ մինչև վերջին հայտնությունը և դրանից հետո ընկած դարաշրջանը: Ընդ որում, բյուզանդական և մահմեդական տարեգրքները երկրորդ դարաշրջանի սկիզբը հստակ են արձանագրել (այն համընկնում է բյուզանդական կայսր Կոնստանդին Մեծի (304-337) կողմից քրիստոնեության պաշտոնական ընդունման ժամանակի կամ էլ իսլամի ծագման ժամանակի (7-րդ դ.) հետ՝ (մահմեդական պատմիչների մոտ): Մակայն Աբու-լ Ֆարաջի մոտ այդ հստակությունը բացակայում է, և կարծես քե երկրորդ դարաշրջանի սկիզբը երկու անգամ է ընդգծվում՝ քե՝ Կոստանդին Մեծի կողմից քրիստոնեության պաշտոնական ընդունման դեպքերի մեջ և քե՝ արաբա - մահմեդական բուն պատմության սկզբում (զրույց Մուհամմեդի մասին)<sup>29</sup>:

Աբու-լ Ֆարաջի մոտ առաջին դարաշրջանը ծավալային առումով ընդգրկում է ութ գլուխ (ժամանակագրության մեկ երրորդ մասը), իսկ 2-րդ դարաշրջանը՝ երկու գլուխ, այսինքն՝ երկու երրորդ մասը: Աշխատության գլուխների այսպիսի անհամաչափությունը պայմանավորված է բյուզանդական և արաբ-մահմեդական պատմագրության և, մասնավորապես, տիեզերական քրոնիկոնների բնույթը առանձնահատկությամբ<sup>30</sup> (օրինակ, ըստ դինաստիաների և կառավարիչների քրոնիկոնների կառուցման փաստը):

Աբու-լ Ֆարաջի «Ջարիխ մուխթասար ալ-դուվալ» արաբական ժամանակագրության աղբյուրների կազմի մասին կարող ենք գաղափար կազմել մախ և առաջ նույն հեղինակի «Ասորական ժամանակագրության» առաջաբանից, որտեղ մասնավորապես նկատակվում են Միքայել Ասորին (1126-1199), Եվսերիոս Կեսարացին (265-339), Սուկրատ Մյալաստիկոսը (380-

440), Ջաքարիա Հոստորը (մտա 480-560), Հովհան Ասիացին (Երեսնացի 507 - 586), Դիոնիսիոս Տալ-Մահրացին (մահ. 845թ.) և Անանիոս Ալեքսանդրացին (4-րդ դարի կեսեր) ասորի և բյուզանդական պատմիչները: Մակայն բուն ժամանակագրության մեջ Աբու-լ Ֆարաջը վկայակոչում է նաև Հակոբ Երեսնացու (640-708), Սեքստոս Հուլիոս Ալքիկլանոսի (3-րդ դ.), Հովսեփոս Փլավիոսի (37-102), Թեոփիլոս Երեսնացու (մահ. 785), Իզմատիոս Մալաքիացու (մահ. 1050), Մարիթ իբն Կուտոս Սարայեցու (մահ. 900թ.), Յուզվա Ստիլիսի (Մյումյակյաց - 6-րդ դ.), Պրոփիրիոսի (232-304), Գրիգոր Նյուսացու (341-395), Բարսեղ Կեսարացու (329-379), Կասպարոսվազի Հայրերի, և այլ մատենագիրների երկերը<sup>31</sup>: Բացի դրանից, Աբու-լ Ֆարաջը հաճախակի եղում է Հին (Սեպտուագինտա) ու Նոր Կուակարանները և Սամարական Հնգամատյանը:

Տարաբնույթ աղբյուրների այս կազմը հիշատակվում է նաև Աբու-լ Ֆարաջի արարական ժամանակագրության մեջ, որին կարելի է ավելացնել պատմիչ Անդրոնիկոսի ու հունա-բյուզանդական գիտության ու մշակույթի այլ գործիչների երկեր (օրինակ Հերմես Տրիսմեգիստոս, Ապպոլոնիոս, Էվկլիդես, Արքիմեդ և այլն)<sup>32</sup>: Վերոնիշյալ ասորի և հունա-բյուզանդական հեղինակների երկերը Աբու-լ Ֆարաջը տարբեր ուղղակի և անուղղակի եղանակներով է օգտագործել իր ժամանակագրության «Հին» աշխարհի պատմության ութ գլուխներում:

Ուսումնասիրելով Աբու-լ Ֆարաջի «Հին» աշխարհի պատմության նյութերը՝ արարչագործությունից մինչև Մովսես մարգարեի կողմից իշխանության փոխանցումը Հիսուս Նախինին և համեմատելով դրանք հունա-բյուզանդական հեղինակների երկերի համապատասխան հատվածների հետ (Մինկե, Ամադրոս, Կեղեքիոս, Մաննասա և Ջատկական քրոնիկոսները), ռուս հետազոտող Ն. Մերիկովը հանգել է այն եզրակացության, որ երկու դեպքում էլ համընկնում են շարադրանքի համակարգը և նյութերի հաջորդականությունը: Բացի դրանից, նա նկատել է, որ Աբու-լ Ֆարաջը օգտագործել է ոչ միայն Մուրբ Գրքերի Կանոնական քննադրերը (հունական խմբագրությամբ՝ յոթամասնից և համառոտ), այլև պարականոն գրքերի նյութերը (Փոքր ծննդոց, Այամի վարքը և այլն)<sup>33</sup>: Ուղղակի կամ անուղղակի նա նյութեր է քաղել հունա-բյուզանդական պատմիչների երկերից, որոնք որոշակի հետք են թողել իր ժամանակագրության վրա, այն է՝ իրադարձությունների պարբերացման ժամանակագրական հիմքը և շարադրանքի հաջորդականության բյուզանդական սխեման և արտացոլում են աշխարհակառույցի, կենցաղի և պատմության ընթացքի մասին պատկերացումների բյուզանդական համակարգը<sup>34</sup>:

Անդրադառնալով Աբու-լ Ֆարաջի «Թարիխ մուխթատար ալ-դուվար» ժամանակագրության աղբյուրների խնդրին, Ն. Ի. Մերիկովը նշում է, որ Աբու-լ Ֆարաջը իր աշխատությունները շարադրելիս չի հիշատակել շատ աղբյուրներ, որոնցից նա օգտվել է և ընդհանկառակը՝ նա հիշատակել է այն-

սցիսի աղքատներ, դրոնցից մա երբեք չի օգտվել և տեղեկություններ չի քաղել: Բացի դրանից, հեղինակը օգտագործել է ինչպես քրիստոնեական (Խոյն, ասորի), այնպես էլ արաբա-մահմեդական հեղինակների այն գործերը, որոնք տեղեկատվական քննյք ունեն: Արու-յ Ֆարաջի աշխատության հին աշխարհի պատմության շատ հատվածներ ուղղակիորեն քաղված են 10-րդ դարի պատմիչ Մատուդիի և Բիբունիի աշխատություններից, իսկ հետաքրքրություն ներկայացնող սյուժեները շարադրելու ժամանակ մա հաշվի է առել Տարարիի (10-րդ դ.) և Իբն ալ-Ասիրի (13-րդ դ.) մեկնարամությունները և զմեհատակամները:

Ընդհանուր տեղեկատվական կամ կենսա-մատենագիտական քննյքի տեղեկությունները Արու-յ Ֆարաջը քաղել է Իբն ալ-Նադիմի «ալ-Ֆիհրիսթ» (10-րդ դ.), Իբն ալ-Կիֆտիի (1172-1248) «Ֆարսիխ ալ-Հուքամա» (Խորագիտակների պատմություն) և ալ-Աբիի «Հարված մարգարիտների մատյանից», որոնք սակայն չեն հիշատակվում այդ աշխատության աղբյուրների մեջ: Վկայակոչված հեղինակներից մա հիբրավի տեղեկություններ է քաղել Սալիդ ալ-Անդալուսիի (1029-1070) «Տարակաթ ալ-ումամ» (Ազգությունների սերունդներ) և կենսագիր Իբն ալ-Կիֆտիի «Ֆարսիխ ալ-խուքամա» աշխատություններից, իսկ վերջին աղբյուրից մա նյութեր քաղել է այնտեղ եղած հղումների հետ միասին<sup>26</sup>: Բացի դրանից, Արու-յ Ֆարաջը, տեղեկություններ տալով բյուզանդական և արաբա-մահմեդական ժամանակագրություններում եղած ընդհանուր սյուժեների մասին, հաճախ օգտագործում է միայն մահմեդական երկերին քննորդ դարձվածքներ ու քառակապակցություններ<sup>27</sup>: Դրա հետ միասին, Արու-յ Ֆարաջի ժամանակագրության շատ սյուժեներ զուգահեռներ չունեն ո՛չ բյուզանդական և ո՛չ էլ արաբա-մահմեդական ժամանակագրությունների մեջ: Բացի դրանից, Արու-յ Ֆարաջի հին աշխարհի պատմության շատ սյուժեներ քեև ունեն համապատասխան տարբերակներ կամ բյուզանդական կամ արաբական պատմագրական ավանդությունների մեջ, սակայն դրանք փոխառված չեն ո՛չ բյուզանդական և ո՛չ էլ արաբական քրոնիկոններից, ինչպես սպասվում էր, քայք դրանց հետ ունեն կառուցվածքային ընդհանրություն<sup>28</sup>:

Արու-յ Ֆարաջի ժամանակագրության աղբյուրների խնդրին է անդրադարձել մաև Միքայի և համայն Արևելքի հակորիչ ասորական նկեղեցու առաջնորդ, պատրիարք Իզմատիոս Եփրեմ Ա Բարսումը, որը պարզապես քվարկում է ասորական, արաբական և պարսկական աղբյուրների առկայությունը այդ աշխատության հիմքում և չի խորհում այդ խնդրի մեջ: Սակայն ասորական աղբյուրներից մա նշում է Հակոբ Ուտհայեցու (Եղիսացու 640-708) և Միքայել Ասորու ժամանակագրությունները<sup>29</sup>:

Անդրադատմալով քրիստոնյա արաբ մատենագիր Ազապիտի (10-րդ դ.) «Տիեզերական պատմությանը», անվանի ռուս արաբագետ Վ. Ռոզենը<sup>41</sup> նշել է, որ, ինչպես Արու-յ Ֆարաջի և Ջիբջիխ ալ-Մաքիև Իբն ալ-Ամրի (13-րդ դ.), այնպես էլ Միքայել Ասորու աշխատությունների համար տեղեկություններ

քաղեղու և համատուելու կարևոր աղբյուր է ժառանգել վերոհիշյալ հույն մեղքիտ եպիսկոպոս Ազապիտի կամ Մահրոս ալ-Մամրիցիի «Քիթաբ ալ-Ռահ-վան» արաքաղեղու տիեզերական ժամանակագրությունը: Մակայն այդ ժամանակագրության 7-13-րդ դարերի պատմության համապատասխան հատվածների համեմատությունը Արու-լ Ֆարաջի աշխատության հետ, ցույց է տալիս, որ Ազապիտի նշված աշխատությունից Արու-լ Ֆարաջը չի օգտվել և ամհավանական է թվում, որ ստորական հակոբիկ (միաբնակ) եկեղեցու առաջնորդ Արու-լ Ֆարաջը իր տեղեկությունները քաղեր հույն մեղքիտ (երկաբնակ) եպիսկոպոս Ազապիտի ժամանակագրությունից, քեկուգ դավանաբանական նկատառումներով: Հունադավան (երկաբնակ) մեղքիտները ընդունել էին քաղեղեղուական ուսմունքը, հարել ըյուզանդական պաշտոնական եկեղեցուն և հաճախ ասորական հակոբիկ եկեղեցու հետ դավանաբանական պայքարի մեջ էին: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արու-լ Ֆարաջը իր թե՛ ասորական և թե՛ արաքական ժամանակագրությունները շարադրելու ժամանակ որպես սկզբնաղբյուր չի օգտագործել հունադավան մեղքիտ արաքաղեղու մատենագիտների (Եվտիմիոսի կամ Սայիդ իբն Բատրիկ, Յահյա Անտիոքացի և այլն) պատմագրական երկերը<sup>42</sup>:

Իրսեղով Արու-լ Ֆարաջի պատմագրական ժառանգության մասին, հայտնի աղբյուրներից ասորագետ Ռ. Հուսեյնովը<sup>43</sup> նշում է, որ Արու-լ Ֆարաջի «Թարիխ մուխրասաթ ալ-դուվալ» ժամանակագրությունը հույն հեղինակի ասորական ժամանակագրության համատու արաքերեն շարադրանք է, որը սակայն ավելի շատ աստվածաշնչային և արաքական բժշկագիտական, մաթեմատիկական և պատմագրական նյութեր է պարունակում, քան ասորական բնագիտը: Մակայն նրա աղբյուրներից նա նշում է Միքայել Ասրու թե՛ հասած ժամանակագրությունը և թե՛ կրթած «Եկեղեցական պատմությունը»<sup>44</sup>:

Իրսեղով «Թարիխ մուխրասաթ ալ-դուվալի» աղբյուրների մասին, հայտնի ֆրանսիացի արևելագետ Կ. Կահենը նշում է, որ Արու-լ Ֆարաջը օգտագործել է նախորդ արաք, ասորի և պարսիկ պատմիչների երկերը, սակայն արաք պատմիչների շարքում առաջին տեղն է գրավում Իբն ալ-Ասիրի աշխատությունը, իսկ սելջուկների պատմության շարադրման համար նա լրացուցիչ բաղդադյան աղբյուրներ է օգտագործել, մանավանդ այն պատմիչների երկերը, որոնք միևնույն ընտանիքից են սերում, ինչպիսին Սիբու իբն ալ-Ջաուզին<sup>45</sup> (1186-1257): Յակոբ, Սիբու ալ-Ջաուզիի համաշխարհային պատմությունը մինչև օրս ամբողջական տեսքով չի հրատարակվել, սակայն պահպանված և հրատարակված մասերի համեմատությունը Արու-լ Ֆարաջի նշված աշխատության մեջ հիմք չի տալիս խոսելու Արու-լ Ֆարաջի քաղագրության մասին Սիբու իբն ալ-Ջաուզի «Միքաթ ալ-գաման» (ժամանակի հայելի) աշխատությունից: Համեմայն դեպք, հետազոտողները նկատել են, որ ինքը Սիբու իբն ալ-Ջաուզին, իր հերթին, մեծապես ազդվել է Իբն ալ-Ասիրից և քաղագրություններ է կատարել նրա ոչ միայն «ալ-Ջամիլ Յի-լ Թա-

րիխ» (Ախսկատար պատմություն) աշխատությունից, այլ Իրն-ալ-Կալանի-սիի (մահ. 1160), իր պապ Արդալ-Ռանման իրն ալ-Ջաուզիի (1116-1200), Ի-մադ ալ-դիմ-Իսֆահանիի (1125-1201), Հիլալ ալ-Սաբիի (970-1056) և այլ ա-րար պատմիչների երկերից:<sup>46</sup>

Իրն ալ-Ասիրիի աշխատությունից տեղեկություններ քաղելու փաստը նկատել է նաև հայտնի անգլիախոս արևելագետ Հ. Ա. Գիլը: Նա նշում է, որ Արու-լ Ֆարաբիի արաբալեզու ժամանակագրությունը մտնում է այն երկերի մեջ, որոնք խիստ կախված են Իրն ալ-Ասիրի նշված աշխատությունից, քեև այն լրացվել է ավելի ուշ հեղինակների նյութերով:<sup>47</sup>

Արու-լ Ֆարաբիի նշված աշխատության աղբյուրներին անդրադարձել են նաև անճերիկացի արաբագետ Ֆ. Հիքքին, արաբ հայտնի մատենագետ-գրականագետ Ջ. Ջադանը և ուրիշները: Նրանք նկատել են, որ Արու-լ Ֆարաբը իր կենսա-մատենագիտական տեղեկությունները ժամանակի նշանա-վոր գործիչների (գիտնականների, փիլիսոփաների, մաթեմատիկոսների և այլն) մասին քաղել է անդալուսցի արաբ աշխարհագիր-կենսագիր Սալիդ ալ-Անդալուսիի (1029-1070) «Տարակաթ ալ-տման»<sup>48</sup> (Ազգությունների սե-րունդները) և Իրն ալ-Կիֆտիի (1172-1248) «Ֆարքիս ալ-Հուքամա»<sup>49</sup> (Խո-րագիտական պատմություն) երկերից: Ջ. Ջադանը նկատել է նաև, որ ա-րաբական աղբյուրներից Արու-լ Ֆարաբը օգտվել է տարրեր եղանակով: Օ-րինակ, արաբական նվաճումների մասին նա համառոտելով է հաղորդում, իսկ արաբական խալիֆայության և մոնղոլական պետության մասին՝ ավելի մանրամասն<sup>50</sup>: Սակայն արաբ հեռագրատող չի նշում, քե քաղաքական պատմության շարադյանքի համար ինչ աղբյուրներից է Արու-լ Ֆարաբը քաղել իր տեղեկությունները:

Անդրադառնալով մախամոնղոլական ժամանակաշրջանի պատմության աղբյուրներին, անվանի արևելագետ Վ. Վ. Բարտոլդը նշում է, որ մի շարք պատմագրական երկեր մեզ չեն հասել և կորել են, դրանց բլին է պատկա-նում նաև անհայտ հեղինակի «Մելիք-Մամնե» (կամ «Մուլուք-Մամնե»՝ քա-զավորաց մատյանը), որը եղել է պարսիկ պատմիչ Միրխոնդի (15-րդ դ.), ա-տրի պատմիչ Արու-լ Ֆարաբի (Բար Հերբեսու) և արաբ պատմիչ Իրն ալ-Ա-սիրի (13-րդ դ.) աղբյուրներից մեկը<sup>51</sup>: Անվանի գիտնականի այս միտքը հեն-վում է, հավանաբար, Արու-լ Ֆարաբի ատորական ժամանակագրության մի վկայության վրա, որը եղվում է ըստ Մ. Հուզմայի ուսումնասիրության<sup>52</sup>: Սա-կայն Վ. Բարտոլդի այս միտքը իմք է տվել ուզել հեռագրատող Յու. Իսմա-յիլովային գրելու, որ Արու-լ Ֆարաբի «Ֆարքիս մուխսատար ալ-դուվալի» ո-րոշ հատվածներ սկիզբ են առնում «Շահ-Մամնե» հին իրանական էպոսից<sup>53</sup>: Ինչպես երևում է, Իսմայիլովան անհայտ հեղինակի կրթած «Մալիք-Մամնե» (ավելի ճշտ՝ «Մուլք-Մամնե») մույնացնում է «Շահ-Մամնե» հին իրանական էպոսի հետ, հանգամանք, որը հիմնավորման կարիք ունի: Համեմայն դեպք, մեզ համար առայժմ պարզ չէ, քե Արու-լ Ֆարաբը իրանական դիմատիա-ների և աղբյուրների մասին տեղեկությունները որտեղից է քաղել և ի՞նչ եղա-

նակով է քաղել՝ ուղղակի պահպանական աղբյուրից, քե՞ միջնորդավորված ձևով: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Աբու-լ Ֆարաբը իր տեղեկությունները պարսից արքաների և, մասնավորապես, Մասանյան տիրակալների մասին քաղել է, ոչ քե անմիջապես «ժուռայ-ճամն» (Նվաբայ մասնակ) պահպանական աղբյուրից, այլ նրա 757թ. Իբն ալ-Մուկաֆֆայի կողմից կատարված արաբական բարգամանությունից<sup>54</sup>: Սակայն «ժուռայ-ճամնի» տեղեկությունները Աբու-լ Ֆարաբի ժամանակագրության մեջ են անցել 10-րդ դարի արաբալեզու մատենագիր (ժագումով պարսիկ) Մուտահհար իբն Տահիր ալ-Մուկադդասի (Մակդիսի) «Արադյագործության և պատմության մատյանից» (գրվել է 355/996թ.): Համենայն դեպս, վերջին հեղինակը վկայում է, որ ինքը Մասանյան Հազկերտ (Գ) արքայի սպանության հանցամասնքների մասին իր տեղեկությունները քաղել է Իբն ալ-Մուկաֆֆայի «ժուռայ-ճամնից»: Իսկ Աբու-լ Ֆարաբը սասանյան արքա Հազկերտի (Բ) սպանության հանցամասնքների մասին տեղեկությունները գրեթե անփութիս քաղագրել է Մուտահհար ալ-Մուկադդասիի «Արադյագործության և պատմության մատյանից»՝ այնտեղ եղած հղումների հետ միասին<sup>55</sup>:

Անդրադատմալով Աբու-լ Ֆարաբի ժամանակագրության աղբյուրների խնդրին, Յու. Իսմայիլովան նշում է, որ արաբների, Մուհամմեդի և արաբական խաղիֆայության ռազմաքաղաքական իրադարձությունների մասին և մասնավորապես, Օմանյան խալիֆա Մուլեյման իբն Աբդ ալ-Մալիքից (715-717) մինչև վերջին Աբրասյան խալիֆաներից՝ ալ-Մուսթամիր (1226-1246) խալիֆայի գահակալության մասին տեղեկությունները միանշանակ քաղված են Իբն ալ-Ասիրի «Ալ-Քամմիլ Յիլ-Քարիխ» (Ախակատար պատմություն) տիեզերական ժամանակագրությունից, ընդ որում, այդ աշխատությունը Աբու-լ Ֆարաբի «Քարիխ մուխրասար ալ-Դուվալի» 7-13-րդ դդ. արաբների պատմության միակ և հիմնական սկզբնաղբյուրն է<sup>56</sup>: Նույն հետազոտողի կարծիքով Աբու-լ Ֆարաբի՝ իր ծավալով և նշանակությամբ երկրորդ կարևոր աղբյուրը հանդիսանում է արաբ մատենագիր, պատմիչ-փիլիսոփա Ջամալ ալ-Դին Իբն ալ-Կիթտիի (1172-1248) «Քիթաբ քարիխ ալ-հուբանա» (Իմաստունների պատմության մատյան) կենսա-մատենագիտական աշխատությունը, որտեղից Աբու-լ Ֆարաբը քաղել է իր տեղեկությունների 80 տոկոսը՝ նշանավոր փիլիսոփաների, գիտնականների, բժիշկների ու աստղագետների մասին: Ընդ որում, այդ տեղեկությունները Աբու-լ Ֆարաբը բերում է համատուտաձև և մշակված տեսքով, իսկ մի մասն էլ մատուցում է իր խմբագրությամբ<sup>57</sup>:

Ուսումնասիրելով մոնղոլ-քարաբական նվաճումների, մոնղոլական և իլ-խանական տիրակալների մասին Աբու-լ Ֆարաբի տեղեկությունները, Յու. Իսմայիլովան գտնում է, որ Աբու-լ Ֆարաբի հիմնական աղբյուրը եղել է պարսիկ պատմիչ Աբա ալ-Դին Աբա-Մալիք Ջավիդիի «Քարիխ-ի Ջահանգուշա» (Աշխարհակալի կամ աշխարհամովաճողի պատմություն) աշխատությունը, ընդ որում, ժամանակագրության այս հատվածում Աբու-լ Ֆարա-



զը ավելի նվազ չափով է կախված եղել իր արարական արքայից, քան Իրն ալ-Ասիքի և Իրն ալ-Կիթանիի նշված երկերից<sup>51</sup>: Յեն Աբու-լ Ֆարաջը հաճախակի է վկայակոչում Ջուվեյնիի տեղեկությունները, սակայն քառացի նա չի մեջբերում դրանք: Աբու-լ Ֆարաջի և Ջուվեյնիի տեղեկությունները մոնղոլների մասին, հաճախ ամբողջապես, նույնական են<sup>52</sup>: Յեն Աբու-լ Ֆարաջը լայնորեն օգտագործում է Ջուվեյնիի տեղեկությունները Չինգիզ-խանի, Հուլավու-խանի և Խորեզմշահների պատմության մասին, սակայն նա բոլորովին կախված չէ նրանից: Աբու-լ Ֆարաջը իր տեղեկությունները քաղելու ժամանակ հաշվի է առնում իրեն հետաքրքրող դեպքերի մասին Ջուվեյնիի մեկնաբանությունները, սակայն դրանք նա մատուցում է իր խմբագրությանը: Այս հանգամանքը Իսմայիլովի արդարացիորեն քացատրում է նրանով, որ Աբու-լ Ֆարաջը իր ժամանակագրությունը շարադրելու ժամանակ ձևերի տակ է ունեցել և օգտվել է մոնղոլական ժամանակաշրջանի այլ աղբյուրներից:<sup>53</sup> Համալիս լինելով Յու. Իսմայիլովայի ենթադրության հետ, սակայն պետք է ավելացնել, որ Աբու-լ Ֆարաջը այլ աղբյուրներից է օգտվել ոչ միայն մոնղոլական ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները, այլև Արաբական խաղիվության պատմությունը շարադրելու ժամանակ, ընդ որում, դրանք եղել են գլխավոր սկզբնաղբյուրներ: Այս թեզը հաստատվում է նաև մեր ուսումնասիրությունների տվյալներով: Աբու-լ Ֆարաջի ժամանակագրության հետազոտողների գերակշռող մասը այն կարծիքին է, որ արաբների և արաբական խաղիվության պատմության համար Աբու-լ Ֆարաջի գլխավոր աղբյուրը եղել է Իրն ալ-Ասիքի «Լիակատար պատմությունը»<sup>54</sup>, սակայն մեր պրպատումները ցույց են տալիս, որ արաբների պատմության 7-10-րդ դդ. ժամանակահատվածի և մասնավորապես, Մուհամմեդից սկսած և մինչև Աբրահայան ալ-Մուքամիդ (870-892) խաղիվայի գահակալության վերջը՝ 279/892թ. Աբու-լ Ֆարաջի նշված ժամանակագրության գլխավոր սկզբնաղբյուր է եղել ոչ թե Իրն ալ-Ասիքի «Լիակատար պատմությունը», այլ 10-րդ դարի երկրորդ կեսի մատենագիր-պատմիչ Մուտահհար իբն Տահիր ալ-Մուկադդասի ալ-Քուսթիի «Քիթաբ քադա ալ-խուլյ վ-ալ-քաբիխա» (Արաքյագործության և պատմության մատյան) աշխատությունը, որը գրվել է 355/966թ.: Այս յուրատեսակ հանրագիտարանի համապատասխան հատվածների համեմատությունը Աբու-լ Ֆարաջի արաբալեզու ժամանակագրության 7-10-րդ դդ. արաբների պատմության հատվածների հետ, ցույց է տալիս, որ Աբու-լ Ֆարաջը իր տեղեկությունները ամբողջապես քաղել է Մուտահհար ալ-Մուկադդասիի վերոհիշյալ երկից<sup>55</sup>: Ընդ որում մեծ մասամբ առանց փոփոխության կամ խմբագրման (քացատյալ Մուկադդասիի տված անկեղծները, որոնք քաց են բողմվել Աբու-լ Ֆարաջի կողմից հասկանալի կրճատված նկատառումներով, քանաստեղծական մեջբերումները և մանրամասնությունները): Սակայն արաբական առաջին արդարակցյաց յոթ խաղիվաների, Օմայան և Աբրահայան խաղիվաների գործունեության հետ կապված բոլոր ռազմաքաղաքական, մշակութային ու դավամարանական եղև-

յությունների (մինչև ալ-Մուսամիդ խալիֆայի գահակալության՝ 279/892թ.) և դեպքերի մասին բոլոր տեղեկությունները քառացիորեն քաղված են Մուտահհար ալ-Մուկադդասիի «Քիթաբ քադա ալ-խալկ վ-ալ-քադիխա» մատյանից<sup>63</sup>, որը յուրատեսակ հանրագիտարան է և առատ նյութեր է պարունակում գիտության տարրեր քննազավառների, այդ թվում և իմացության եղանակների ու սահմանների, արարչագործության, Թրոտիցիա՝ կրոնա-փիլիսոփայական ուսմունքի, աստվածաբանության, կրոնական տիեզերագիտության, մարգարեների պատմության, տարրեր կրոնների, աշխարհագրության, պարսից քաղաքների, արարների հիմ շրջանի՝ Մուհամմեդի և արաբ խալիֆաների մասին, ընդհուպ մինչև Աբրասյան ալ-Մուտիի խալիֆայի գահակալության վերջը՝ 350-961թթ.: Խոսելով Մուտահհար ալ-Մուկադդասի «Աբարչագործության և պատմության մատյանի» մասին, Ի. Կրաչկովսկին ավելացնում է, որ նշված աշխատության հեղինակը գերազանցապես քանաքաղ էր, սակայն նա ուներ ոչ միայն գրավոր աղբյուրներ, այլև քանակոր տեղեկատուներ (ինֆորմատորներ), որոնց նա կարողանում էր ընտրել շփման մեջ մտնելով և՛ հրեաների, և՛ իրանցի գիտնականների, և՛ նույնիսկ հնդիկների հետ: Կարճ ասած, նրա աղբյուրների կազմը շատ քազմազան է:64 Սակայն այդ բազմազան և առատ նյութերը շարադրված են առանց որչափ համակարգի: Պատահական չէ, որ անվանի գերմանացի արևելագետ Կ. Բրոքելմանը այդ գլխըղ առկամել է «Աստվածաբանական, պատմա-կրոնական և պատմական տեղեկությունների չհամակարգված ժողովածու»<sup>65</sup>:

Ուշագրավ է, որ Մուտահհար ալ-Մուկադդասին օգտագործել է բազմաթիվ արաբական պատմագրական երկեր (օրինակ՝ Իբն Իսհակի (մահ. 151/768) «Մուհամմեդի վարքը»<sup>66</sup>, որոնց մի մասը կորել է և մեզ չեն հասել (օրինակ, Մուհամմեդ իբն Չաքարիա ալ - Ռազիի (Եվրոպայում հայտնի է Ռազես անունով) «Մախարիկ ալ-անբիյա»<sup>67</sup> և Իբն ալ-Մուկաֆֆայի «Քիթաբ քաուդի ալ-դումիա վ-ալ-ոուր՝ ալ- դումիա»<sup>68</sup>), սակայն դրանց տեղեկությունները օգտագործվել են Աբու-լ Ֆարաջի Աբարական ժամանակագրության մեջ:

Այսպիսով, Աբու-լ Ֆարաջի «Թարիխ մուխթասար ալ-դուվալ» ժամանակագրության մասնեղական աղբյուրների մեջ առաջին և հիմնական տեղ է գրավում ոչ թի Իբն ալ-Ասիրի «Ալխակատար պատմություն» (13-րդ դ.) երկը, այլ 10-րդ դարի մատենագիր Մուտահհար ալ-Մուկադդասիի (Մակդիսի) «Աբարչագործության և պատմության մատյան» աշխատությունը, որը ժանրային առումով իրենից ներկայացնում է «Տիեզերական (համընդհանուր) պատմություն»: Նրա հեղինակը առաջին անգամ փորձում է պատմության հետազոտման ասպարեզում հատուկ տեղ հատկացնել փիլիսոփայությանը, այլ խոսքով ասած՝ տիեզերքին և պատմությանը մոտենալ փիլիսոփայության տեսանկյունից:<sup>69</sup>

Աբու-լ Ֆարաջի արաբալեզու ժամանակագրության երկրորդ կարևոր սկզբնաղբյուրը, ինչպես իրավացիորեն նկատել է հետնազոտողների զգալի

մասը, եղել է Իրն ալ-Ասիրի (1160-1234) «ալ-Քամիլ Ֆի-լ թարիխ»<sup>70</sup> (Ախակատար պատմություն) աշխատությունը: Սակայն այդ աղբյուրից Աբու-լ Ֆարաբը քաղսկզբություններ է կատարել 350/961թ. դեպքերից սկսած և մինչև 13-րդ դարի 20-ական թվականների վերջը այսինքն՝ մինչև ժողովրդական արշավանքները դեպի Մերձավոր և Միջին Արևելք: Իսկ ժողովրդների, խորհրդաշահների և Միջին Ասիայի այլ դիմաստիանների մասին իր տեղեկությունները Աբու-լ Ֆարաբը քաղել է պարսկալեզու աղբյուրներից: Բուն Հայաստանի և Կիլիկիայի հայոց պետության պատմության քաղմասիվ եղելությունների մասին Աբու-լ Ֆարաբի տրված տեղեկությունները քաղված են Իրն ալ-Ասիրի նշված երկից: Իրն ալ-Ասիրի և Աբու-լ Ֆարաբի՝ Հայաստանին վերաբերող տեղեկությունների համեմատությունը<sup>71</sup> ցույց է տալիս, որ Աբու-լ Ֆարաբը իր սկզբնաղբյուրից տեղեկություններ քաղագրելով համատարած է դրանք առանց էական փոփոխության ենթարկելու, իսկ կրթման էլ՝ նույնությամբ՝ առանց խմբագրելու և իր սեփական սխեմայով զետեղում է տվյալ տիրակալի գահակալության ժամանակ կատարված դեպքերի ժամանակագրական շրջանակում: Բացի դրանից, Աբու-լ Ֆարաբը չի նշում այն երկի խորագիրը և հեղինակը, որից օգտվել է: Կոմկրետ դեպքում, Իրն ալ-Ասիրի (ինչպես նաև Մուտահհար ալ-Մուկադդասիի) անունը ոչ մի տեղ չի հիշատակվում: Մա նշանակում է, որ Աբու-լ Ֆարաբը լիովին հավատ է քնծայում Իրն ալ-Ասիրի պատմիչների հավատարմությանը: Քաղագրության ընթացքում Աբու-լ Ֆարաբը նաև հավաքելով խմբավորում է այս կամ այն տիրակալի մասին աղբյուրի տարբեր տեղերում ցրված տեղեկությունները և տեղադրում է իր համապատասխան բաժնում: Բացի դրանից, քաղագրության ժամանակ նա ընտրելով է քաղում, այսինքն վերցնում է այն տեղեկությունները, որոնք անմիջապես առնչվում են տվյալ կառավարչի հետ, այնուհետև տալիս է նրա ժամանակ կատարված առավել կարևոր դեպքերի մասին այն տեղեկությունները, որոնք ներգործել են հետագա իրադարձությունների ընթացքի վրա: Ընդ որում, եղելությունների շարադրման ընթացքում նա որոշակի հեռուդականություն է ցուցաբերում:

Անդրադարձաբար Աբու-լ Ֆարաբի տված կենսագրական-մատենագիտական տեղեկություններին՝ ժամանակի նշանավոր մարդկանց ու գործիչների մասին և որոնք քերվում են յուրաքանչյուր տիրակալին հատկացված շարադրանքի վերջում, պետք է նշել, որ հետազոտողները իրավացիորեն նկատել են, որ Աբու-լ Ֆարաբի մնացած տեղեկությունների հիմնական աղբյուրն են եղել անդալուսյան աշխարհագիր-կենսագիր Սայիդ ալ-Անդալուսիի Տարակաթ ալ-ումման<sup>72</sup> և մատենագիր Իրն ալ-Կիֆտիի «Թարիխ ալ-Հուքամա»<sup>73</sup> աշխատությունները, որոնք երբեմն հիշատակվում են Աբու-լ Ֆարաբի կողմից:<sup>74</sup> Սակայն հարց է առաջանում, թե այս երկու մատենագիրներից ո՞ր մեկն է եղել առաջնային և հիմնական սկզբնաղբյուրը: Յու Իսմայիլովան, ուսումնասիրելով Աբու-լ Ֆարաբի կենսա-մատենագիտական տեղեկությունները և համեմատելով այն Իրն ալ-Կիֆտիի համապատասխան

նյութերի հետ, հանգել է այն եզրակացության, որ միջնադարյան Արևելքի ավելի քան 120 գիտնականների մասին Աբու-լ Ֆարաբի տված տեղեկությունների գեղարվեստի մասը քաղված է Իբն ալ-Կիֆտիի երկից, որը եղել է Աբու-լ Ֆարաբի հիմնական և միակ աղբյուրը, ընդ որում, քաղազրույթումների հետ բերված են մահ Իբն ալ-Կիֆտիի սկզբնաղբյուրների հղումները: Քաղազրված նյութերը Աբու-լ Ֆարաբը տարբեր աստիճանի է համատարածում՝ իր կողմից մշակված եղանակի համապատասխան և համատարածումն են ենթարկվում մահ գիտնականների ամբողջական անունները, նրանց միտքն (մականունը), կոնիան (ազգանունը), աշխատությունների ցանկը, հաճախ մահ ծննդյան թվականը, ծննդավայրը և քանաստեղծական քաղվածքները: Բացի դրանից, քաղված նյութի համատարածումն չափը և ծավալը կախված է աղբյուրի համապատասխան հատվածի ծավալից՝ փոքր հոդվածները քաղագրվում են առանց փոփոխության, իսկ մեծ հոդվածները համատարածվում են զգալի չափով: Մական Աբու-լ Ֆարաբը հաճախ քաղագրում է մահ մվագ էական, քայց հետաքրքրաշարժ փաստեր տարբեր գիտնականների կյանքից, հավանաբար, ըմբռնողների լայն շրջանակի հետաքրքրությունը գրավելու համար:<sup>76</sup>

Աբու-լ Ֆարաբի կենսագրական-մատենագիտական տեղեկությունների երկուրդ կարևոր սկզբնաղբյուրը եղել է Սայիդ ալ-Անդալուսիի վերոհիշյալ երկը, որը որոշ հետազոտողներ համարում են ոչ միայն Աբու-լ Ֆարաբի հիմնական և առաջնային սկզբնաղբյուրը, այլև Իբն ալ-Կիֆտիի, կենսագիր Իբն Աբու Ռահբյալի (1203-1270) և մատենագիր Հաջի Խալիֆայի համար:<sup>77</sup> Ի վերջո հարց է առաջանում, թե ո՞րն է Աբու-լ Ֆարաբի այս կարգի տեղեկությունների հիմնական և առաջնային աղբյուրը: Այս հարցի պատասխան կարող ենք տալ միայն Սայիդ ալ-Անդալուսիի, Իբն ալ-Կիֆտիի և Աբու-լ Ֆարաբի նշված տեղեկությունների համապատասխան հատվածների համեմատությունից և վերլուծությունից հետո:<sup>78</sup>

Վերադառնալով Աբու-լ Ֆարաբի աղբյուրների խնդրին, հարկ է նշել, որ իր ժամանակագրության մեջ նա վկայակոչում է անդալուսյան մատենագիր-կենսագիր Իբն Ջուլյուլի (944-մահ. մույն դարի 90-ական թթ.) և հայտնի մատենագիր Իբն ալ-Նադիմի (Մուհամմեդ իբն Իսհակ - 10-րդ դ.) անունները<sup>79</sup>, սակայն Իբն Ջուլյուլի «Տարակաթ ալ-ատիքրա վ-ալ Հուրամա»<sup>80</sup> (Բժիշկների և խորագիտականների տերմինները) և Իբն ալ-Նադիմի «ալ-Ֆիհրիթ»<sup>81</sup> իսմրագիտարանային քնույթի աշխատությունների համեմատությունը Աբու-լ Ֆարաբի նյութերի հետ ցույց է տալիս, որ Աբու-լ Ֆարաբը իր տեղեկությունները ուղղակի քաղել է ոչ թե Իբն ալ-Ջուլյուլի և Իբն ալ-Նադիմի վերոհիշյալ աշխատություններից, այլ Իբն ալ-Կիֆտիի նշված «Տարիխ ալ-Հուրամա» մատյանից, իսկ վերջին մատենագիրը իր տեղեկությունները իրոք քաղել է Իբն Ջուլյուլից և Իբն ալ-Նադիմից և հղում է նրանց անունները:<sup>82</sup> Այստեղից էլ հետևում է, որ Աբու-լ Ֆարաբը, տեղեկություններ քաղելով Իբն ալ-Կիֆտիի երկից, քաղագրում է մահ այնտեղ եղած հղումները, որ-

պեզզի տարափորություն բողնի, որ ինքը սկզբնաղբյուրից է քաղել իր նյութերը: Սակայն իրականում նրա կենսագրական տեղեկությունները երկրորդ աղբյուրից քաղագրություններ են, այլ խոսքով ասած, միջնորդավորված ձևով են հասել մեզ: Անշուշտ, մեզան տեղեկությունների արժեքը նսնմանում է: Սակայն, եթե հաշվի առնենք այն համզամանքը, որ սկզբնաղբյուրների մի մասը կորել է, ապա նրանցից կատարված քաղագրությունները առաջնակարգ սկզբնաղբյուրի մշակակություն են ստանում և դառնում են եզակի տեղեկություններ:

Ամփոփելով մեր խոսքը պետք է նշել, որ տիպաբանորեն կամ ժամբային առումով Աբու-լ Ֆարաբի Գրիգորիոս Իրն ալ Իրրիի «Թարիխ մուխթասար ալ-գուվալ» ժամանակագրությունը յուրահատուկ տեղծագործություն է, քանզի այն իր մեջ մեղրաշնակում է պատմագրության երկու հիմնական և ամենատարածված ժանրերի՝ համընդհանուր պատմության և կենսա-մատենագիտական երկերի տարրեր, որի հետևանքով աշխատությունը կոչվել է «Մուխթասար» (չունպենդիում՝ համառոտում, համահավաք):

Կառուցվածքի և շարադրանքի առումով Աբու-լ Ֆարաբիի աշխատությունը համահունչ է բյուզանդական պատմագրական ավանդության հետ (ըստ դինաստիաների և կառավարիչների մյուսի մասնատումը և պարբերացման սկզբունքը): Սակայն նրանցից որոշեցանք արտ-մահմեդական եղանակը (յուսայ), մահմեդական թվարկության կիրառումը (հիջրայի թվարկություն), դարձվածները և լեզվական բառապաշարը հոգեհարազատ են արաբա-մահմեդական պատմագրական ավանդության: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ Աբու-լ Ֆարաբը իր ժամանակագրության մեջ, ըստ էության, հետևել է թե՛ հունա-բյուզանդական և թե՛ արաբա-մահմեդական պատմագրական ավանդություններին, որի հետևանքով նրա աշխատությունը ունի այդ երկու պատմագրական ավանդությունների առանձնահատկությունները:

Քաղաքական ժամանակագրության (համընդհանուր պատմության) և կենսա-մատենագիտական ժանրի (տարակաթ) տեղծագործությունների համատեղումը մեկ պատմագրական աշխատության մեջ քննարկ է և համահունչ 13-րդ դարի արաբական պատմագրությանը:

Աբու-լ Ֆարաբի Գրիգորիոս Իրն ալ-Իրրիի «Թարիխ մուխթասար ալ-գուվալ» աշխատության երկու երրորդ մասը կազմվել է մահմեդական հեղինակների պատմագրական երկերի նյութերի մշակման և համառոտագրման հատուկ սխեմայով և հենվում է, զլխավորապես, արաբալեզու մահմեդական հեղինակների (տարեգիլիների, կենսագիրների և այլն) աշխատությունների վրա, որոնց մեջ առաջատար տեղ են զբաղում Մուտահհար ալ-Մուկադդասին (10-րդ դ.), Իզզ ալ-դին Իրն ալ-Ասիբը (13-րդ դ.), Սայիտ ալ-Անդալուսին (11-րդ դ.), Իրն ալ-Կիֆտին (13-րդ դ.):

## SUMMARY

The problem of the main sources of the Arabic Chronography of Gregory Abu-l Faraj Bar-Hebraeus (Ibn al-Ibri - 1226-1286)- "Tarikh mukhtasar al-duwal" (Compendious history of Dynasties) up to now has not been the subject of special research.

Representing the Arabic translation (version) of the first part of his "Universal history" (Syriac *Makhtebhanuth zabhne*) - The Political history (Chronicon Syriacum) consequently includes the same information quoted in the Syriac Chronography (compiled in 1276 A.D.) of Bar-Hebraeus but in the Arabic version the author had added new materials and passages from Arabic, Syriac and Persian manuscripts preserved in Maragha library (1286 11.1.) unknown in Syriac Chronography.

The Arabic Chronography combines simultaneously, the elements of principal genres of Muslim historiography, namely of Universal history and biographical literature and was created in the most popular form of historiography - "mukhtasar" (compendium).

The investigation of the Arabic version of Bar-Hebraeus shows that the Chronography is a compilation of many passages of Greek-Byzantine, Syriac, Arabic and Persian sources.

The Profane or Old history from Creation of the world to the Islamic period is based on the works of Greek and Byzantine chroniclers (Sinkel, Amartol, Kedrinos, Malalas, Mannasa etc.) and authors whose works are quoted by Bar-Hebraeus (Anianus of Alexandria, Sextus Africanus, Eusebius of Caesaria, Socrates the Scholastic, Zacharia the Rhetorician, John of Asia (Ephesus), Josephus Flavius etc).

For the history of Christianity in Byzantine and Middle East countries Bar-Hebraeus had used many Syriac sources which are mentioned also in the Arabic Chronography (Michael the Great, Jacob of Edessa, Ignatius of Melitene, Theophilus of Edessa, Dionysius of Tall Mahr etc.), as well as in the Biblical literature, Greek and Syriac canonical texts (Old Septuaginta and New Testaments), Hebrew and Samaritan versions of Old Testaments, non-canonical books and theological literature.

For the "Old" history he had used many passages from the Arab historian Masudi (X c.) and Abu Raihan al-Biruni (X-XI cc.) taking into account the interpretations of Tabari and Ibn al-Asir.

For the history of Arab caliphs - from the life and activities of Muhammad (including the first orthodox caliphs, Ommayad and Abbasid) until the reign of the Abbasid caliph Mutamid- 266/879 Bar-Hebraeus had drawn all his

information from the work of Muttahar ibn Tahir al-Muqaddasi al-Busti (or Maqdisi, composed in 355/966) - "Kitab bad'al-khalq wal-tarikh" (The book of the Creation and the History). Some passages for the History of Sassanian kings and old Iranian period Bar-Hebraeus had drawn his information from the Arabic version of the Pahlawi "Khuthay-Namah" (book of kings) translated into Arabic by Ibn al-Muqaffa (757 A.D.) under the title "Siyar muluk al-Ajam" (Biographies of Iranian kings).

For the history of last Abbasid caliphs from the reign of Mutamid (879-892) until the Mongol conquest of Central Asia, Iran and Caucasus the second main source of "Tarikh-mukhtasar al-duwal" was for the most part the universal history of Izz al-Din Ibn al-Athir (1160-1234) "al-Kamil fil-Tarikh", but for the history of Creation and for the history of the Great Seljuqs Bar Hebraeus had supplementary sources.

For the history of Mongol (Chingizids, Il-Khans etc.) campaigns in Central Asia, Iran, Caucasus and Middle East, Bar Hebraeus had drawn most part of his information from the "Tarikh-i-Jahangusha" of Ata Malik Juwaini (1226-1283) whose work is one of the principal sources of "Tarikh mukhtasar al-duwal".

The analysis and textual comparison of the biographical passage of Bar-Hebraeus with the biographical literature of X-XIIIc. all to ascertain the main sources of "Tarikh-mukhtasar al-duwal". The main biographical source of his Chronography were "Tabaqat al-umam" (the generation of nations) of Said ibn Ahmad al-Andalusi (1029-1070) and "Tarikh al-hukama" (The history of the sages) of Ibn al-Qifti (1172-1270). The Chronography of Bar-Hebraeus contains many references to Muslim encyclopedist Ibn al-Nadim (X c.), Ibn Juljul (944-996) and other authors, but the passages of their works Bar-Hebraeus had drawn from the work of Ibn al-Qifti together with its reference to Ibn al-Nadim, Ibn Juljul and other authors.

The collation of the quoted references of Bar-Hebraeus with these sources show that the Syriac chronicler had not mentioned the titles or names of many sources which he had used, moreover, he recalls the titles of such sources which he did not use at all. Composing its Chronography Bar-Hebraeus follows his own principle (scheme) of selection of the materials. At first, he treated the materials, then abbreviates the citations and uses them in short form (mukhtasar "compendium") without any changes. Compiling the materials often he selects the more important facts and events which had influenced on the course of following events keeping the succession in his Chronography.

Besides the mentioned sources Bar-Hebraeus had added many passages from the contemporary documents dealing with the extraordinary events which took place in the XIIIc., to many of which Bar-Hebraeus was an eyewitness. Often Bar-Hebraeus had added his own observations, estimations and descriptions of

diplomatic and clerical contacts with the Mongol khans, Armenian kings of Cilician state. However, the Arabic Chronography of Bar-Hebraeus contains a great mass of interesting facts dealing with the political history of the Arabs and Mongols.

## ՄԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Gregorii Abul Pharagii sive Barhebraei, Chronicon syriacum. E. codicibus Bodleianis descripsit maximam partem vertit notisque illustravit, P. I. Bruns edidit ex parte vertit notisque adiicit G.G. Kirsch, Lipsiae, 1789 (Այսօրհան՝ Chronicon syriacum).

2. Gregorii Barhebraei, Chronicon ecclesiasticum. Quod e codice Musei Britannici descriptum conjuncta opera ediderunt, latinitate consunt, annotationibusque theologicis, historicis... illustrarunt J. B. Abbeloos et T.J. Lamy, secti prima, t. I, Lovanii, 1871, t. II, Parisiis-Lovanii, 1874, sectio secunda, t. III, Parisiis-Lovanii, 1877 (Այսօրհան՝ Chronicon ecclesiasticum).

3. The Chronography of Gregory Abu'l Faraj, the son of Aaron, the Hebrew physician commonly known as Bar Hebraeus, being the first part of his political History of the world. Translated from Syriac by Ernest A. Wallis Budge, vol. I, English translation, Oxford University Press, London, 1932 (Այսօրհան՝ The Chronography of Bar Hebraeus).

4. Abu al-Faraj Jamal al-Din Ibn al-Ibri, Tarih al-Zaman d'après la traduction arabe du Ishaq Armaleh, Introduction du P. Jean-Maurice Fiey, Beyrouth, 1986 (Այսօրհան՝ Ibn al-Ibri, Tarih al-Zaman); p.10 (texte arabe p.18):

5. The Chronography of Ibn Bar Hebraeus pp. XXVIII, XXIX, XXXII, XXXIX, Ibn al-Ibri, Tarih al-Zaman. p. 7,11,19 (Presentation en arabe): Ibn al-Ibri, Tarih al-Zaman. p. 10 (Texte arabe, p.19), Gregorius al-Malati Ibn al-Ibri, Tarikh mukhtasar al-duwal, edited and annotated by Anton Salihani, second edition, Beyrouth, 1958 (Այսօրհան՝ Tarikh mukhtasar al-duwal), p. W.

6. Shu. Historia compendiosa Dynastiarum, authore Gregorio Abul-Pharajio, Malatiensi Medico, Historiam complectens universalem, à mun do condito usque ad Tempora Authoris, res Orientalium accuratissime describens, Arabica edita, Latine versa, ab Eduardo Pocockio... Oxoniae, 1663 (Այսօրհան՝ Historia compendiosa), նյութի՝ Spectimen Historiae Arabum, sive Gregorii Abul Faragii ... de origine et motibus Arabum... Opera et studio Eduardi Pocockii, Oxoniae, 1650.

7. Gregorius al-Malati Ibn al-Ibri, Tarikh mukhtasar al-duwal, edited by Anton Salihani, first edition, Beirut, 1890.

8. Ibn al-Ibri, Gregorius al-Malati, Tarikh mukhtasar al-duwal, edited and annotated by Anton Salihani, second edition, Beirut, 1958, reprinted Beirut, 1983.

9. The chronography of Bar Hebraeus, p. VII; Ibn al-Ibri, Tarih al-Zaman. p. 4-5 (Presentation), texte arabe p. 14-15.



10. Michael le Syrien, Chronique de Michael le Syrien, edite et traduite par J. B. Chabot, vol. I-IV, Paris, 1899-1910, հմմտ. ժամանակագրորհին Տիսան Միսայիի Ասորաց պատմարքի, Տերուսանի, 1870:

11. The Chronography of Bar Hebraeus, p. VII; Tarikh al-Zaman, p. 4-5 (Presentation).

12. Առյժն տեղում, էջ VII, XXXVIII, XLI, XLVI; Tarikh al-Zaman, p. 3-4 (texte arabe p. 13).

13. Tarikh al-Zaman, p. 10, (Presentation), texte arabe, p. 15, 18-19; Ph. Hitti, History of the Arabs, fifth edition, London, 1951, p. 310.

14. Н. И. Сериков, О путях проникновения византийской духовной культуры на мусульманский восток: Григорий Иоанн Абу-л-Фарадж Ибн ал-Ибри (Бар Эбрей) и византийская историографическая традиция. - "Византийский Временник", т. 45, М., 1984 (Далее: Сериков, О путях проникновения) с. 234, его же: "Древняя история в "Тарих мухтасар ал-дузал" "Бар Эбрея (XIII в.) как источник по истории взаимодействия арабской и византийской культур. Автореф. дис. на соиск. уч. ст. к. и. н. н., М., 1987 (Далее: Сериков, Древняя история), с. 10.

15. F. Rosenthal, A History of Muslim Historiography, Leiden, 1952 (Այստեղում՝ Rosenthal, Muslim Historiography), p. 78-79.

16. F. Rosenthal, "Dawla" - Encyclopedia of Islam, New edition, vol. II, Leiden, 1983, p. 177-178 հմմտ. Muslim Historiography, p. 78-79.

17. Hitti, History, p. 388-389, R. Nicholson, Literary History of the Arabs, Cambridge, 1962, p. 348, Rosenthal, Muslim Historiography, p. 79, 81.

Ամբողջառնալով կրկին մեզ հետաքրքրող մասամբ եղծված սեպագիր տեքստին, ուշադրության արժանի է այն փաստը, որ Բալուի արձանագրության ընդհանուր բովանդակությունը և եղծված ոչ մեծ սեպագիր նշանի մնացողները, կարծես, համառոտ են հուշում են, որ մեր [...]sulie-ն ուղղակի կապ պետք է ունենա մախոդը, 14-րդ տողի վերջի asuni քայի հետ: Այդ դեպքում ինքնին հասկանալի է, որ 15-րդ տողի սկզբի պահպանված ուղղահայաց երկար սեպը, ամենայն հավանականությամբ, հանդիսանում է a ոչ մեծ նշանի սկիզբը (ուրեմն այստեղ տուժած են սոսկ աջակողմյան մեկը մյուսի վրա ընկած երկու ուղղահայաց կարճ սեպերը): Հանրագումարում ստացվում է a)-su-ն-ե, որը համդիսանում է asuni քառի ուրարտական արձանագրություններում առայժմ անբողջական չվկայված հոգնակի ձևը:

Այս կապակցությամբ, քննականաբար, ինքնին հարց է ծագում, թե ինչ է ներկայացնում իրենից asuni-asuni քառը և ինչ առնչություն ունի այն քննարկվող տեքստի հետ: Այդ հարցի լուծումը ևս, կարծում ենք, անտրդակի ձևով կարող է լույս ածել մեր ընթերցման համառոտության աստիճանի վրա:

Ինչպես հայտնի է, Բալուի արձանագրության 14-րդ տողում asuni քառը հիշատակվում է <sup>UKU</sup> Šeboteria asuni կապակցության մեջ: Իսկ մույն արձանագրության 3-4-րդ տողերում դրան համազոր է <sup>OKU</sup> Šeboteria KUR-ն-ն, այսինքն՝ «Շեբոտերիա քաղաքի երկիրը»: Դա նշանակում է, որ Շեբոտերիան եղել է քաղաք-պետություն: Եղնելով այդ փաստից, Ի.Մ.Նյակոնովը իրավամբ հանգել է այն եզրակացության, որ asuni-ն ըստ էության մույնն է, ինչ KUR-ն-ն (ուրարտերեն <sup>KUH</sup>ebani-ն), հետևաբար, այդ քառի համար նա առաջարկել է «մարզ» բարձրամտությունը՝:

Մյուս կողմից, մշանգամայն ակնհերև է, որ Բալուի արձանագրության մեջ

արչավանքի արդյունքների ամփոփման ժամանակ ասիմանագատվում են նվաճված երկրները՝ Մելիտեա քաղաք-պետությունից: Այդպիսով Մեմուան կանկրետացնում է իր արչավանքի արդյունքները. Արածանիի հովտի մոտակա երկրները կամ մարզերը՝ Շեքետերիան, Խուզանան և Շուփանին (պատմական Շուփք) նվաճվել են (asulie hասաի), իսկ անդրեփրատյան հեռավոր Մելիտեայի քաղաքըրը սուկ հարկատու է դարձել Ուրարտոյին (LUGÁI.<sup>101</sup> Meliteialhe aldumi mešimi pi):

### 3. Չնկատված sah-est(u)- բայը

Այդ բառը հիշատակվում է սուկ Կարմիր-քյուրի պեղումներում հայտնաբերված կավե սեպագիր սալիկներից մեկում sa-ha-est-tú-ó-ni ձևով: Մակայն եղատարակիչները սխալմամբ այն ըմբերցել են իբրև ir-ha-ma-tú-ó-ni<sup>9</sup>: Ինչպես երևում է, քյուրիմացությունը պայմանավորված է sa և tú նշանների ոչ ճիշտ ընկալմամբ: Նրանցից sa-ն շփոթվել է ինչ-որ չափով մեան ir նշանի հետ, իսկ tú-ը՝ ma-յի հետ:

Մեպագրերի մասնագետներին ակնհայտ է, որ ir նշանի և վերին, և ստորին հորիզոնական սեպերը միաչափ են, այնինչ տվյալ դեպքում սեպագիր սալիկի վրա վերին հորիզոնականը որոշ չափով կարճ է ստորինից: Հետևաբար, ինքնին հասկանալի է, որ այստեղ մենք գործ ունենք ոչ քե ir, այլ sa նշանի հետ:

Ինչ վերաբերում է սխալ ըմբերցված ma նշանին, ապա եթե իսկապես այդպես լիներ, այն պետք է քաղկացած լիներ ընդամենը երեք հորիզոնական զուգահեռ և նրանց հաջորդող մեկ ուղղահայաց սեպերից: Այնինչ, այդ նշանը «մի փոքր» այլ բնույթ ունի: Ի դեպ սեպագիր սալիկի վրա, որը կազմված է, այսպես կոչված, ասորեստանյան գրեղաձևով, ամիրաժեշտության դեպքում ուղղահայաց սեպերը հատվում են հորիզոնականներով: Հենց այդ հատումն էլ անհրաժեշտ է եղել տվյալ դեպքում, քանի որ մեզ հետաքրքրող բայը կազմված է ոչ թե ma, այլ տն նշանով: Մի խոսքով, սեպագիր սալիկի հրատարակիչների կողմից անգզուշորեն անտեսվել է հորիզոնական և ուղղահայաց սեպերի հատման փաստը: Իսկ դա վկայում է ևս երեք հորիզոնական զուգահեռ սեպերի առկայության մասին ոչ միայն ուղղահայաց սեպից առաջ, այլ հետո:

Ի դեպ irhamatuni սխալ ըմբերցումը ակնառու է նաև ուրարտական բայաձևերի համեմատությունից, քանի որ վերջիններս սովորաբար քաղկացած են երկինչյուն կամ եռանիչյուն արմատներից. ha-, at-, ul-, šid-, est- և այլն: Իսկ irhamat- բառի համահնչյուն արմատը ոչ մի ընդհանուր բան չունի ուրարտական բայաձևերի հետ:

Ինչ վերաբերում է մեր առաջարկված sahaštuni ըմբերցմանը, ապա այստեղ ամեն ինչ օրինաչափ է. sah-ը արմատն է, est-ը լրացուցիչ հիմքի հավելումն է, որի ձայնավորը օրինաչափորեն համընկնում է բայարմատի ձայ-

մավորին, ս-ն անցողական քայերի ցուցիչն է, իսկ ու-ն՝ անցյալ կատարյալ ժամանակի եզակի քվի III դեմքի վերջավորությունը:

Ի դեպ լրացուցիչ հիմքով քարոզված քայարմատները քավական մեծ տարածում ունեն ուրարտերենի քառապաշարում. համեմատելիք, թերև, առ- և առա՛ն-, հի՛- և հի՛-հի-, սի- և սի-սի-, ձի- և ձի-սի- և այլն: Այստեղ մեզ մնում է ստակ աղիլացնել, որ առայժմ մեզ հայտնի է միայն *sah-սի-* լրացուցիչ հիմքով քարոզված նոր քայը, այն դեպքում, երբ *sah-* սբարզ արմատով քայ ուրարտերենում դեռևս վկայված չէ<sup>10</sup>: Առայժմ հայտնի չէ մասն այդ քայի իմաստը:

#### 4. Չնկատված <sup>6</sup>ՏԱ. REՏI գաղափարագրերի կոմբինացիան

Գաղափարագրերի այս կոմբինացիան «մերքիմի» իմաստով վաղուց հայտնի է ուրարտագիտությանը: Այն կրկնակի հիշատակվում է դեռևս Թուփրակ-կալեի պեղումներում հայտնաբերված մի սեպագիր սաղիկի վրա, որ մերկայացված է Ռուսախիմիի մայրաքաղաքի պալատական անճնակագմը<sup>11</sup>:

Գաղափարագրերի այդ նույն կոմբինացիան տեղ է գտել մակ հետագայում Կարմիր-բլուրի պեղումներում հայտնաբերված մի այլ սեպագիր սաղիկի վրա, որի համար, սակայն, մասնագետները առաջարկել են <sup>6</sup>ա-հս-րա ոչնչով չիմմնավորված ըմբռցումը<sup>12</sup>:

Կարմիր-բլուրի հիշյալ կավն սաղիկի սեպագիր տեքստի մեր մամրագմին ուսումնասիրությունից պարզվել է, որ քյուրիմացության պատճառ է դարձել հրատարակիչների կողմից քննության առարկա գաղափարագրերի կոմբինացիայի մ դեռևս անհայտից հետո առկա *sa* սեպագիր նշանի անգզաչառն ընկալումը որպես *a*<sup>13</sup>: Հենց այդ աննշան վրիպումով էլ պայմանավորված է <sup>6</sup>ՏԱ. REՏI «մերքիմի» գաղափարագրերի կոմբինացիայի փոխարեն մասնագիտական գրականության մեջ առաջարկված <sup>6</sup>ա(?!)-հս-րա սխալ ըմբռցումը և *ahupa* «մալթ» անիմաստ քարզմանությունը:



## SUMMARY

The paper deals with several new interpretations in the reading of Urartian cuneiform texts.

### 1. The unnoticed determinative AB

The Urartian word *šue* often is used in connection with the Lake Sevan and artificial lakes. Hence, it was treated as "lake" or "sea". On the other hand, this treatment was supported further due to its comparison with the Armenian *ջու* "sea".

Once in the inscription of the kings Ishpuini and Menua ("Mheri dur") *šue* is used with a determinative which was treated as DINGIR "god", which is incompatible with this word. The thorough analyses of this passage shows that here we deal with the another determinative, namely AB "sea". Correspondingly, the whole passage <sup>AB</sup> *šuininaue DINGIR GUD II UDU<sup>MES</sup>* should be translated as "(One) ox (and) two sheeps to the Sea-god".

### 2. The unnoticed word *asulie*

The line 15 of the Balu inscription of Menuas, occurs in current Corporas as [...]-su-li-e-ha-a-ú-a-li, and was usually treated as the name of king of Melites (modern Malatya) - "Suliehauli, which was compared by F.W.König with the Assyrian Sulumal.

The second part of this passage - *hauali* is apparently a verb composed according to the rules of Urartian morphology, the Pret.III sg. from *hau-*. As to *šulie*, here we deal with the Urartian noun *asulie* (sing. *asuni* "province"), the proposed initial sign *a* of which is preserved as a vertical cuneiform sign in this line.

Hence, the line 15 of Balu has to be treated as follows: *asulie hauali LUGÁL<sup>URU</sup> Melitealbe, alduni mešini pi* "conquered the provinces, (and) the king of Melitealbe put under tribute".

### 3. New verb *sah-ašt(u)-*

This verb was treated in the literature as *ir-ha-ma-tu-ú-ni*, which resulted from the misreading of two signs - *ir* and *ma*. The proposed reading *sah-ašt(u)-* is composed according to the rules of Urartian verb; for example, *am(u)-* and *am-ašt(u)-*, *ašh-* and *ašh-ašt(u)-*, *ul(a)-* and *ul-ušš(a)-*, *šid(u)-* and *šid-išt(u)-*, etc.


1. Гр.Каванцян, Хайаса - колыбель армян, Ереван, 1947, с.8.
2. И.М.Дьяконов, ВДИ, 1951/2, с.290, прим.66.
3. Սյո ճաւիթի տնս ճաւի Н.В.Арутюнян, Микросая культура. Традиция и современность, М., 1991, сс.125-126.
4. Г.А.Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960 (սյոյնիճաւի՝ УКН). 39. F.W.König, Handbuch der chaldäischen Inschriften, I-II, Graz, 1955-1957 (սյոյնիճաւի՝ HchI), 25.
5. F.W.König, HchI, I, S.64, Anm.7.
6. Шу И.М.Дьяконов, ВДИ, 1951, 2, § 44 (лиц.стор, 43).
7. Шу Г.А.Меликишвили, УКН, 39, прим.2.
8. Шу И.М.Дьяконов, Сравнительно-грамматический обзор хурритского и урартского языков, "Переднеазиатский сборник", М., 1961, с.409.
9. И.М.Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963, текст 7, лиц.стор., стк.16. Г.А.Меликишвили, ВДИ, 1971, 4, с.275, лиц.стор., стк.16.
10. Սյո ճաւիթի տնս ճաւի N.V.Narouhtoumyan, Nouveau lexique dans les tablettes cunéiformes ourartéennes, "Altorientalische Forschungen", Bd.15, 1988, p.119-121.
11. И.М.Дьяконов, УПД, текст 12, лиц.стор., стк.10, обор.стор., стк.2. Г.А.Меликишвили, ВДИ, 1971, 3, с.231, 286, лиц.стор., стк.10, обор.стор., стк.2.
12. И.М.Дьяконов, УПД, текст 7, лиц.стор., стк.12. Г.А.Меликишвили, ВДИ, 1971, 4, с.275, 462, лиц.стор., стк.12.
13. Սյո ճաւիթի տնս ճաւի Н.В.Арутюнян, Бнайнили, Ереван, 1970, с.335, прим.105. I.M.Diakonoff and S.M.Kashkai, Geographical Names According to Urartian texts (Répertoire Géographique des Textes Cunéiformes", Band 9), Wiesbaden, 1981, p.XI, n.1.

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՃԱՅԻՆ ԳԻՐԸ**


**(Ք.ա. III-ի հազարամյակներ)**

Դեռևս անցյալ դարում ծագեց ու մեծացավ հեռաքրքրությունը Հայկական լեռնաշխարհի հնագույն արձանագրությունների մկատմամբ: Նախ տաշադրության առարկա դարձան Վանի թագավորության (Ք.ա. IX-VI դդ.) սեպագիր արձանագրությունները՝ ըստ Մովսես Խորենացու տեղեկությունների Արևմտյան Հայաստան եկած և քրդերի կողմից սպանված Ֆ.Ե.Շույցի ուսումնասիրությունների հետմահու հրատարակության<sup>1</sup> (1840թ.): Այնուհետև հայտնի դարձան պատկերասնանագիր հուշարձաններ, որոնց մեջ մեծամասնություն էին կազմում ժողովրդի կողմից «իծագրեթ» անվանումը ստացած ժայռապատկերները<sup>2</sup>: Ի տարբերություն վերջինների, պատկերասնանագիր հուշարձանների մեջ կար փոքրաթիվ, բայց յափազանց ուշագրավ մի խումբ: Եվ եթե ժայռապատկերներն իրենցից ներկայացնում էին գրի զարգացման նախափուլը և չէին տեղավորվում դասական իմաստով «գիր» հասկացության մեջ, ապա երկրորդ խմբի հուշարձանները թողնում էին ուղաչակի զարգացում սույնած գրով կանգնեցված արձանագրությունների տարվորություն: Այս խումբը ևս հստակորեն քաժանվում է երկու մասի՝ Վանի թագավորության մեհենագիր (հիերոգլիֆ) արձանագրությունների և լեռնաշխարհի զանազան վայրերից գտնված, գրեթե չուսումնասիրված նշանագիր հուշարձանների:

Վանի թագավորության մեհենագրության ուսումնասիրությանը մեծ անդրադարձել ենք առանձին մեհենագրությամբ<sup>3</sup>, իսկ սույն հոդվածում քննության առարկա կդարձնենք նշված վերջին նմախմբի հուշարձանները: Անցյալ դարավերջից մինչև օրս կուտակվել է այդ հուշարձաններին վերաբերվող հսկայական նյութ, որը, իհարկանալի է, հմարավոր չէ լուսարանել մեկ հոդվածով: Այստեղ խնդիր ենք դրել պարզելու միայն մի քանի հարց. արդյո՞ք նշված արձանագրությունները կապ ունեն միմյանց հետ՝ կազմելով մեկ համակարգ: Եթե այո, ապա ի՞նչ բնութագրական առանձնահատկություններ ունի այն, ինչպիսի՞ աշխարհագրական ու ժամանակագրական առանձնանքներ է ընդգրկում:




Տի. 1 Պատկեր





Տի. 2 Պատկեր




Տի. 3 Պատկեր



Տի. 4 Պատկեր ընդհանուր



Տի. 5 Պատկեր



Տի. 6 Մեծագույն (մասնավոր) Պատկեր



Տի. 7 Պատկեր




Տի. 8 Մեծագույն (կապի տեսքով) Պատկեր



Տի. 9 Պատկեր



Տի. 10 Պատկեր



Այ. 10 հատված



Երևանի թանգարանի հավաքածու

| Տեսակ | Միջանակ | Արևելյան | Ուստյ | Տեսակ |
|-------|---------|----------|-------|-------|
|       | ⊖       | ⊗        |       | ⊗     |
| ++    |         |          | +++   | +++   |
| ↖     | ↗       |          |       |       |
| V     | V       | V        | V     | V     |
| ⊥     | ⊥       |          |       | ⊥     |
| ∧     |         | ∧        | ∧     |       |
| ~     |         |          | ~     |       |
| ⋅     | ⋅/⋅     |          | ⋅     | ⋅     |

Այ. 1

| Տեսակ | Տեսակ |
|-------|-------|
| ∧     | ∧     |
| ∪     | ∪     |
| ∩     | ∩     |
| ⊥     | ⊥     |
| ⊗     | ⊗     |
| ⊥     | ⊥     |
| ∩     | ∩     |
| ⋅     | ⋅     |
| ⊗     | ⊗     |
| ∩     | ∩     |
| ⊥     | ⊥     |
| ⊥     | ⊥     |
| ∩     | ∩     |
| ∩     | ∩     |

Այ. 2

| Տեսակ | Տեսակ |
|-------|-------|
| ⊖     | ⊖     |
| ⊗     | ⊗     |
| ∩     | ∩     |
| ⊥     | ⊥     |
| ∩     | ∩     |
| ⊥     | ⊥     |
| ∩     | ∩     |
| ⋅     | ⋅     |
| ∩     | ∩     |
| ∩     | ∩     |
| ∩     | ∩     |
| ∩     | ∩     |
| ∩     | ∩     |
| ∩     | ∩     |

Այ. 3

Նման հուշարձաններից առաջին երկուսը (որքան մեզ հայտնի է) հրատարակվեցին 1910թ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանի կողմից<sup>4</sup>: Դրանք հայտնաբերվել էին Արարս գետի աջ ափին գտնվող Յուսկերտի բերդի մոտակայքում (նկ. 1): Հաջորդն Արմավիրի արձանագրությունն էր<sup>5</sup> (նկ. 2): Ի տարբերություն նախորդի, որի թվագրումն անորոշ էր, վերջինս ուներ ժամանակագրման մի կարևոր փաստարկ. արձանագրություն կտող քարը շքվել էր, որի վրա փորագրվել էր, ըստ մասնագետների, Բ.ա. III-Ողջ. թվագրվող հունարեն արձանագրություն: Հետևաբար, նշանագրերի քանդակման ժամանակը պետք է նախորդեր նշված դարերին. ավելին ճշգրտելու համար տվյալներ չկային:

Այս արձանագրությունների ուսումնասիրության գործում կարևոր ներդրում ունեցավ Ի.Ի.Մաշյանինովը<sup>6</sup>, որի աշխատանքներում ի մի բերվեցին մինչ այդ հայտնի հուշարձանները, առաջին անգամ հրատարակվեցին Էլենենդորֆի (Գամմակի մոտ) պեղումներից Ե.Ոյտտերի (1899-1901թթ.) ու Յ.Գումմելի (1930-1931թթ.) հայտնաբերած չորս առարկաների (նկ. 3) և Խոջալույի դամբարաններից մեկի երկու քարերի նշանները (նկ. 4): Երկու հնավայրի նյութերն էլ, ըստ Ի.Ի.Մաշյանինովի հնագիտական վերլուծության, թվագրվում են Բ.ա. I հազարամյակի սկզբով:

1940-ական թվականներից սկսած հրատարակվեցին մի շարք արձանագրություններ Ջավախքից<sup>7</sup>: Վերջիններս վկայված են ոչ միայն առանձին իրերի վրա (նկ. 5), այլև դամբարանների սրտերին (նկ.6) և թվագրվում են Բ.ա. III հազարամյակով: Նույն ժամանակաշրջանով են թվագրվում Ուրմիտ (ճի տվագանից հայտնաբերված խեցեղեն նշանակիտ անոթները (նկ.7), որոնք հայտնի դարձան 1966թ.<sup>8</sup>:

Մեծամորի ժայռագիր 27 արձանագրությունները, որոնց մասին մասնույն տեղեկություններ էին հայտնվել դեռևս 1913թ.<sup>9</sup>, ամբողջությամբ հրատարակվեցին միայն 60 տարի անց<sup>10</sup>: Ըստ որում, ժայռագիր արձանագրություններից քաջի (նկ.8), հրատարակվեց Բ.ա. II-I հզարամյակների սահմանազիջում թվագրվող մշակութային շերտից հայտնաբերված կավե նշանագրված մի տախտակ<sup>11</sup> (նկ.9): Ժայռագիր նշանների վերաբերյալ Կ.Հ.Մկրտչյանը մասնավորապես նշում է. «... հատկանշական է նրանց զգալի մասի նմանությունը, և շուրջ 17 նշանի մույտությունը հայկական միջնադարյան ձեռագրերում պահպանվող նշանագրերի և Վանի քաղաքության շրջանում սեպագրի հետ զուգահեռ օգտագործված նշանագրերի հետ: Այս առումով Մեծամորի ժայռագրերը կարող են հստակ ուսումնասիրության նյութ դառնալ<sup>12</sup>: Ցավոք, հիրավի մեծ կարևորություն ունեցող այս հուշարձանները ցայսօր չեն դարձել հանգամանալի ուսումնասիրության առարկա<sup>13</sup>:

Խնդրո առարկա արձանագրությունների հավաքման վերջին փորձը (որքան մեզ հայտնի է) կատարվել է Հ.Ա. Մարտիրոսյանի կողմից՝ «Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակն-

րը» (Ե., 1973.) գրքում: Հեղինակն ի մի էր քերել Ջավախքի, Ուրմիտ լճի ավազանի, Յուլակերտի և Արմավիրի վերահիշյալ արձանագրությունները, որոնցից վերջին երկուսը թվագրել է Ք.ա. II հազ. վերջով և I-ի սկզբով<sup>14</sup>: Եշված արձանագրությունները ժայռապատկերների հետ միասին Հ.Ա.Մարտիրոսյանը միավորում է որպես մեկ ընդհանուր՝ «հայտնադարյան նշանագրեր» անունը կրող խումբ, ինչը քննադատելի է, քանի որ, ինչպես նշվեց, ժայռապատկերները նախագրային փուլի հուշարձաններն են, իսկ վերահիշյալ արձանագրությունները վերաքերում են զարգացած գրային ժամանակաշրջանի:

Չնայած այն բանին, որ վերջին տասնամյակներում հայտնաբերված նյութերը կարող էին մոտ լույս սփռել քննարկվող արձանագրությունների հետազոտման հիմնախնդրի վրա, Հ.Ա.Մարտիրոսյանից հետո դրանց հավաստման ու համակարգված ուսումնասիրության փորձ չի կատարվել: Խոսքը, մասնավորապես, Ապարանի ջրամբարի ափին, Քուչակ գյուղի մոտ գտնվող, Ք.ա. XVIII-XIV դդ. թվագրվող հուշարձանի մասին է, որի 1986-87թթ. պեղումներից գտնվեցին շուրջ հինգ տասնյակ արձանագրված քարեր (նկ. 10), որոնցից մի մասի վրա նշաններ էին արված երկու կամ երեք կողմից (ընդհանուր առմամբ՝ շուրջ 80 երես գրություն)<sup>15</sup>: Առաջին իսկ հայացքից ակնառու է Քուչակի արձանագրությունների կապը Խոջալուի և Ջավախքի դամբարանքարերի հետ, ընդ որում, վերջիններն ունեն ավելի արխայիկ քնույր: Քուչակի նշանները նկատելի ընդհանրություն ունեն նաև Եղեմնեղոսի, Յուլակերտի, Արմավիրի, Ուրմիտ լճի ավազանի և Մեծամորի վերահիշյալ հուշարձանների նշանների հետ: Դրանցից մի քանիսի հետ տիպաբանորեն կապվում է նաև Ք.ա. II-I հազարամյակների սահմանով թվագրվող Այգեշատի հնավայրից գտնված կավամաններից մեկի հատակին արված արձանագրությունը (նկ. 11), որը պեղվել է 1990թ. Լ.Ն.Քիչազովի և Հ.Գ.Ավետիսյանի կողմից, մեզ արամաղել է Հ.Գ.Ավետիսյանը:

Թվարկվածներով չի սահմանափակվում Ք.ա. III և I հազարամյակներով թվագրվող «ստեղծվածային» նշաններ կրող հուշարձանների ցանկը: Առաջիկայում մտադիր ենք ի մի քերելու և առամծին ուսումնասիրության առարկա դարձնելու մինչ օրս հայտնի բոլոր արձանագրությունները, որոնց թիվը (մեր ունեցած տվյալներով) շուրջ 300 է (այդ թվում հաշվի չեն առնված Հայաստանի վաղ բրոնզեդարյան խեցեղեն նշանակիր անոթները, որոնց նշանները գիտնականների մի մասը հակված է համարելու զարդանախշեր, մյուսները՝ ոճավորված պատկերագրեր): Այստեղ նշենք, որ կենցաղային իրերից և դամբարանքարերից բացի, քննարկվող հուշարձանախմբում հանդիպում են նաև այլ քնույրի գրակիր առարկաներ, մասնավորապես, քարակոթողներ, որոնց երասպարակումը ևս բողոմ է ենք առաջիկայում նախատեսված աշխատանքին:

Վերջ հիշատակված նշանագիր հուշարձանների միջև, ինչպես նշվեց, առաջին հայացքից կան նկատելի ընդհանրություններ: Սակայն որպեսզի այդ

տպավորությունը քվազյալ շինի, հետևելով մտացված գրերի ուսումնասիրման համաշխարհային փորձից բխող մեթոդիկային, կատարեցինք այս հուշարձանների հետազոտման ուղղությամբ առաջին ամիսամիջյալ քայլերը: Եւս, ըստ հուշարձանների, կազմեցինք նշանացանկեր և համեմատեցինք դրանք: Համադրության արդյունքները (աղ. 1) հաստատեցին մեր ունեցած առաջին տպավորությունը՝ ցույց տալով, որ այդ հուշարձաններին փորագրված են միևնույն համակարգի նշանագրերը: Այսինքն՝ մենք գործ ունենք նշանային մի համակարգի հետ, որը կիրառվել է Ք.ա. III հազարամյակից սկսած մինչև Ք.ա I-ի սկիզբը: Այս համակարգի նշանների քննթաղակալան առանձնահատկությունն այն է, որ դրանք ոչ թե նկար-պատկերագրեր են, այլ վերջիններիս պարզեցված և զարգացում ապրած տարրերակները՝ գծային գրանշաններ, ինչն էլ հիմք տվեց մեզ համակարգը կոչելու Հայաստանի գծային գիր: Գրերի զարգացման պատմությունից հայտնի օրինակալությունները ցույց են տալիս, որ պատկերագրերը նկարային քնույթը կորցնում և գծային նշանների են վերածվում դարերի, երբեմն հազարամյակների զարգացման ու պարզեցման ընթացքում: Եզիպտական հիերոգլիֆներն, օրինակ, պատկերային տեսքով կիրառվում էին Ք.ա. XXXII դարից ի վեր (արագագիրը՝ Ք.ա. XXX դարից), իսկ դրանց պարզեցված, գծային ձևերը՝ «լեռնաքական գիրը» գործածության մեջ մտավ միայն Ք.ա. VIII դարում<sup>16</sup>: Ուստի միանգամայն իրավացի են այն հեղինակները, որոնք Հայկական լեռնաշխարհում գրի (զարգացման գրության) ծնունդը քվազում են Ք.ա. V հազարամյակով (մի եզրահանգում, որը հիմնավորվում է նաև ժայռապատկերների և այլ հնագիտական իրերի ուսումնասիրությամբ):

Հայաստանի գծային գրի ուսումնասիրության նախնական այս փուլում որոշակիորեն կարելի է խոսել նաև այս համակարգի քնիկ՝ տեղական ծագման մասին: Վերջինս ակնհայտ է դեռևս Ք.ա. VIII-VII հազարամյակներից ծագող ժայռապատկերների և գծային նշանների համադրումից (աղ. 2):

Գծային գրի գործածությունը Հայկական լեռնաշխարհում (ըստ այսօրվա մեր ունեցած տվյալների) դադարում է Վանի քաղաքության (քիսյանական) տիրապետության տարածումով, որի արդյունքում Հայաստանում սեպագրին զուգահեռ կիրառվում են քիսյանական մեհենագրերը: Վերջիններիս մեջ հստակ զանազանվում են երկու խումբ՝ գծային և նկարային: Առաջին խմբի սկզբնաղբյուրն, ըստ երևույթին, Հայաստանի գծային գրերն են, իսկ երկրորդի նկարային քնույթը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է Հայկական լեռնաշխարհի արևմուտքում կիրառված խեթա-լուվիական հիերոգլիֆիկայի ազդեցությամբ<sup>17</sup>: Գծային գրերի և քիսյանական մեհենագրերի համադրումը (աղ. 3) վկայում է այդ երկու համակարգերի կապի մասին, ինչը թույլ է տալիս ժամանակագրական անընդհատության մեջ դիտարկելու նախաերվանդունյանց Հայկաստանի գրավոր մշակույթի զարգացման պատմությունը:

Ամփոփելով մեր համառոտ ակնարկը՝ փորձենք արձանագրել այն եզրա-



հանգումները, որ հնադարից է ամել խնդրի ուսումնասիրության այս մասնական փուլում.

ա) Բ.ա. III հազ. մինչև Բ.ա. I հազ. սկիզբը Հայկական լեռնաշխարհում կիրառվում է որպես մի համակարգ, որի բնիկ տեղական ծագումը կասկածից վեր է.

բ) այդ համակարգը ձևավորվել է դեռևս Բ.ա. V հազարամյակում ծնունդ առած գաղափարագրության հիմքի վրա, որի սլարգեցման շնորհիվ էլ նրա նշաններն ունեն գծային տեսք.

գ) Հայաստանի գծային գրերն իրենց հերթին մասամբ հիմք են դառնում քիայնական մեհենագրության համար:

Ավելորդ չենք համարում նշել, որ քի՝ ժայռապատկերներում առկա գաղափարանշանները, քի՝ գծային գրերի և քի՝ քիայնական մեհենագրերի մասնակներն ու կրկնակները համոզաբար են հայկական միջնադարյան մատյաններում հիշատակվող «մախմեսաց մերոց» նշանագրերի ցանկերում: Դա իր հերթին ցույց է տալիս, որ գրավոր մշակույթը եղել է իր գլուխ միասնության այն խորհրդանշիչը, որն ամկախ կրոնա-դավանական, քաղաքական և այլ հակասություններից, ուղեկցել է մեր ժողովրդին հազարամյակների ընթացքում:

## SUMMARY

From about the III millennium B.C. until early I millennium B.C. in the eastern part of the Armenian Highland a umic Linear script was widely used. The studies of this script show that it originates from the local pictography dated with the V millennium B.C., the most archaic ones - coming from the VIII-VII millenniums B.C. On the other hand, the Linear script had certain impact on the development of the Urartian Hieroglyphic script (IX-VIc.B.C.).

## ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անցյալ դարում և մեր դարի առաջին կեսին քիայնական տնայնակիք արձանագրությունների հայտնագործման և ուսումնասիրության պատմությունը՝ մատենագրության նշմամբ, տես՝ Բ.Ե. Плигоровский, Ванское Царство (Урарту), 1959, էջ 7-26:
2. Ժայռապատկերների ուսումնասիրության պատմությունը մինչև 1970-ական թթ. տես՝ Գ.Հ. Կարախանյան, Պ.Գ.Սախարյան, Սյունիքի ժայռապատկերները, Ե., 1970, էջ 7-10; Հ.Ա.Մարտիրոսյան, Հ.Ռ.Իսախանյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, I, Ե., 1971, էջ 5-6:
- Ա.Ե.Ստեփանյան, Վանի քաղաքության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) մեծնագրությունը, Ե., 1998:
4. Մ.Սմբատյան, Թուրքերի քերզը, «Արարատ», Էջմիածին, 1910, Զ, էջ 574-576:
5. A.A.Kalantar, Inscriptions d'Arménie en caracteres incconnus, "Revue d'Archéologie", Paris, 1929, p. 44-45; Մ.Վ.Тер-Аветисян, Археологическое обследование городища и крепости "Древний Армавир", «Գիտական ժողովածու, նվիրված Հասարակական տնայնակիքի իշխանության հաստատման 70-ամյակին», Ե., 1941, էջ 51-64:
6. И.И. Мещанинов, Закавказские иероглифы, "Сообщения Государственной академии истории материальной культуры (ГИАИМК)", Ленинград, 1932, N.3-4, стр. 51-55; И.И. Мещанинов, Загадочные знаки Причерноморья "Известия ГИАИМК", Ленинград, 1933, вып. 62, стр. 34-65:  
 Б.А. Кувшин, Археологические раскопки в Триалети, I, Тбилиси, 1941. С. 109-110, рис. 116; О.М. Джалалидзе, Археологические раскопки в Триалети в 1959-1962гг., "Советская Археология", Москва, 1964, N.2, стр. 117-120, рис. 17-20; Т.Чубинишвили, К древней истории Южного Кавказа, Тбилиси, 1971, табл. XXVIII և այլն:
8. С.А. Burney, Excavations at Yanik tepe, northwest Iran, §Iraq, vol. XXIII-XXIV, 1961-1962.
9. Մ.Սմբատյան, Արարատի և Արագածի գագաթներին, «Արարատ», Էջմիածին, 1913, Ա, էջ 52-68:
10. Է.Վ.Խամբազյան, Կ.Հ.Սկրտյան, Է.Ս. Պարսամյան, Մեծամոր, Ե., 1973, էջ 149-165, աղ. XXXI - XXXIV:
11. Նույն տեղում, էջ 131, աղ. XXIX:
12. Նույն տեղում, էջ 163 (թածնի հեղինակ՝ Կ.Հ.Սկրտյան):
13. Ժամանակին մեծամորյան նշանների վերծանության մասին մի շարք հրապարակումներով համոզեա եկավ Ա.Այվազյանը՝ դրանք համարելով «հայտնական արձանագրություններ», ինչը սուր քննադատության ենթարկվեց Բ.Պիտրովսկու կողմից (ՊՌՀ, 1971, N.3, էջ 302-303, որ հղվում են մաս Ա.Այվազյանի 1960-ական թթ. հրապարակումները): Վերջինս մատնանշում էր, որ հղանցից շատերն առարական քուֆի գրիչ են, քնպես ինքն էլ նշում է քուֆի արձանագրությունների կողքին «պետրոգլիֆներին» առկայության մասին: Դրանից հետո հարցը հավեր պատշաճի ուսումնասիրության առարկա չդարձավ, փորձ չարվեց առանձնացնելու և իրենց հա-

մատչելի էրում ռուսական մեծագույն գիտնականների և ներառյալից, ինչը մեծ է ապագա ինտելեկտուալ խնդիր:

14. Հ.Ա.Մարտիրոսյան, Հայաստանի մաթեմատիկայի մշակույթը և նրանց ուսուցիչ-տեխնիկական կրթականները, Եր., 1973, էջ 6-8:

15. Ֆ.Մ.Մուրադյան, Ներառյալ մշակույթը Ապարանի շրջանից, Հնագիտական աշխատանքների Հայաստանի մոնոգրաֆիաներում (1986-1987 թթ. պեղումների արդյունքները), Ե., 1992, էջ 103-105, աղ. СIII-СХV:

16. М.А.Короцкая, Ервотекник язык, М., 1961, стр. 7-8, 19-20:

17. Ա.Ե. Մովսիսյան, Ոչվ. աշխ., էջ 51-58:

**ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ**

ա) ՀԱՐԿԱՅԻՆ, ՀԱՄԱԿԱՐԳԸ - Ուրարտական պետությունում գործել են հարկային գերատեսչություններ և գործակալություններ: Դրանք գործել են ինչպես կենտրոնական Ուրարտում, այնպես էլ ծայրագավառներում (մվանված երկրներում):

Հարկային գերատեսչության գլուխ կանգնած էր երկրի արքան: Նա էր որոշում մվանված երկրների վրա մշամակվող հարկի տեսակներն ու չափերը, ինչպես նաև հարկերը գանձելու ժամկետները:

Տեղերում հարկային գործակալությունները ղեկավարել են երկրի բազավորների կողմից մշամակված «փողի մարդը», «հաշվի մարդը», «ցանցսի մարդը», «ավագ հովիվը», «զինեգործը»: Դրանցից «փողի մարդը» և «հաշվի մարդը» հարկային գործերի կազմակերպման ղեկավարներն են եղել, իսկ «ցանցսի մարդը», «ավագ հովիվը» և «զինեգործը» օգնել են նրանց հարկերը գանձելու և սրահետապորելու գործում: Ուշագրավ է, որ Ռուսաստանիի քաղաքում (Վան քաղաքի մոտ) «հաշվի մարդու» ղեկավարության տակ աշխատել են 119 հաշվատիչներ<sup>1</sup>: Հավամարտը հարկային գործակալությունները մնամ քազմանդամ կազմ են ունեցել նաև երկրի մյուս վարչա-տնտեսական կենտրոններում՝ Էրեբունիում, Արգիշթիխինիլիում, Թեյշեբախինիում (Ազա մարզ), Մենուասիխինիլիում (Յուլակերտի շրջան), Արգիշթիումայում (Այաղի մարզ), Սաբրթրիխալադայում, Ուլխում (Բարի կամ Մանգիբուբու մարզ), Թեյշեբա աստծու քաղաքում (Ուդուրի-Էթիումի՝ Սևանի ավազան) և այլն, որոնցում պետության կողմից կառուցվել են հացահատիկի քազմաբիվ ամբարներ վճարվելից հացահատիկի հարկը ամբարելու մպատակով: Դրանցից եննց Թեյշեբախինիում (Կարմիր - բլուր) հիշատակվում է «հաշվի մարդը»<sup>2</sup>, այսինքն՝ այնտեղ գործել է «հաշվի մարդու» գլխավորած հարկային գործակալությունը: Անշուշա, այդ գործակալության մեջ են մտել Թեյշե-

քահանայիցան հիշատակված «վողի մարդը», «ցանքսի մարդը», «սավազ կռիվը», «զինեզործը»<sup>3</sup>, որոնց Ուրարտուի թագավորը դիմել է այնտեղի անասնաբուհության, ցանքատարածությունների, նրանց տնտեսություններում աշխատող մարդկանց՝ ռազմագերի-ստրուկների, պալատում գտնվող աղջկա, աղջիկ փախցնող տղուկ Յասթայի հարցերով:

Ուրարտուում թագնազան են եղել հարկ ձեռք բերելու աղբյուրները: Դրանցից են՝

1. Հարատակ (այդ թվում նվաճված) երկրներից ձեռք բերվող հարկը: Այն եղել է երկու տեսակի՝

ա) միանվագ զանձվող հարկ, որը ռազմատուգանքի նշանակություն է ունեցել<sup>4</sup>:

բ) ամենամյա զանձվող հարկ (սա եղել է իսկական հարկը)<sup>5</sup>:

2. Ոռոգման ջուր տալու պատճառով բնակչությունից ձեռք բերվող հարկը (մեան հարկ է Արգիշթի I-ը ձեռք բերել Ազա մարզի բնակչության 3 կատեգորիաներից՝ շեռլինիից, արթիցանիից և փորունուրայից)<sup>6</sup>:

3. Մշտական գործի զինվորներից և համայնականներից զանձվող հարկը (մեան հարկի մասին տեղեկություն է պահպանել Սարգուրի II-ը իր տարեգրությունում):

4. Սեփական մարզերի բնակչությունից զանձվող հարկը (մեան հարկի մասին է պատմում Սարգուն II-ը Ուրարտուի կենտրոնական Ուիշդիշ, Սուրի, Բարի կամ Սանգիբուրու, Արմաթիլի, Այադի, Ուայայիս մարզերի հետ կապված)<sup>7</sup>:

Ուրարտական պետության կազմից զանձվում են զանազան տեսակի հարկեր: Այդ տեսակներից են՝

5. Մուտաղներ՝ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, բրոնզ, որ ձեռք են բերվել մետաղամշակությամբ զբաղվող երկրներից (Մելիտու (Մալաթիա), Կումախա (Կոմմագենն), Դայաննի-Դիաուխի)<sup>8</sup>:

6. Անասուններ՝ խաշոր եղջերավոր անասուններ, մանր եղջերավոր անասուններ, ձիեր, ջորիներ, ուղտեր և այլն (այդ մասին տեղեկություններ են պահպանված Սարգուրի II-ի տարեգրությունում և Ուրարտական մյուս թագավորների տեքստերում)<sup>9</sup>:

7. Մենդամբերը՝ հացահատիկ, գինի, յուղ (այդ մասին տեղեկություններ են պահպանված Սարգուրի II-ի տարեգրություններում)<sup>10</sup>:

8. Զենքեր՝ մարտակառքեր, մարտական զենքեր, նետի սլաքներ, միզակներ (այդ մասին տեղեկություններ են պահպանված Սարգուրի II-ի տարեգրությունում)<sup>11</sup>:

9. Հագուստի տեսակներ (մեան հարկ է վերցվել Կումախա կամ Կոմմագենն երկրից)<sup>12</sup>:

10. Տնայնագործական կահկարասի՝ զավաթներ (մեան հարկ է զանձվել Կումախա կամ Կոմմագենն երկրից)<sup>13</sup> և այլն:

Հարկային գործակալությունները, քաջի հարկից, տնօրինել են մաև պե-

տության կողմից ձեռք բերված այլ նկամումները: Դրանց թվին են պատկանում՝

11. Նվաճված երկրներից ձեռք բերված կոտորածը,

12. Պետական հողատարածություններից ստացված նկամումները,

13. Պետական ամասնապահությունից ստացված նկամումները,

14. Պետական արհեստանոցներից (խոսքը գինեգործական, զարդագործական, բուխակության, բյուտագործական, մետաղե իրերի (զավաթների) պատրաստման, գինեգործական, զարեջրի մշակման, կաշեգործական արհեստանոցների մասին է) ստացված նկամումները:

Հարկային գործակալությունները զբաղվում էին մաև արտաքին առևտրի հարցերով: Ուրարտական պետության արտադրանքի որոշ տեսակներ, հատկապես խաղողից ստացված առատ գինին վաճառքի է դրաք բերվել արտաքին շուկա որպես ասորացի և վաճառվել, փոխանակվել է այլ ասորացիներով (այդ մասին տեղեկություններ ենք քաղում Խալդի աստծու տաճարի գույքի մասին Սարգոն II-ի 8-րդ տարվա արշավանքին վերաբերվող տեքստից, որտեղ հիշատակվում է, թե այդ տաճարում գտնվել են քազմաթիվ տեսակի օտար ծագում ունեցող իրեր, առարկաներ<sup>15</sup>):

բ) ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳՎ - Ուրարտական պետությունում, որը ունեցել է ռազմա-տնտեսական քնույթ, գոյություն են ունեցել սեփականության երեք ձևեր՝

1. պետական, 2. մասնավոր, 3. տաճարային: Ուրարտական իրավունքը, իրավական նորմերը կազմված են եղել ծառայելու իրենց ռազմա-տնտեսական պետությանը, նրա սեփականության այդ երեք ձևերին:

Ուրարտուում իրավական նորմերի, օրենքների ժողովածու կամ կոդեքս չի եղել: Դրան փոխարինել են քազավորական արձանագրություններն ու տարեգրությունները: Եթե քազավորական արձանագրություններից ամեն մեկը իրենից ներկայացրել է արքայական մի հրամանագիր, ապա տարեգրությունները՝ քազմաթիվ հրամանագրերի ժողովածու կամ կոդեքս:

Ըստ իրենց քնույթի, ուրարտական արձանագրությունները քաժանվել են երեք խմբի՝ 1. շինարարական կամ տնտեսական, 2. ռազմական, 3. կրոնական: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ առանձին խումբ են կազմել նաև սոցիալական քնույթի արձանագրությունները: Արձանագրությունների այդ չորս տեսակներից ամեն մեկը ներկայացրել է իր քնույթին համապատասխան իրավական նորմեր:

ա) Շինարարական կամ տնտեսական քնույթի արձանագրություններում ներկայացվել են՝

1. ուրարտական քազավորների և պետական ռոզման ցանցից օգտվող համայնականների հարաբերությունների իրավական նորմերը<sup>16</sup>,

2. պետական պաշտոնյաներին մասնավոր հողակտոր (այգի) տալու և այդ կապակցությամբ նրանց իրավունքի պաշտպանության վերաբերյալ իրավական նորմերը<sup>17</sup>:

բ) Ուսումնական բնույթի արձանագրություններում ներկայացվել են՝

3. նվաճումների ընթացքում զինվորական վերնախավի համար մախատեակաժ մասնավոր կադրայտու և մասնավոր ռազմագերիների ձեռք բերելու իրավական նորմերը<sup>14</sup>,

4. ուրարտական թագավորների և նվաճված երկրների թագավորների կամ կատավարիչների փոխհարաբերությունների իրավական նորմերը՝ կառաված բռնագրավված տարածքների ու նրանց բնակչության, Ուրարտուլին հարկ վճարելու, Ուրարտուլի գերիշխանությունը ճանաչելու և այլ հարցերի հետ<sup>15</sup>,

5. ուրարտական մշտական քանակաժ ծառայող զինվորներին հարկի տակ դնելու իրավական նորմերը<sup>16</sup>;

զ) Կրոնական բնույթի արձանագրություններում ներկայացվել են՝

6. տաճարներին առևտրի իրավունք տալու իրավական նորմերը<sup>17</sup>,

7. աստվածներին զոհեր մատուցելու կարգի մասին իրավական նորմերը<sup>18</sup>,

դ) Սոցիալական բնույթի արձանագրություններում ներկայացվել են այնպիսի իրավական նորմեր, որոնք վերաբերվել են՝ փախչող ստրուկներին իրենց տերերին վերադարձնելուն, պաշտոնում ծառայող խոհարարի (հացբուխի) աղքատ ամուսնությանը, ստրուկ թաքային և նրա կողմից առևանգված աղքատ, ծերության պատճառով պալատի աշխատանքից ազատված մարդկանց և նրանց ընտանիքի անդամներին հաց տրամադրելուն, համայնականներից զանձվող հարկին և այլն զիջելուն<sup>19</sup>;

Ուրարտում գործելու են իրավապահ մարմինները: Դրանք նպատակ են ունեցել նախ և առաջ պաշտպանելու գործող իրավական նորմերը: Իսկ եթե խախտվել են այդ նորմերը, ապա իրավապահ մարմինները ձգտել են վերականգնել դրանք:

Իրավապահ մարմինների գլխի կանգնած էր երկրի թագավորը: Երկրի իրավական նորմերը նա հաստատում էր իր արքայական արձանագրությունների կամ հրամանագրերի միջոցով: Արքայական այդ արձանագրություններով կամ հրամանագրերով նա սահմանում էր նաև պատիժ (սանկցիա) և պատժի չափեր իրավական նորմերի խախտողների կամ հանցագործների նկատմամբ:

Տեղերում իրավապահ մարմինները ղեկավարել են երկրի թագավորի կողմից նշանակված «կնիք բռնողը», «սպառտի մարդը (պալատի ամձակազմի պետը)», «զեղչակարգը», «զինեզործը», «ալագ հովիվը»:

Իրավական նորմերի խախտումները եղել են երկու տիպի: Դրանցից մեկը վերաբերվել է բնակչության առօրեական, կենցաղային փոխհարաբերություններին, իսկ մյուսը՝ պետությանը:

ա) Բնակչության առօրեական, կենցաղային փոխհարաբերություններին վերաբերվող իրավական նորմերի խախտումները եղել են թագնազան: Այս բնույթի իրավական նորմերի խախտումներին զեժ պետությունը պատժի (սանկցիայի) որևէ չափ չի նախատեսել: Նա իրավաբարվել է միայն նրանով,

որ բույլ տված իրավական նորմերի խախտումները ուղղվեն և նախկին հարաբերությունները վերականգնվեն: Այսպես, օրինակ՝

1. Թագավոր Սարգսի III-ը հրաման է գրել, որով պահանջել է Ազա մարզում գտնվող Կուրդու բնակավայրի զինվորքը Շանեորդուց, որ նա այդ բնակավայրի հողատերեր Խուրային և Կուրթուրիլին վերադարձնի նրանց մոտից փախած երկու ստրուկներին,<sup>24</sup>

2. Թագավոր Ռուսա II-ը հրաման է գրել, որով պահանջել է Ազա մարզի «ավագ հովվից», որպեսզի նա նա վերադարձնի ստրուկ Թաթայի կողմից առևանգված այն աղջկան, որը պատկանում էր այդ անասնապահական տնտեսության տիրուհուն<sup>25</sup>:

3. Ոմն քաղաքի (Նրա անունը չի պահպանվել) հրաման է գրել, որով պահանջել է, «Ռուսայի փոքր քաղաքի» «կնիք բռնող» Իշպիլիակուից, որպեսզի նա այդ քաղաքի «սպառախ անձնակազմի պետ» Լուսաշուծիին վերադարձնի նրա այգին, որ խլել էր դատական գործով նրա հակառակորդ Ադիաբդին<sup>26</sup>:

Ակներև է, որ բոլոր այս երեք հրամանագրերում պատիժ (սանկցիա) չի նախատեսվել իրավական նորմեր խախտողների նկատմամբ:

բ) Իրավական նորմերի այնպիսի խախտումները, որոնք առնչվել են պետության հետ և կրել են հակապետական բնույթ, մույնպես եղել են քաղաքական: Այդպիսի խախտումներից են՝

1. Թագավորական արձանագրությունների կամ հրամանագրերի կոթողների նկատմամբ սեփական երկրի բնակիչների ռազմագոյությունները (դրանց քարոզելը, հարկչությանը, հողի մեջ քաղելը, ջրի մեջ զցնելը, արևից ծածկելը, տեղափոխելը, մեկ ուրիշին ստիպելը կատարել այդ գործերը, այդ մասին լսողը և միջոց ձեռք չառնողը, այդ կոթողի կատուցումը և նրանում հիշատակված գործողությունները իրեն վերագրողը)<sup>27</sup>,

2. Նվաճված երկրների քաղաքների կողմից ուրարտական աքքայական արձանագրությունների կամ հրամանագրերի պահանջների անտեսումը, այդ պահանջներին հակադրվելը (նրանց դեմ ասպատամբելը, պետական հարկից ու տուրքից հրաժարվելը)<sup>28</sup>,

3. ուրարտական քաղաքների դեմ սեփական երկրի զորահրամանատարների, մարզերի կառավարիչների ասպատամբությունները<sup>29</sup>,

4. պետական ու տաճարային ունեցվածքի հարկչությանը<sup>30</sup>:

Նման բնույթի իրավական նորմերի խախտումները դիտվել են որպես հանցանք և դրանց դեմ ուրարտական պետության կողմից նախատեսվել է պատիժ (սանկցիա): Այդ հանցանքների կատարվելու դեպքում երկրի քաղաքը պատիժ չափեր է նախատեսել իր աքքայական արձանագրություններում կամ հրամանագրերում, շատ դեպքերում ամբողջով նրանց վերջնամասերում: Որոշ հետազոտողներ վերջիններին անվանել են որպես «անեծք» կամ «անեծքի քանաձև»: Իրականում դրանք ոչ թե «անեծք» են, որոնք մայրուսնահավատությանից ծագող անձնական գայրույթի և զգացմունքների վայր-



կենսական պտոթկումն են, այլ պետական օրենքի ուժ ստացած շահեր՝ սահմանված երկրի քաղաքների կողմից: Ուրարտուում կիրառվել է պատժի աճման արարձր շահից՝ մահապատիժը: Մահապատիժ է մախատեսվել՝

5. Ինչպես արքայական արձանագրությունները կամ երամանագրերը փյացնողների, այնպես էլ նրանց ընտանիքի անդամների նկատմամբ<sup>31</sup>,

6. Ինչպես երկրի քաղաքների դեմ ապստամբած զորահրամանատարների, մարզերի պետերի, այնպես էլ նրանց կողմնակիցների նկատմամբ<sup>32</sup>,

7. Ինչպես պետական ու տաճարային ունեցվածքի հասիչուակողների, այնպես էլ նրանց ընտանիքի նկատմամբ<sup>33</sup>:

Ուրարտուում պատժի տարբեր ձևեր են կիրառվել մախօրոք մվաճված, իսկ հետո Ուրարտուի դեմ ապստամբած երկրների քաղաքների և նրանց բնակչության նկատմամբ: Ընդ որում, մախօրոք մվաճված, քայց հետո Ուրարտուի դեմ ապստամբած երկրների քաղաքների նկատմամբ կիրառել են պատժի հետևյալ ձևերը՝

1. Ուրարտուի քաղաքների առգլ ծունկի գալը, նրա ուղքերն համբուրելը,<sup>34</sup>
2. Ուրարտուի քաղաքներին հարկ ու տուրք վճարելը,<sup>35</sup>
3. Ուրարտուի քաղաքների կողմից ստրկացվելը,<sup>36</sup>
4. Նրա կողմից ներքինացվելը,<sup>37</sup>
5. Երկրից վտարվելը:<sup>38</sup>

Նախօրոք մվաճված, քայց հետո Ուրարտուի դեմ ապստամբած ժողովրդի նկատմամբ կիրառվել են պատժի հետևյալ ձևերը՝

6. նրանց ունեցվածքի կողոպուտը,<sup>39</sup>
7. նրանց զերեվարումը՝ մի մասին սպասել, իսկ մյուսին՝ ստրկությանը<sup>40</sup>,
8. զանգվածային տեղահանումը,<sup>41</sup>
9. նրանց ամյացների, քաղաքների և այլ բնակավայրերի երկիզումը, ավերումը,<sup>42</sup>
10. նրանց երկրի վերածումը ուրարտական մարզի,<sup>43</sup>
11. այդ երկրի վրա ավանդական քաղաքների կամ կառավարչի փոխարին ուրարտական մարզի պետի նշանակումը<sup>44</sup>:

## SUMMARY

The Urartian state has a wide net of tax-collecting organization led by the king. The cuneiform Urartian texts refer to several important officers who were busy with taxes - "the man of money", "the man of account", "senior herdsman", etc. Taxes were of different types - metals, livestock, agricultural products, armour and weapons, cloths.

Since the Urartian state does not have written laws, all juridical decisions were conducted by the king himself, through his orders and inscriptions. In the provinces the juridical power of the king was conducting by his officials - "man of the seal", "man of the palace", etc.

## ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. УКН, № 280, стк. 12.
2. УКН, № 457, ливц. стор., стк. 5.
3. УКН, № № 457 (2), 460 (2), 456 (4), 455 (4).
4. УКН, № 128, ВІ, стк. 19-22.
5. УКН, № 128, ВІ, стк. 22-25.
6. УКН, № 142.
7. УКН, № 155, С; Գ. Ն. Սարգսյան, Ուրարտական համայնականների և զինվորականների խավերի փոխհարաբերությունները, նրանցից զանձվող հարկի տեսակները (ԼՂարիբ Հասարակական Գիտությունների, 1998, 3), էջ 172-177:
8. АВНИУ, № 49 (156-297).
9. УКН, № № 128, ВІ (19-25), 155, Е (36-57), 158 (21-26).
10. УКН, № 155, С; Գ. Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 172-177:
11. УКН, № 155, С; Գ. Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 172-177:
12. ձևժ, դ 155, С; Գ. Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 172-177:
13. УКН, № 155, Е (36-37).
14. УКН, № 155, Е (36-57).
15. АВНИУ, № 49 (352-607).
16. УКН, № 142.
17. Գ. Ն. Սարգսյան, Ուրարտուի առջիպ-տնտեսական հարաբերությունները՝ կազմված «Ռոտայի փոքր քաղաքի» և նրա շրջակայքի բնակավայրերի հետ (ԼՀԳ, 1998, 1), էջ 172-173:
18. УКН, № 155, С (34-48).
19. УКН, № 158, և др.
20. УКН, № 155, С; Գ. Ն. Սարգսյան, ԼՀԳ, 1998, 3, էջ 172-177:
21. УКН, № 19, урарт. текст, стк. 1-26: ассир. текст, стк. 1-22.

22. УКН, № 27.
23. УКН, № № 455-457, 460, 155, С и др. Ғ. Ы. Ушарқушев, ЛҚ, 1998, 1, бр 175-176; *Amudarya* ЛҚ, 1998, 3, бр 172-177:
24. УКН, № 455.
25. УКН, № 456.
26. Ғ. Ы. Ушарқушев, ЛҚ, 1998, 1, бр 172-173:
27. УКН, № 43, стк. 7-14 и др.
28. УКН, № 36, стк. 29-36 и др.
29. АВНИУ, № 50 (13).
30. УКН, № 19, урарт. текст, стк. 26-41, ассир. текст, стк. 33-42.
31. УКН, №20, об. стор., стк. 21-33.
32. АВНИУ, № 50 (13).
33. УКН, № 19, урарт. текст, стк. 26-41, ассир. текст, стк. 33-42.
34. УКН, № 158, стк.21-24.
35. УКН, № 128, VI, стк. 19-25.
36. УКН, № 128, VI, стк. 17-18.
37. УКН, № 128, VI, стк. 48-49.
38. УКН, №265, стк. 2-3.
39. УКН, № 128, VI, стк. 13-14.
40. УКН, № 127, I, стк. 13-14.
41. УКН, № № 127, III, стк. 34-45; 160.
42. УКН, № 128, VI, стк. 6-7.
43. УКН, № 265, стк. 2-6.
44. УКН, № 265, стк. 4.

**ՍԱՐԳՈՆ II-Ը ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ  
ՓՈՔԻ ԱՍԻԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԸ**

Արևելյան Փոքր Ասիայում Ասորեստանի արքա Սարգոն II-ի (մ.թ.ա. 721-705թթ.) վարած ակտիվ արտաքին քաղաքականությանը մեծ թվով ուսումնասիրողներ են ամողբարձել<sup>1</sup>: Հանգամանորեն հետազոտվել են Թարալի մանր պետությունների և Մելիտի հետ Ասորեստանի ունեցած ռազմաքաղաքական փոխհարաբերությունները, հրատարակվել են խնդիրը լուսարանող ասորեստանյան սեպագիր աղբյուրները: Մասնագետները համոզել են այն եզրակացության, որ Սարգոն II-ին մ.թ.ա. 713-712թթ. հաջողվեց իր գեղիչ-խամոթյունը հաստատել տարածաշրջանի բոլոր երկրների նկատմամբ: Սակայն, միաժամանակ, մշվել է, որ այստեղ Ասորեստանի հաջողությունները դժվար է դիտել որպես վերջնական հաղթանակ, հատկապես քիչ ավելի ուշ շրջանի իրադարձությունների լույսի տակ: Ասորեստանի տիրապետությունը Թարալում և Մելիտում տևեց ընդամենը յոթ-ութ տարի, ավարտվելով մ.թ.ա. 705թ.<sup>2</sup> այստեղ Սարգոնի կրած պարտությունով, որտեղ վերջինս զոհվեց «Կուլումմանցի Գուրդիի» դեմ մղած ճակատամարտում<sup>3</sup>:

Սարգոնի փոքրասիական քաղաքականությանն առնչվող աղբյուրների ուսումնասիրությունը պարզորոշ ցույց է տալիս, որ Արևելյան Փոքր Ասիայում մ.թ.ա. 713-712թթ. հետո Ասորեստանի տիրապետության մասին համընդհանուր ընդունելություն գտած կարծիքը որոշակիորեն չափազանցված է: Լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ մ.թ.ա. 713թ. թարալյան Բիթ-Բուրուտաչ պետության արքա Ամբարիսի և մ.թ.ա. 712թ. Մելիտի արքա Թարխումազիի գերվելուց և Ասորեստան տարվելուց մեկ-երկու տարի անց այստեղ Ասորեստանի դիրքերը սկսում են զգալիորեն սասանվել, որի պատճառը թարալյան երկրներից մեկի՝ Ատումայի հզորացումն էր: Ավելին, ամենայն հավանականությամբ, մ.թ.ա. 705թ. Սարգոն II-ի թարալյան հակառակորդը հենց Ատուման էր, այլ ոչ ենթադրյալ կիսմերական ցեղերը<sup>4</sup>: Մեր կողմից ձևակերպված այս վարկածի համաձայն, մ.թ.ա. 713/12-705թթ. ընթացքում Ատուման զգա-

լյութին ընդարձակվել էր արդեն սեփական պետականությունից զրկված և Ասորեստանի անմիջական հսկողության տակ գտնվող հարևան Բիթ-Քուրուտաշի հաշվին: Ի վիճակի չլինելով սեփական միջոցներով վերականգնել կորցրած ազդեցությունը, Սարգոն II-ը ապավինում էր Մուշկի-Փոյուզիայի աջակցությանը, որն այս պահին եակված էր Ասորեստանի հետ հարաբերությունների նորմալացման: Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ Ասորեստանի տիրապետությունը Արևելյան Փոքր Ասիայում կարճատև էր և մ.թ.ա. 705թ. հետո զրեթե վերացավ. ասորեստանցիները կարողացան պահպանել միայն Դաշտային Կիլիկիան (ասորեստանյան աղբյուրներում Կոն):

Առաջարկվող հողվածում վերժ կարլի պարզաբանել Սարգոնի փոքրասիական քաղաքականության ողոշ կարևոր խնդիրներ, որոնց լույսի տակ զգալիորեն կխորանան ռազմաօսկրվող տարածաշրջանի պատմության վերաբերյալ պատկերացումները:

Դեպի Ուրարտու մ.թ.ա. 714թ. Սարգոն II-ի ձեռնարկված ավերել աղբյուրվանքը<sup>4</sup> շրջադարձային եղավ Ասորեստանի փոքրասիական քաղաքականության մեջ: Փաստորեն, մինչև Ուրարտուի օրհնախումբը, Ասորեստանն ի վիճակի չէր ազատորեն զործելու Տավրոսից հյուսիս ընկած և թիզլաբալախասար III-ի կողմից հպատակեցված երկրներում, այդ թվում Մելիտում: Արևելքից Ուրարտուն, արևմուտքից Մուշկի-Փոյուզիան զգալի ազդեցություն էին ձեռք բերել այս տարածաշրջանում: Դատելով Սարգոն II-ի տեղադրեց, Մելիտը և Թարալի երկրները դաշնակցային հարաբերությունների մեջ էին մտել Ուրարտուի և Մուշկիի հետ<sup>5</sup>: Այստեղ Սարգոնի ձեռնարկված պատժիչ միջոցառումը (Եինուխոտի պետության վերացումը)<sup>6</sup> ցանկալի արդյունքի չհանգեցրեց: Մասնավորապես, հայտնի է այս շրջանում Ասորեստանից կախյալ Կոնի արքա Ուրիկկիի՝ Ուրարտու առաքած դեսպանությունը<sup>7</sup>, Ատունայի արքա Կուրտիսի և Բիթ-Քուրուտաշի արքա՝ Սարգոնի դրածու Ամբարիսի հակասորեստանյան զործունեությունը<sup>8</sup>: Ժամանակավորապես չեզոքացնելով ռարաթական սպառնալիքը, Սարգոն II-ը դիմեց կտրուկ մեջոցառումների: Նույն մ.թ.ա. 713թ. ձեռքակալվեցին և Ասորեստան տարվեցին Ամբարիսը և Մելիտի արքա Գունգինանին<sup>9</sup>: Եվ եթե Մելիտում նշանակվեց նոր արքա՝ Թարխունազին, ապա Ամբարիսի երկիրը հայտնվեց Կոնի ասորեստանյան կառավարչի հսկողության տակ<sup>10</sup>: Սակայն այս միջոցառումները չփոխեցին տարածաշրջանում ծավալվող իրադարձությունների ընթացքը: Ժամանակավորապես իր հակասորեստանյան զործունեությունը դադարեցրած Ատունայի արքա Կուրտիսը վերսկսում է տարածքային զավթումները ի հաշիվ Ասորեստանին ենթակա Բիթ-Քուրուտաշի: Այդ մասին եփշտակվում է Սարգոնի՝ Կոնի իր կառավարչին զրկած, սակայն չառաքված նամակում<sup>11</sup>: Որ այս հաղորդումը համապատասխանում էր իրականությանը, կարելի է համոզվել ժամանակակից էրջիլաս լեռան (անտիկ աղբյուրների Արզնու) լանջերին Կուրտիսի անունը պայտնակվող երեք

հինքոզիմային լուսիակամ արձանագրությունների<sup>12</sup> հայտնաբերման փաստի հիման վրա: Ահա այս պահից իրադարձությունների ընթացքը դժվար է քաջահայտվում:

Հայտնի է, որ մ.թ.ա. 712թ. դեպի Մելիտ կազմակերպված արշավանքի ընթացքում վերջինիս արքա Թարխտնագին ամրացել էր Թիզգարիմու քաղաքում. նշանակում է, որ այս քաղաքը գտնվել է Մելիտի արքային ենթակա տարածքում<sup>13</sup>: Թարխտնագիին գահագրկելուց հետո Մարգոնը Մելիտի համանուն մայրաքաղաքը հանձնել էր Տավրոսից հարավ գտնվող մեկ այլ լուսիակամ պետության՝ Կոմմախին (անտիկ աղբյուրների Կոմմագենն)<sup>14</sup>: Այս գործողության նպատակը, թերև, հետևյալն էր: Ապագայում Մելիտի անհնազանդությունը կամխելու նպատակով Մարգոնը այն մասնատեց երկու մասի. հիմնականը՝ Մելիտ մայրաքաղաքով հանձնվեց իրեն լոյալ Կոմմախին, մյուս մասում, հավանաբար, սցիտի տեղադրվեին ասորեստանյան կայսրոներ: Սա, ինքնակե, միայն ենթադրություն է, քանի որ հայտնի չէ Մելիտի՝ Կոմմախին չհանձնված տարածքի ճակատագիրը: Նման քաղ Մարգոնը ձեռնարկել էր դեռ մ.թ.ա. 718թ., երբ պարտված Շինուլատուի մի մասը՝ մայրաքաղաքով հանդերձ հանձնվել էր հարևան Ատուռային<sup>15</sup>: Այսպիսով, Մարգոնը ձգտում էր վերացնել Մելիտի վարչական ամբողջականությունը: Հարկ է նշել, որ այս քաղաքականությունը սպասելի արդյունքներ չտվեց, քանի որ երեք տարի անց՝ մ.թ.ա. 708թ. Կոմմախի արքա Մուտալլուն, ըստ Մարգոնի, դաշինք կնքեց Ուրարտուի արքա Արգիշտի II-ի հետ, որից հետո Ասորեստանի արքան, զբաղվելով Կոմմախի, այն վերածեց մարզի<sup>16</sup>: Թե ինչպես վարվեց Մարգոնը Մելիտի՝ Կոմմախին հանձնված մասի հետ վերջինիս վերացումից հետո, հայտնի չէ:

Մ.թ.ա. 712թ. իրադարձությունները հառուկ քննարկման կարիք ունեն: Բանն այն է, որ, վերացնելով Մելիտի ինքնուրույնությունը, Մարգոնը օսհմանների մոտ ստեղծեց ամբողջությունների շղթա: Այդ մասին ուղղակի տեղեկություններ կան Մելիտի վերջին արքայի գերեմարման մասին պատմող տեքստում: Այստեղ հայտնվում է թվով տաս քաղաքների ամրացման մասին, որոնք պիտի հսկեին Ուրարտուի, Մուշկի-Փոյուզիայի և մեկ այլ քաղաքական միավորի սահմանները: Դրանք էին Լուխտ, Բուրդի, Ամուրու, Կիլակա, Անդուարապիս (Ուրարտուի դիմաց), Ուսի, Ուխան, Ուարգին (Մուշկի դիմաց), Էլլիբի և Շինդարասն (երկրի ամունը տեքստում վնասված է):

Մինչև Մարգոնի վերտիրապ միջոցառումների նպատակը քննարկելը ներկայացնենք մշված քաղաքների (ավելի ճիշտ՝ ամրոցների) տեղադրությունը:

Ուրարտուի դիմաց կառուցված թվով հինգ ամրոցների համար դեռ ժամանակին է. Զոռնը առաջարկել էր հետևյալ տեղադրությունները<sup>17</sup>.

Բուրդի. = Ժամանակակից Պուրտեյրու, Ջիմարայից 7կմ հարավարևմուտք Դիվրիտիից Էրզրում տամոզ ճամապարհի վրա:

Ամուրու. = Կեքան մարտնի դիմաց՝ Երիրատի արևմտյան ափից ոչ հեռու ընկած Նեմերի կոչվող քնակավայրը:

Կի[սկա]. – հոռմ. Կիսկա, հայկ. Ջեյմուկ՝ Մալաթիայից 31 կմ հյուսիս:

Անդուարսալիս. ժամանակակից Բզորցուի դիմաց:

Լուխաուի համար է. Ֆոռերը ոչինչ չի առաքարկում:

Ս. Երեմյանը Բզորցիքը հակված է տեղադրելու բյուզանդական աղբյուրների Amara-ի տեղում (ժամանակ. Էմիրքոյոյ՝ Արզուվանից ոչ հեռու)<sup>12</sup>:

Այսպեսով, ակնհայտ է, որ Ուրարտուի դիմաց ստեղծված ամրությունները գտնվում էին Եփրատի արևմտյան ափերի երկայնքով: Այս համագամանքը ստիպում է ենթադրել, որ մ.թ.ա. 712թ. Սելդիի արևելյան սահմանը կազմում էր Եփրատ գետը, որից արևելք այն միանաձև Սարգոնը համարում էր քչնամական տարածք:

Մուշկիի դիմաց ստեղծված ամրությունների խնդիրը, ի տարբերություն մախորդի, շատ ավելի բարդ է: Է. Ֆոռերը Ոսինն նույնացնում է հոռմ. Chosa-ի հետ՝ ժամանակակից Լեվշենիք քաղաքից 37 կմ հարավ<sup>13</sup>: Ոսիանը համարվում է հոռմ. Osiana-ի հետ՝ Լեվշենիքից 30 կմ հյուսիս-արևմուտք<sup>14</sup>: Ուարզինը պիտի գտնվեր ինչ-որ տեղ Հալիսի ոլորանի ներսում՝ Կեսարիա-Կայսերիից անտիկ աղբյուրների Tavium տանող ճանապարհի վրա<sup>15</sup>:

Վերջին երկու ամրությունները ենթադրաբար գտնվում են Մալաթիայից հյուսիս: Է. Ֆոռերը գտնում էր, որ դրանցից Էլիթիքը պիտի գտնվեր Մալաթիայից Միլաս տանող ճանապարհին՝ Հալբուր-Վիրան կոչվող վայրում, իսկ Եինդարարան ժամանակակից Սինջանն է՝ Դիվրիդիից Ջարս տանող ճանապարհի վրա<sup>16</sup>: Հեղինակը արձանագրության տեքստի վնասված մասում հակված էր վերականգնելու կասկերի երկրի անվանումը: Այս տեղադրությունները չեն վիճարկվում հետազոտողների կողմից, սակայն ինչ վերաբերում է Կասկուի վերականգնմանը, ապա այստեղ ամեն ինչ չէ որ պարզ է: Բանն այն է, որ կասկերի երկրի հիշատակությունը Սարգոն II-ի տեքստերում<sup>17</sup> որևէ հիմք չի տալիս այն դիտելու որպես էական սպառնալիք Ասորեստանի համար: Այնպես որ այս հարցը առայժմ բաց է մնում:

Փորձենք մեկնարկանել փոյուզական սահմանների մոտակայքում կառուցված ամրությունների հարցը:

Վերոհիշյալ երեք ամրոցների տեղադրությունը Թաքալի արևմտյան սահմանների մոտակայքում ինքնին արդեն վկայում է այն մասին, որ տվյալ պահին Ասորեստանը Թաքալը դիտում էր որպես իր անմիջական գերիշխանության տակ գտնվող տարածք: Սելդիի և Բիթ-Բուրտուաչի տեղական արքայատոհմերի վերացումից հետո իսկապես դրա համար հիմքեր կային: Փաստորեն, մ.թ.ա. 712թ. փոքրասիական երկրներից մերթին ինքնուրույնությունը սրահպանել էր միայն Ատունան, որը, սակայն, Բիթ-Բուրտուաչի արքա Ամբարիսի պարտությունից ու գերեվարվելուց հետո ստիպված էր եղել հնազանդություն հայտնել Սարգոնին<sup>18</sup>:

Անկասկած, մ.թ.ա. 713-712թթ. կարելի է համարել Փոքր Ասիայում Ասորեստանի ռազմաքաղաքական հաջողությունների քարձրակետը: Որովհետև քիչ անց իրադարձությունների ընթացքը ակնհայտորեն ի վնաս Աս-

րեստանի էր: Մ.թ.ա.710/09թ. քվազդվող Սարգոն II-ի նամակում ուղղված Կուեի ասորեստանյան կառավարչին<sup>25</sup>, հայտնվում է Ատուռնայի հակասասորեստանյան գործողությունների մասին: Մասնավորապես ասվում է, որ Ատուռնան գրավել էր Բիթ-Բուրտուաշի մի շարք բնակավայրեր: Այս նամակում հաղորդվում է նաև այն մասին, որ Ասորեստանի և Մուշկիի հարաբերությունները բարելավվել են և Սարգոնը հույս ունի վերջինիս օգնությամբ հաշվեհարդար տեսնել քաբալյան երկրների հետ: Նկատի ունենալով վերոհիշյալ նամակի արտակարգ կարևոր նշանակությունը, ներկայացնենք դրանից որոշ հատվածներ.

*«Ինչ վերաբերում է քո գրածին. Մուշկիի Միտայի բանագնացը եկավ ինձ մոտ, քերելով ինձ Կուեի տասնչորս մարդկանց, ում Ուրիկը ուղարկել էր Ուրարտու որպես դեսպաններ, դա շատ լավ է: Իմ աստվածներ Աշուրը, Եամաշը, Բելը և Նարուն հիմա գործել են և ասանց կողմի կամ այլ բանի մուշկը [Տկատի ունի Միտային - Ա.Բ.] տվել է իր խոսքը և դարձել մեր դաշնակիցը» (ND 2759):*

*«Ինչ վերաբերում է քո գրածին. «Ես չպետք է ուղարկեմ իմ բանագնացին մուշկի մոտ ասանց արքայի՝ տիրոջս բույրավայրյան», այժմ ես ասում եմ քեզ, որ դու չպետի կտրես քո բանագնացին մուշկի ներկայությունից: Գրիք նրան քարեկամական խոսքերով և միշտ տեղեկացիր նրա մասին, մինչև ես ժամանակ կունենամ»:*

Այնուհետև խոսվում է Մուշկիի հետ հետագայում բարեխոսակցական հարաբերություններ սրահարանելու մասին, որից հետո հայտնվում է հետևյալը.

*«Ինչ վերաբերում է քո գրածին. Ուրբալան [կարող է հեռանալ] արքայից՝ տիրոջիցս, այն պատճառով, որ աստուճացիները և իշտունդացիները եկել և գրավել են Բիթ-Պարտուաշի քաղաքները,՝ այժմ, երբ մուշկը մեզ հետ խաղաղություն է հաստատել և [...] ինչ կարող են այսուհետև անել Թարալի արքաները: Դու կսեղմես նրանց այդ կողմից, իսկ մուշկը այն կողմից, այնպես որ դու քո գոտին կզցես նրանց վրա»:*

Սարգոնի նամակի շնորհիվ պարզվում է փոքրասիական տարածաշրջանում մ.թ.ա.712թ. ամսիցապես իսթորիոսը ժամանակահատվածում սկսված քաղաքական իրադարձությունների արտեկերը:

